



باكين
مجلة شهرية ، ادبية وفنية علمية
مدير المسؤول
السيد اوتين كارنيك قزاشيان

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

բւգին
ԱՄՍԱԳԻՐ
ԿՐԱՆԻՔԱԳՐԱԴԱՆ
ԵՒ ԱՐԹԻՏԵԱՆ

ՎԱՐՔԻՔ ԽՄԲԱԳԻՐ
Կ. ՍԱՍՈՒՆԻ
ԽՄԲԱԳԻՐ
Պ. ՍԱՊԵԱՆ
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ
ԱՆԳԱՄԵՐ
Յ. ԳԵՂԱՐԴ
Տ. ՈՍԿՈՒՆԻ
Բ. ՓԱՓԱՅԵԱՆ
Ն. ՊԱՐԹԵՒԵԱՆ
Ժ. ՍԹԵՍԻԱՆ
ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԳԱՄԵՐԵՆ
† ԵՒ. ՊՅԱՆԵԱՆ

Խմբագրութեան հասցէ

G. SASSOUNI
Rue Sélim Boustani,
Beyrouth-Liban

Հեռագրային քիւ 296898

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- Յ. ԿԱՐԱՊԵՆՑ
- Հ. ՅՈՎՍԵՓԵԱՆ
- Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ
- Վ. ԳԵՈՐԳԵԱՆ
- Փ. ՀԵՐԱՆԵԱՆ
- Ս. ՍԱՆԻՆԵԱՆ
- Վ. ԹԵՔԵԱՆ
- Ա. ԱՐԾՐՈՒՆԻ
- Գ. ՊԸԼՏԵԱՆ
- Հ. ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ
- Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ
- Հ. ՄԱԹԵՒՈՍԵԱՆ

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒՆԵՍՏԻ

Է. ՅԱՐԻ, ԹԻՒՆ 10

ՀԱՅԵՍՏԱՆԻ 1908

ԳԼԵՐԴԻՐ

ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՑ

ԳՈՆՍՈՒԼ ԱՌԱՔԵԼԸ

Եթէ երբեւէ Ամերիկայի Միացեալ Նահանգների Ջեֆըրսոն քաղաքը այցելելու լինէ՞ք, առաջին հայը, որին հանդիպէ՞ք, ամենայն հաւանականութեամբ Գոնսուլ Առաքելը կը լինի։ Նա՛ր ձեզ կը դիմաւորի մեր մերձ-Ասիան տեսնող աւանդի դնացի հնացած կայարանում, հոնքապաշտի կայանում եւ կամ թէ՛ օդանավայանում՝ դրեթէ վաղըուղու վրայ։ Իսկ եթէ պատահի, որ աննկատ մտնէ՞ք մեր քաղաքը, ապա ձեր ժամանումից հազիւ մի քանի ժամ անց նա մի կերպ դուռն էլ չի բացում իջնանոցի վայրն ու սենեակի համարը։

— Ինչո՞ւ ինձի չտեղեկացուցիք... ասանկ բա՛ն կ'ըլլայ...

— Անտկնկալ եղաւ, այլապէ՞ս...

— Աղէկ, աղէկ, բարի եկաք։

Այդ յստաջրանից յետոյ, Գոնսուլ Առաքելը ատենց ձեր կարծիքը շօշափելու, ձեզ կ'ստնի իր յոգնած ինքնաշարժի մէջ եւ հազար ու մի հարցումների տեղատարափի տակ, մի կերպ, հրաշքով, ձեզ ապահով իր տունը կը հասցնի, որից յետոյ դուք ակոնտառն կը լինէ՞ք հայկական հիւրասիրութեան մի շտեմնուած ծիսակատարութեան։ Շտա չանցած ձեզ կը պարզուի, որ դուք վայելում էք Մեծազոյն Ջեֆըրսոնի Հայ Ազգային Համայնքի եթէ ոչ ամենակատուուն, դէթ ամենանշանկ անդամի հիւրընկալութիւնը։ Եւ այդ բոլորի մէջ կարեւոր դեր է վերապահուած նրա կնոջը՝

Տիկին Արշակունուն, որը ձեզ այնպես կ'ընդունի, որ կարծէք վաղեմի բարեկամներ էք: Նա ձեզ կը հեռաստի որչափ էր հեռացել թիւս համադամ կերակուրներով ու խորտիկներով, այլ նաեւ իր խօսակցելու անձնանշաններով: Եթէ Գոնսու Առաքելը տան սինն է, ապա Տիկին Արշակունին՝ տաք օշախր, մառապէս վառ պահելով հայկականն ու հայեցին: Անկարելի է որ չսիրէք նրան: Գուք կը գտնէք նաեւ, որ տիկնոջ ազնուական արտայայտութիւնը բարոյական պարտազրանքից զատ արտացոլումն է նրա երբեմնի դիպչելի դիմագծերի, որոնք այժմ հասունացել եւ ինչ որ վեհութիւն են պարզեւել նրան:

— Հրամայէք, հրամայէք, ձեզի մեր տան պէս ազատ զգացէք:

Գոնսու Առաքելին տունն են իջնում հիւրեր Ծրեզնայից, Դիթորյոսից, Բոստոնից, Նիւ Եորքից եւ դեռ Մերձաւոր Արեւելքից, Հայաստանից ու ովկիանոսներից այն կողմ գտնուող ով գիտէ որ երկրներէց: Եւ Գոնսու Առաքելը դիտէ ամէնքի հետ վարուելու, զբաղեցնելու կերպը՝ լինի հիւրը մտաւորական, աշխատաւոր, յեղափոխական թէ առեւտրական:

Ի դուր չէ որ բոլորը նրան Գոնսու են անուանում:

Եթէ հայկական դպրոցի խնդիր կայ, ապա առաջին գծի վրայ է կանգնած նա: Եթէ մշակութային կենտրոնի շինութեան հարց կայ, ապա մէկ աղիւս վեր չի բարձրանայ առանց Գոնսու Առաքելի բարեխնամ միջամտութեան: Եթէ, ասենք, Սիրիայում հայկական որեւէ ուսումնարանի օգնութեան պահանջ կայ, ապա Հայոց Գոնսուը մղիչ ուժն է հանգանակութեան: Հեռաւոր երկրներից ամերիկեան աիտրը հասնող Հայ տարագիրները փոխանակ Ներգաղթի Վարչութեան դիմելու, ուղղակի նրա գուռն են թակում՝ վստահ լինելով որ տոանց նրա ազդեցութեան տերեւն անպատկերից չի շարժուի:

Այդպիսին է Գոնսու Առաքելը եւ դեռ աւելին:

Նա միաժամանակ թէ՛ Ազգային Խորհրդի երեսփոխան է, թէ՛ հոգաբարձու, թէ՛ կուսակցական գործիչ եւ թէ՛ ուսուցիչ: Իսկ ոչ-պաշտօնական հանգամանքով նա վարպետ ճառախօս է, թամաղա, թղթակից ու պատմադէս: Սխալ չհասկացուի: Տիտղոս-միտղոս չունի: Սակայն շնորհիւ անյադ ընթերցասիրութեան՝ կարողացել է դիտելիքների այնպիսի հազար պաշար գոյացնել, որ պատմութեան ուսմանփորձ ուսանողին կարող է այսպէս առած գրքանը գնել: Արդէն Գոնսու Առաքելի տունը տուն չի, զբաղարան-ընթերցարան է: Գրքերը ռոք առած սենեակից սենեակ են գնում մինչեւ ներքնատուն, որը արխիւային տեսք ունի: Եթէ Ձամբիայում անպատկերից թերթ է հրատարակում, ապա քաժանորդ է նա:

Իսկ ամէն բանից առաւել՝ թթու հայ է Գոնսու Առաքելը:

Հայ ժողովուրդի բեռը իր մի քիչ կորացած ուսերին առած ման է գալիս եւ անընդհատ ծրագրեր մշակում: Ուղում է մի կերպ ժողովրդին հայ պահել, որպէսզի վաղը կարողանայ հայրենիք ուղարկել: Այլոց չի տուում, սակայն համոզուած է, որ Հայ Ազգը լաւագոյնն է եւ հենց այդ տեսանկիւնից էլ մօտենում է կեանքին:

Մի օր Փարիզից իր տունն իջեւանած եւ միջազգայնական դադափարներով տոգորուած մի երիտասարդ նեղմիտ ազգայնամոլութեան վերադրեց Գոնսու Առաքելի հայեացքները: Վերջինս մի պահ լռեց, թաշկինակի ծայրով լիւից իր ակնոցն ու ամենայն հանդարտութեամբ պատասխանեց.

— Միջազգայնականութիւնը լաւ է, նույնիսկ անհրաժեշտ մեծ ժողովուրդներու համար: Ինչպէս ամերիկացիները, ինչպէս անոնք կրնան դիմա-

նալ այդ պերճանքին։ Ասկայն մեզ նման փոքր ժողովուրդի մը համար ազգայնականութիւնը պոյատեւան միջոց է։ Մենք հազիւ հինգ միլիոն ենք։ Մեզմէ ամէն մէկը թիւ է ու կշիռ։ Եթէ չփարինք մեր ազգային ակունքներուն ու աւանդութիւններուն, վաղը անգոյն ու անխաբիսի հաւաքականութեան մը կը վերածուինք։ Թող միջազգայնականութիւն խաղցնեն ֆրանսացիները, գերմանացիները, ռուսերը, ամերիկացիները, չինացիները եւ մեծաթիւ այլ ժողովուրդներ։ Մեր փրկութեան միակ միջոցը կենտրոնաձիգ ազգայնականութիւնն է։

Գոնսուլ Առաքելի բազմաթիւ ծրագրերի մէջ առանձնապատուէ տեղ է գրաւում զպրոցը։ Գրեթէ մեն մենակ լծուել է արշաւի՝ մի օր զլուի բերելու համար այդ դռնը։ Նա գիտէ ամերիկեան պայմաններում հայկական կանոնաւոր դպրոց պահելու հետ կապուած բոլոր դժուարութիւնները։ Գիտէ նաեւ, որ ամերիկահայութիւնը յանուն ազգապահպանման՝ բընադրամբ կառչել է եկեղեցուն, որպէս վերջին ապաւնէր իր ազգային ինքնութեան պահպանման։ Ու սակայն տեղի չի տալիս։ Զի կարողանում համոզուել որ հայ մանուկը կարող է հայ մնալ առանց Հայոց Լեզուի։ Եւ զայրանում է։

— Սա երախտներու համար դպրոց է պէտք։ Առանց ժիւղսի կրնանք ապրել, սակայն առանց տըրտքնի կորած ենք։

— Մէյ մը եկեղեցի մը չիսենք, անկէ վերջ...

— Անկէ վերջ ալ այս մանուկները օտարացած կ'ըլլան, — յուզուած վրայ է տալիս Գոնսուլ Առաքելը, երբ ամէն անգամ եկեղեցաշինութեան խօսք է լինում։ Այդ պահերին, նա մեքենայաբար ձեռքը տանում է անշրջանակ անոցին, հանում, նորից դնում ապաւորիչ քթի վրայ՝ թերեւս թաքցնելու համար իր ներքին խռովքը։

Ինչե՛ր չէր տայ Գոնսուլ Առաքելը հասնկ կոկիկ գպրոցի շէնք մը բարձրացնելու։ Զեֆըրսոնի մէջ։

Նման խոհերի ժամանակ խոնաւանում էին նրա աչքերը։ Նա կարօտում էր իր կրտսեր որդուն՝ Հմայեակին, որը երկու տարուց ի վեր էր. ինչ ուսանում էր Բէյրութի Հայկական Ճեմարանում։ Եթէ Զեֆըրսոնում Հայոց դպրոց չիսէր, այլեւս ինչո՞ւ պիտի իր Հմայեակին ուղարկէր Լիբանան, ծովերից անդին։

Հմայեակը վերջինն էր նրա չորս զաւակներից։ Անդրանիկը՝ Համապասպը՝ թիկնեղ ու սեւաշեւայ մի երիտասարդ, զոհուել էր Երկրորդ Համաշխարհային Պատերազմի օրերին Նորմանդիի ափահանման ժամանակ։ Միջնակ որդին՝ Հրանդը, մահացել էր պատանի տարիքում թոքերի բորբոքումից, իսկ միակ դուստրը՝ Հրայուհին, ամուսնացել եւ ապրում էր Լոս Անջելոսում՝ իրեն պարզեւած լինելով երկու թռուներ։

Ողջ ու մահացած զաւակների կարօտը շարունակ քանդում էր նրա հոգին, եւ սակայն Գոնսուլ Առաքելը ստոյիկեան տոկունութեամբ տանում էր վիշաճ՝ աշխարհի առջեւ կանգնելով հպարտ, աներեր ու անբեկ։ Եւ հենց այդտեղ էր, որ նա առուելաբար ապաւինում էր իր կնոջ սիրոյն, նուիրում ին. ու հոգեկան կորովին։ Տիկին Արշակունհին նրա ոչ միայն բարոյական յենակն էր, այլ նաեւ վաղափարական ընկերուհին։ Միասին քարել էին կենսեքի դժուարին արահետներով, եւ երբ ինքը ընկերկել էր, կինը օգնութեան էր հասել նրան, ափովել ու նոր աւիւն ներշնչել։ Եթէ Գոնսուլ Առաքելը Զեֆըրսոնի հայ համայնքի ոահվիրան էր, ապա Տիկին Արշակունհին հանդիսանում էր հոգեկան այն ուժը, որին ապաւինում էր նա։

Ու հիմա, երբ Էրբեմնի ազմկալի տունը պարպուհի էր դառնալիս, կենտրոնը շնչեց, ամուսինները առելի էին մոտեցել իրար՝ միմեանց մէջ գտնելով իրենց միմեմբարանքը:

Շատ քչերին է յայտնի որ Գոնսուլ Առաքելի լրիւ տնունը Բաղդադում Տէր Առաքելեան է: Դեռ պատանի տարիքում մտնելով Սեբաստիայի Խորան գիւղի Հայ Յեղափոխութեան քուրայի մէջ՝ ինքն իրեն Առաքել է վերամկրտում՝ առելի իմաստ ու խորհրդաւորութիւն պարգեւելու համար յեղափոխականի իր կոչումին: Մեծ Արհաւիրքի տարիներին, օտարերկրեայ մարզախրական հաստատութիւնների ներկայացուցիչների հետ վարած իր բանակցութիւնների, ինչպէս նաեւ իր ցուցարարած կազմակերպչական բացառիկ կարողութիւնների համար էր, որ իր կուսակիցները աւելացնում են Վոնսուլը: Այնպէս որ, երբ սրանից մօտ յիսուն տարի առաջ նա ոտք դրեց Ամերիկա, արդէն բոլորին ծանօթ էր որպէս Գոնսուլ Առաքել:

Ի հարկէ, պիտի աւելացնել, որ Գոնսուլի խնդրում պակաս դեր չկատարեց նաեւ նրա ցիլիմըր ղլխարկը, որը Պոլսի նաւահանգստում, ըստ երեւոյթին թուրք մի ստահակից հինգ զուրուշի զիմաց գնելով, դարձել է նրա զլխի մի անբաժան մասը, ինչ փոյթ թէ մեծ լինելով ծածկում է աւանդներէ կէսը: Տարիների ընթացքում կակղել է ցիլիմըրի խաւաքարտէ զլանը, մոխրագոյնի վերածուել նախկին սեւ մետաքսը եւ իւզոտ ու փայլուն երկնները հակուել ցած՝ կարծես ժամանակի ծանրութեան տակ կքած: Ասում են, որ այդ ցիլիմըրը եւ մէկ էլ նրա օտարականի ականջ ծակող խօսելաշէար խոր տպաւորութիւն են գործում ամերիկացիների վրայ, յատկապէս պաշտօնական շրջանակներում: Կատալարական գրասենեակների դռները հապենպով բացւում են նրա առջեւ, ներկայացուած դիմումնադրերը անհիշապէս ընթացք առնում եւ անկարելի նկատուող խնդիրները լուծւում ամենայն փութկոտութեամբ:

Էրբեմն էլ Գոնսուլ Առաքելի Հեղինակութիւնը առասպելականին է հասնում:

- Գոնսուլը կապեր ունի Էդեր Ճերմակ Տան հետ...
- Ձրո՞ւ...
- Ձինքը տեսած են նախարարի մը հետ:
- Իրո՞ւ...
- Կ'ըսեն, Էրբեմն Ուաշինգթըն կ'երթայ եղբք...
- Աստուած Գոնսուլին երկար կեանք պարգեւէ...

Շատ քչերին է յայտնի նաեւ նրա տարիքը: Ոմանք ասում են, թէ եօթնասունի շնորհ է, սակայն ո'ր կողմից էլ որ զննելու լինէք, շատ-շատ կարող էք մինչեւ յիսուն բարձրանալ եւ այն էլ վերադրելով նրա աշխատն մաղբին, որոնցից մի փունջ յամառօրէն միշտ իջած է նրա ճակատին: Թերեւս գաղտնիքը նրա փայլփլուող աչքերի մէջ է: Մինչ իր տարեկիցները մօտ հայրենի տան տարիների կարօտը պղտորել է նրանց հայեացքը, նրա աչքերը սակաւին փայլում են երիտասարդական աւելնով: Կարծէք թէ յաւիտենական ժամադրութիւն ունի վաղուայ հետ:

Թէեւ յաղթանակած մէկի տպաւորութիւն է թողնում Գոնսուլ Առաքելը, բայց իրականում միջնահասակ մարդ է՝ մտադրաւ դիմագծերով, մի քիչ անփոյթ, մի քիչ էլ անդորձնական ինչ վերաբերում է առօրեային: Թերեւս զբանով բացատրել այն հանգամանքը, որ ծանր աշխատանքով վաստակած իր միակ հասուքարի կալուածը թողել է իր տնտեսողներին:

— Փառք Աստծոյ, բարեւք կեանք ունենք: Խնչ պիտի ընեմ հարստութիւնը:

— Առանկ բան չ'ըլլար, վաղուան համար մտածելու ես...

— Իմ հարստութիւնը իմ ժողովուրդն է, — ասում է Գոնսուլ Առաքելը՝ բնաւ չտիրելով հրէ մարդիկ իր տնտեսական հաշիւներէ մէջ եւ մըտնում:

Իրականում, Գոնսուլ Առաքելը հողիւ էր ծայրը ծայրին հասցնում: Ճիշդ է, քաղաքի կենտրոնում ունեցած իր տաս բնակարանաբաժիններից բաղկացած շէնքը միշտ լեցուն էր տնտեսներով, սակայն քիչերին էր ծանօթ այն փաստը, որ նա հայ ընտանիքներից եւ շուկանոր մարդկանցից ոչ միայն տնավարձ չէր պահանջում, այլ յաճախ զարտուղի ճանապարհներով վճարում էր նրանց անդամների ծախսերը: Եթէ Գոնսուլ Առաքելի գրեթէ կէս դար հնութիւն ունեցող քառակուսի շէնքը իր մաքրութեամբ աչքի էր խփում շրջապատի զորշ ու մրտաժ բնակարանների մէջ, ապա այդ այնքան նրա մաքրախորութեանը չպիտի վերագրել, որքան այն հանգամանքին, որ իր տնտես հայեացի Մարգարի ինքնասիրութիւնը չվիրաւորելու համար, ի դիմաց վարձի, տարեկան չորս անգամ նրան ներկել էր տալիս շէնքը: Եւ այդ վերաբերմունքը ոչ միայն հայերի, այլ նաեւ քաղաքակենտրոնում խտացուած անգլոյթ սեւամորթների, ջանասէր չինացիների եւ հարեցողութեան հակուած իրլանդացիների նկատմամբ:

Գոնսուլ Առաքելի առաստաձեռնութեան համբաւը Զեֆըրոսներից տարածուել էր Ֆլորիդա, Կալիֆորնիա, Կանադա եւ նոյնիսկ Միջին ու Մերձաւոր Արեւելք: Զկար ազգանունէր որեւէ ձեռնարկ ու հոնդանակութիւն, որին նա չբերէր իր լիառատ մասնակցութիւնը, մասնաւորապէս հայերի դատաւարականութեանն ու կրթութեանն առնչուած նպատակների: Նուիրութեամբ էր հարիւրական դրամներով եւ յորդորում այլոց իրենց քաղկները լայն բացել Հայութեան կտրիքների առջեւ:

Մինչեւ այսօր էլ ոչ ոք չգիտէ Գոնսուլ Առաքելի հարստութեան զաղտնիքը: Սակայն եթէ որեւէ հանգանակութեան նախընթաց օրը հետեւելու լինէք նրան, ապա կը տեսնէք, որ նա իր շինութեան դիմացի դրամատունն է մտնում ոչ թէ դրամ մուծելու, այլ պարտք վերցնելու՝ մեծ տոկոսներով վերադարձնելու պայմանով:

Եւ այսպէս տարիներ շարունակ: Դրամատունը ոչ միայն տեսահամար փոխանակութիւն ունէր նրա նկատմամբ, այլ նաեւ աչք՝ նրա շէնքի վրայ: Երբորդ անգամը լինելով դրամատան տնօրէն Միստըր Մաքընթալը հարիւր հազար դոլար էր առաջարկել Գոնսուլ Առաքելին իր շէնքի դիմաց, սակայն վերջինս չէր ընկրկել:

— Բայց, — ատարկել էր Միստըր Մաքընթալը, — այդ գումարով դուք ապահովուած կը լինէք ձեր ամբողջ կեանքում:

— Ծնորհակալ եմ ձեր ազնուութեան համար: Սակայն այդ շէնքը ինձի համար աւելին է քան լուր հասութեանը կալուած մը, — ասել էր Գոնսուլ Առաքելը, տենդազին սեղմելով Միստըր Մաքընթալի երկարած աջը:

»

Այդ տարի Սիպտեմբերին Հայ Ժողովուրդը կրկին տաղնապի մէջ էր: Այս դէպքում «Հայ Ժողովուրդ» ասելով պիտի հասկանալ Մեծա-

զոյն Ջեֆրեսոնի հայ Աղգային Համայնքը, որը իրականում բաղկացած էր 311 տնից, մեծ մասամբ կրթական ազգայիններ, որոնք սակայն տար-ւայ մէջ մի քանի անգամ սաստիկ յուզում էին, երբ եկեղեցի կառուցելու խնդիր էր մէջտեղ գալիս:

Համայնքը բաժանուել էր մի քանի մասի, մասերը մի քանի հատ-ւածներին, իսկ հատուածները երբեմն մի քանի հոգուց կազմուած խմբակ-ներին: Բոլորն էլ վերջապէս եկել էին այն եզրակացութեան, որ պահուել աղպարականանք չիմանկան մի բան պիտի անել Ջեֆրեսոնում:

Եկեղեցուհիների թիւը դնելով մեծանում էր, սակայն նրանցից ա-մէն մէկը ցանկանում էր, որ եկեղեցին չիմուի եթէ ոչ իր տան կից, զոնէ իր ապրած թաղում: Խնդիրը աւելի բարդանում է, երբ դեռ շինութեան վերաբերեալ վերջնական որոշում չկայացուած՝ վէճ է ծագում եկեղեցու կառուցի եւ ո՞նի շուրջ: Դեռ այս բաւական չէր, իրատեսի մէկն էլ մէջտեղ է հանում Բէյրութից քահանայ բերելու եւ նրան պահելու հետ կապուած անտեսական շնախատեսուած խնդիրներ՝ ուղղակի սառ ըլլալ լեցնելով հե-տըզնոէ աճող ընդհանուր ուկեւորութեան վրայ:

Համայնքի հին անդամները աւելի պահպանողական են՝ փորձելով յենուել Ստատուս կօա-ի վրայ: Նորեկ ներգաղթածները իրենց հետ բերած լինելով Մերձուոր Արեւելքի հայաշունչ ողին՝ աւելի հակուած են ջանքե-րը դարձնելու իրենց վրայ կենտրոնացնելու: Հիմնականում, Ամերիկա-յում ծնուած ու արդէն տուն ու տեղ եղած սերունդն է, որ ամուր կառնած է մնում իր սեփական եկեղեցին ունենալու գաղափորին՝ մեծ մասամբ հա-սարականօրէն պատուաբեր մի հաստատութեան պատկանելու շարժառե-թից ելնելով: Ու Կոլորովեան սայլի պէս ոչինչ տեղից չի շարժուում, մինչեւ որ օգնութեան է հասնում Գոնսուլ Առաքելը:

Որոշում է համայնքին ժողովի հրաւիրել:

Յայտարարուած ժամից մէկուկէս ժամ յետոյ հազիւ բացում է ժո-ղովը: Մասնականներից վարձուած սրահը արտակարգ եռուգետի մէջ է: Նախորդ զինքրուայ պարահանդէսից մնացած գոյնզգոյն զարդադրա-բանքները տօնահանգէսի տեսք են տուել այլապէս մուսլ ժողովասրահին:

Այդտեղ է որ հաւաքում է համայնքը իր պէս-պէս հանդէսների ու ձեռնարկների համար: Մօտակայ փողոցի խանութպաններն ու բնակիչները վաղուց վարժուած լինելով հայերի բարձրագոյն խօսելակերպին ու յատկա-պէս նրանց երաժշտութեան տենդահար կշռոյթին, այլեւս ձեռք են քաշել բողոքելուց եւ կեանքի անխուսափելի մի երեւոյթը համարել այդ համա-խմբումները:

Ժողովականները տեղաւորուում են:

Բնութեան օրէնքին վերադրել, թէ լուկ պատահականութեան, յայտ-նի չէ: Առաջին կարգի նստարանները զբաղեցրել են ումերիկածին երիտա-սարդները, որոնցից ոմանք արդէն իսկ քառասունի դռներն են ծեծում: Մէջտեղի կարգերում մեծամասնութիւն են կազմում տակաւին անինքնա-վատահ նորեկ ներգաղթածները, որոնք միմիայն հայերէն են խօսում: Իսկ վերին շարքերում բազմել են «հները», որոնք ըստ աւանդութեան եւ յատ-կապէս ի զբաղման իրենց ձեռքում ունեն ժողովի ճակատագիրը: Ի դուր չէ, որ երիտասարդները նրանց ճմանը Հրեականին են կոչում: Տարեց աղա-յրներին սափրուած փափուկ դէմքերի վրայ նկատելի է թերահաստու-թեան դրոշմը:

Գոնսուլ Առաքելը տեղ է բռնել մէջտեղի նստարաններից մէկում,

իսկ իր աջին՝ առանձին աթոռի վրայ բազմել է նրա անբաժան ցիլինդրը։ Այսօր նա ակներևաբար յուզուած է երեւում, քանի որ ամէն վայրկեան ձեռքը քթին է տանում շտկելու համար ակիւոցը, որը բնաւ էլ չտկուելու պէտք չունի։ Ամէն ոք աշխատում է մի կերպ գրաւել նրա ուշադրութիւնը։

— Լուսթիւն, խնդրեմ, լուսթիւն, — հնչում է Հոգաբարձական Պորտ-Շերդի նախագահի տուր ձայնը։

Միաժայնութեամբ ու աւանդաբար օրուայ Դիւանի ատենապետ է ընտրւում մեծահարուստ Կիւրեղ Թէրլէմէզեանը, որի բացման խօսքից ոչ ոք բան չի հասկանում՝ նախ որովհետեւ քթի մէջ է խօսում Պարբերդի-բարբորուով եւ յետոյ նախապատկութիւնները յաճախ զուրկ են բայից ու մտկ-բայից։

Օրակարգի խնդիրը վերջնականապէս դեռ չորոշուած՝ սկսում են ճառերը։

Եւ միշտ առաջին խօսողն է Մանուկ Աբգարեանը՝ բոլորին ծանօթ բաժնեկալ նպարտաւանա Մանուկ Աղան, որը Հայու-թեանը վերաբերող ա-մէն նիւթ իւրովի շօշափում է բացի այն խնդրից, որի համար գումարուել է ժողովը։ Նա շնչապառ ու վաստակարեկ ընկնում է աթոռին՝ Թաշկի-նակը ճակատին։

Դիւանի ատենապետը յուսահատ առաստաղին է նայում, մինչ երկու քարտուղարները տենդագին բաներ են արձանագրում՝ մէկը հայերէն, իսկ միւսը՝ անգլերէն։

Դեռ նախորդ ճառախօսի երկարաշունչ ելոյթի պատճառած թժրերից չաթափուած, ինքնակոշ ոտքի է կանգնում քառասուն տարուց ի վեր ա-մուսնոթեան թեկնածու վարսավեր Կարապետ Բաղդասարեանը, որը իր լենկթիմուրեան բեխերը շոյելուց յետոյ արհամարհոտ հայեացքով շուրջն է դիտում, առանց պատասխանելու իր հասցէին ուղղուած վերաւորական ակնուրկներին։

— Ձայն շնորհեցիր...

— Տեղդ նստէ...

— Նորէն պիտի քանդես...

Վարսավեր Չարլին անդրդուելի է։ Միայն նկատելի է, թէ ինչպէս նրա պսպղուն ճաղատ գլուխը գնալով ճակնդեղի գոյն է ստանում։

Չարլին ծխախման մարդու համբաւ ունի։ Նա ոչէմ է ամէն բանի ե-թէ մասնակցութիւն չունի այդ գործում։ Եւ քանի որ անցեալ ծխական ընտրութիւններում Հոգաբարձու ընտրուեց, ապա մէկ տարուց ի վեր է, ինչ քոյկոսի է ենթարկել համայնական ամէն մի ձեռնարկ։

— Չարլի, — լսում է դիւանի ատենապետի սաստը, — ձայն չունե՛ս։

— Ունե՛մ, — պատասխանում է Չարլին։

— Քեզ կ'ըսեմ ձայն չունես, օրէնքէ դուրս ես։

— Ես իմ իրաւունքիս մէջ եմ։

— Իրաւունքիդ մէջ կ'ըլլաս երբ ձայն խնդրես։

— Էհ, հենց հիմա ձայն կ'ուղեմ։

— Ձրլլար։

— Ինչպէ՞ս թէ չըլլար։ Անդամատուրք կու տամ, տնանկ չէ՞...

Սրահում անհամբերութեան ալիքներ են բարձրանում։

— Սակայն կարգէ դուրս ես։

Այս անգամ ոտքի է կանգնում դիւանի ատենապետը։

— Ատանկ է. ձայն կը պահանջեմ։

— Այն ատեն, նստէ եւ անկէ վերջ պահանջէ:
Ներկայ կանանցից մէկը անվայել մի անկան է նետում Ձարլիի
հասցէին:

Ձարլին նստում եւ ժայն է պահանջում:

— Հիմա ըսելիքդ ըսէ, — ասում է զիւանի ատենապետը՝ խորհրդա-
րանական ընթացակարգի բարդ հանգույցներին քաջատեղեակ իրաւաբանի
յաղթական արտայայտութեամբ:

Ձարլին կրկին բարձրանում է եւ խօսում:

— Ես կ'ուզեմ այսօր, այս պահին, այս սրահին մէջ հանդիսաւոր
կիրպով յայտարարել եւ պահանջել, որ մատենի մէջ յատուկէն արժանա-
ղուի, որ ես՝ Կարապետ Բարսեղեանս ունեմ եմ այս ժողովին, որովհետեւ
տեսահամադրական կը գտնեմ:

Քրքիլին եւ լսում այս ու այն կողմից:

— Կա՛րգ, կա՛րգ կը պահանջեմ, — լսում է ատենապետի ձայնը:

Ձարլին ինքնագոհ վերադառնում է իր տեղը:

Գիւանի ատենապետը ծոցի գրպանները փնտռելուց յետոյ, չգիտես
որտեղից փայտէ մի մուրճ է մէջտեղ հանում եւ ոգեւորուած հարուածներ
իջեցնում սեղանին՝ շարունակ զկարդի կը հրաւիրեմ՝ ազատակիւով:

Երբ կարգը վերահաստատուում է, խօսելու արտօնութիւն է ստանում
երկու հիւրանոցների տէր Ղազար Թիւթիւնճեանը, որը ընդհանրապէս նը-
կատուում է տարեցների ներկայացուցիչը: Նա խափշիկի նման սեւ է, հաս-
տափոր ու ինքնավստահ:

Շարունակ բառեր որոնելով եւ որոնածներն էլ ծոր աւալով՝ Ղազար
Թիւթիւնճեանը բացատրում է, որ հապճեպ որոշումներ կայացնելուց ա-
ռաջ՝ անհրաժեշտ է փորձ ու բանիմաց ազգայիններից մի յանձնախումբ
կազմել ուսումնասիրելու համար համայնքի թէ՛ նիւթական կարողութիւնը,
թէ՛ եկեղեցու շինութեան յարմար վայր գտնելու խնդիրը եւ թէ՛ շինարա-
րութեան հետ կապուած յատկապէս՝ մէկ տարուց յետոյ ժողովին զե-
կուցելու պայմանով:

— Զուրը չտեսած արեւները հանելը չիտակ ձեւը չէ, — բառերին
իւրովի իմաստ աւալով եւ հատ-հատ արտաբերելով խօսում է նա, — խոհեմ
շարժուելու է, այլապէս օր մըն ալ ալքերնիս կը բանանք ու ինքզինքնիս
պարտքի մէջ խրած կը անանանք:

Յետին կարգերից վաւերական բացազանութիւններ են լսում:

— Երբ խնդիրը յանձնախումբի հասնի՝ ըսել է խաչ ոչնել գործին վը-
րայ, — մէջ է ընկնում հինգ զաւակների մայր Սիւնլա Գույումճեանը:

Կրկին իջնում է ատենապետի մուրճի հարուածը:

— Կարդի՛ կը հրաւիրեմ: Զմիջամտե՛լ:

Հերթով խօսում են համայնքի տարեցիները: Խօսում են կանայք:
Խօսում են երիտասարդները: Խօսք է առնում նաեւ հաշտարարի համբաւ
փայլող Բողոքական Մարդարը, որը Հայաստանեայց Առաքելական Սուրբ
Եկեղեցուն չպատկանելով հանդերձ, արտով ու հոգով նուիրուած է Ազգա-
յին Համայնքի կեանքին:

— Տիկնայք ու Պարոնայք, — սկսում է նա՝ յուզմանքից զուլնաթափ,-
երիտասարդներու պահանջն ալ արդար է, երէցներու խորհուրդն ալ տե-
ղին: Մենք պիտի աշխատենք այդ երկուքին միջին ճամբան գտնել: Մենք
պիտի սկսենք պատկիչն՝ հետզհետէ ընդարձակուելու նպատակաւ: Ասոր
համար նիւթականէն զատ կը պահանջուի նաեւ բարոյական զոհողութիւն:

Եկեղեցի շինելը բաւական չէ։ Եկեղեցիին մէջ աղօթել է պէտք, մեղքերը քանել է պէտք...

Բողոքական Մարգարէ խօսքը կիսատ է մնում։ Պարտուած աջորդի պէս չորս դէն է նայում՝ սուր քիթը էլ աւելի երկարացած։ Սրահի աջ անկիւնում տաք լինէ է զարդանում՝ ամէն ոք խօսելով միաբերան, մի ահռակ ժողով ժողովի մէջ։ Վէճի մասնակիցներին առաջ տնկուած կզակները քիչ է մնում որ միմեանց բախուեն։ Դերձակ Աւետիսի վրի երակները արտասովոր կերպով ուռել են, կարծես այն է հենց հիմա պիտի պայթեն։ Բզաւում է։

— Ես ազգին համար հողին ալ կու տամ...

— Հողիդ քեզ պահէ, փարա՛ տուր, — նրան ընդմիջում է ապահովադրական ընկերութեան նախկին գործակալ Փանոս Թէքլէմէզեանը։

— Դո՛ւն ես ինծի ազդասիրութիւն սորվեցնողը...

— Եթէ այդպի ազդասէր եղած ես, ինչո՞ւ սէնթ մը չես տար եկեղեցիին։

— Ես եկեղեցիին չեմ հաւատար։

— Ինչի՞ կը հաւատաս, եթէ յանցանք չըլլայ հարցնելը։

— Ես դպրոցին կը հաւատամ։

— Դուն եւ քեզ նմանները միշտ ալ այդպէս կ'ընէք։ Անկարելի բաներ մէջտեղ կը հանէք, որ փարայի խնդիր չըլլայ...

Դերձակ Աւետիսի աչքերից կրակ է թափում։ Ապառնական ոտքի է ցատկում ամբողջ մարմնով զոդալով։

— Դո՛ւն, դո՛ւն ճիւղակիք, դո՛ւն...

— Կա՛րդ, կա՛րդ կը պահանջեմ, — զոռում է դիւանի ատենապետը՝ այլեւս մեքենարար հարուածելով սեղանը։

Երբ մի կերպ ժողովը վերադառնում է իր անդորրը, ձայն է խնդրում երկտասարդ, սակայն անմասնակ ճաղատացած ճարտարագէտ Ջանի Ալ-շուճեանը, որն աւելի ըմբռնատրեկի կերպարանք ունի։

— Ես այսքանը կ'ուզեմ ըսել, — յայտարարում է նա իր իւրովի հայերէնով, — որ իմ շօճուխներու համար ազդային այդքները... ատոր հայրէնը ինտոր կ'ըլլայ կոր, ամէնէն շատ եկեղեցին կ'ըլլայ։ Իմ դրացի ամբողջին երբ հարց կու տայ, ձանի, քու շօճուխներ ի՞նչ չըրչ քիւնմզ կենեն, ես կ'ամօթեմ եւ չեմ կրնար ըսել Արմինիլն չըրչ, քի՛նզ մենք չուռենք, բոլորն ալ ունեն։ Դու ամէնքդ հոս կը խօսես, հայկան հողի, հայկան լեզու, մենք մենծ էնչընք ժողուրդ. բայց, բայց մեր մենծ պապեր, Վարդան զօրաւոր կրօնքին համար մեռաւ, որ մենք չըրչը սքրօնգ պահենք... ես հիմա յսուն տալը կու տամ, որ իմ շօճուխներու համար եկեղցի չենի, որ հնարաւ ըլլան իրենց հայ ըլլալին համար... անընթաց ձերին խօսքեր սէնթ մը չարփեն...

Առաջին կարգերից ծափահարողներ եղան։ Ջանի Ալշուճեանի պատգամը ոչ միայն տեղ էր հասել, այլեւ արձագանգել նրանց երիտասարդ հոգիներում։

— Գուդ ֆոր եու, Ջանի...

— Գիւլ քիմ աւաթ իզ քամի...

Գոնսուլ Առաքելը, որ մինչ այդ ձախ ոտքն էր նետել աջի վրայ, տեղում անհանգիստ շարժուեց եւ այս անգամ ալ ոտքը նետեց ձախի վրայ՝ միաժամանակ ուղղելով բազմիցս արդէն տեղահան արուած ակնոցը։

Նրա դէմքին արտառովոր խոտուութիւն էր իջել: Կարծես, քսան տարով աւելի ծերացել էր:

Դիւանի ատենապետը կարգի հրաւիրեց երիտասարդներին եւ այս անգամ ձայնը տուեց ալեգարդ մագերով, սակայն երիտասարդ, առնական դիմագծերով Մարտիրոս Մարտիրոսեանին, որը չնորհիւ իր անբախիչ նկարագրի ու բարձրագոյն կրթութեան մեծ յարգանք էր վայելում համայնքում:

— Յարգելի ներկաներ, — խօսեց նա ներքին խռովքը զգալու ականք-րեւ ֆանթով, — ինձ համար դժուար է պատկերացնել հայեցի դաստիարակութիւն եւ ազգապահպանում առանց Հայոց դպրոցի: Ես չեմ մերժեր եկեղեցիին դերը մեր պատմութեան եւ մեր գոյատեւման մէջ, սակայն մեր դարուօր պատմութիւնն ապացուցեւ է, որ երբ մոռցած ենք մեր լեզուն, մեր մշակոյթը, ձեռքէ տուած ենք նաեւ մեր ազգային ինքնութիւնը: Հեռուն չերթանք: Վերցնենք Լեւոնտեանի հայերու օրինակը: Հոն ատենին հաստատուած հոծ հայութենէն այսօր ի՞նչ է մնացեր... Թերեւս քանի մը եկեղեցիներ եւ հրաշքով իրենց ազգային ծագմանը գիտակ զանի մը հոգիներ... Եթէ կ'ուզենք անվթար պահել մեր ազգային ոգին, ապա մեր առաջին գործը պիտի ըլլայ մեր մանուկներու հայեցի դաստիարակութիւնը, որը առանց բնականիքի ու դպրոցի կարելի չէ: Ես կ'առաջարկեմ այսօրու ճէ սկսեալ գործի անցնել, հանգանակութեան ձեռնարկել, որպէսզի կարենանք առնուազն տարիէ մը դպրոցի համեստ շէնք մը կառուցանել: Եկեղեցիին կու գայ վերջը:

Հաւում են ծախահարութիւններ եւ միաժամանակ գժգոհութեան արտայայտութիւններ, որոնք դնարով ծաւալում են՝ Արևելիան շուկայի մթնոլորտ ստեղծելով: Վեց հողի միասին ձայն են պահանջում ընդհանուր իրարանցումի մէջ: Դիւանի ատենապետը մէկդի է նետում իր նախագահական մօտեմը, ձեռքերը յուսահատ երկինք բարձրացնում, ապա գլուխն առած շարժում դէպի պէտքարանը տանող միջանցքը:

- Կեցցե՛ս, պարոն Մարտիրոս:
- Ես եկեղեցիի՛ կողմնակից եմ:
- Ապրի՛ Հայ Ազգը...
- Հոս խարդախութիւն կայ: Դուք կազմակերպուած էք եղեր:
- Եո՛ւ տէ՛ր ի՞նչ:
- Պարոն ատենապետ, պարոն ատենապետ: Ո՞ր է դասեր ատենապետը...
- Այսօր ինձի հարիւր հազար տալը մը տաս սանկ աղուոր դպրոց մը շինեմ՝ քովն ալ եկեղեցին:
- Ախպար, ալ ազգին փարա տալէ մեռանք: Կը բաւէ:
- Այ ամ փոք չըբէ:
- Մի՛ քու: Ֆոք դը րէսք, այ դօնք գիվ է դամ...
- Պարոն Մարտիրոս, աղուոր խօսեցար:
- Ասանկ ժողով կեանքիս մէջ հիշ տեսած չունիմ: Ամօ՛թ:
- Տեղդ նստէ, եո՛ւ քա՛մ քու մաչ...
- Դուն որո՞ւ կ'ըսես, տեղդ նստէ...
- » ...

Գոնսուլ Առաքելը տեղից ելաւ ու հանդարտ քայլերով մօտեցաւ նախագահական սեղանին՝ հայեացքը մռթ ու ցաւոտ: Նա թեւերը խաչաձե-

ւեց կրծքին ու սպասողական դիրք ընդունեց: Նրա ներկայութիւնը միանգամայն տիրեց օրահին: Իրարանցումը հետզհետէ մեղմացաւ, աղմուկը զնալով մարեց եւ մի քանի վայրկեանից անակնկալ լռութիւն իջաւ ժողովարարէ վրայ, ինչպէս անսպասելի փոթորիկին յաջորդող անդորրը:

Գոնսուէ Առաքելը անոնց չհանեց, թաշկինակով ճակատի քրտինքը մաքրեց, մի պահ աչքերով զննեց շորս բոլորը եւ խօսեց:

— Բնականաբար, ձեզ նման ես ալ վրդովուած եմ ի տես այս ժողովի ընթացքի: Սակայն միեւնոյն ատեն այն հաստատ համոզմանն եմ, որ դուք բոլորդ ալ խորապէս շահադրուում եք մեր ժողովուրդի եւ առանձնապէս մեր այստեղի զազութի ազգային խնդիրներով: Փաստ՝ ձեր ներկայութիւնը եւ ձեր արտայայտած մտքերը, որոնք կ'արտացոլեն մեր իրականութեան պատկերը: Մենք հոս կը ներկայացնենք մէկ մասնիկը Հայ ժողովուրդի: Եւ որ ամենայնապէս շահանքն է, կը ջանանք խօսիլ ու արտայայտել լեզուով մը, որ անհրեւոյթ օգտակարով մեզ կը զօդէ միմեանց, որովհետեւ, ինչպէս ըսի, մենք զաւակներն ենք Հայ Ազգին:

Նրա ձայնը զնալով յստականում էր, խօսքերը աւելի բիւրեղանում եւ դէմքի քիչ առաջնայ խոփոտ արտայայտութիւնը տեղի տալիս ինչոր երանութեան:

— Եւ այժմ հարց կու տամ ձեզի: Ի վերջոյ ի՞նչ է ազգութիւնը եթէ ոչ ինքնուրոյն լեզու, ինքնուրոյն մշակութի ունեցող ժողովուրդի մը հաւաքական ամբողջութիւնը՝ հոյակապ պալատ մը, որ կերտուած է դարերու ստեղծագործական ճիգերով: Այլ խօսքով, լեզուն ամբողջական ազգն է: Առանց լեզուի ազգը կը դառնայ անգոյն հաւաքականութիւն մը:

Գոնսուէ Առաքելը մի պահ ընդհատեց իր խօսքը, մինչեւ որ Դերձակ Աւետիսը վերադառնալով ժողովարար, պրտեց հանդիպած առաջին պարզ աթոռը: Ժողովականները մօտ մի քանի րոպէ առաջ տիրող ամօթի զգացումին փոխարինել էր ինքնազիտակցութեան զգացումը: Բոլորի դէմքերի վրայ դրոշմուել էր մի տեսակ հիացմունքի եւ լուրջ հետաքրքրութեան կնիքը:

— Այո՛, ճիշդ է, որ ազգային կեանքի մէջ գոյութիւն ունեցող բոլոր հաստատութիւնները, յատկապէս եկեղեցին, կարեւոր ազգականը են հոյակապական ճիգերուն, մասնաւորապէս սփիւռքի հայութեան համար: Բայց այդ ազգականը միայն չեն, այլ ժամանակաւոր քնոյթ կը կրեն:

«Հիմնականն ու տեւականը Հայ Լեզուն է, Հայ Գրականութիւնն է: Կարձ՝ Հայ Մշակոյթն է իր բոլոր մարդերով: Եւ լեզուն է, որ սերունդէ սերունդ Հայ Ռզին փոխանցելու միակ աստուածային բանալին կը հանդիսանայ: Ետ չերթանք ու չքրքրենք Հայոց Հին զազութներու պատմութիւնը, այդ մասին խօսեց Պարոն Մարտիրոսեանը: Մեր աչքին առջեւ է նոր զազութներու պատկերը առաւելապէս: Դուք լուսատեղեակ էք, թէ ինչ կացութեան առջեւ են կանգնած Արեւմտեան երկիրներու մէջ Հաստատուած Հայ զազութները: Դուք դիմել ենք, որ միլիոններ արժամ Հայ եկեղեցիները այսօր երկնաքանդակ առջեւ են, թէ ո՞րն ընտրել որպէս եկեղեցական լեզու՝ Հայերէ՞նը թէ՛ տեղականը...»

Ճերեակայեցէք, որ դժբախտաբար, ասկէ հինգ կամ տաս տարի յետոյ մենք պարտաւորուած պիտի ըլլանք մեր զմայլելի Հայոց Պատմութիւնն ու մշակոյթը մեր զաւակներուն մատուցել անզլերէնով կամ Քրանսերէնով: Ըսէք տեսնո՞ւ, ո՞ւր կը միայն եկեղեցին որպէս ազգակ հայապահպանման:

«Որպէսզի մեր ապրած օրերուն այս դառն իրականութեան ականա-
տես ըլլանք, Հայ Լեզուի ուսուցումը պիտի ըլլայ մեր նշանաբանը եւ մեր
դրօշակը: Հայ դպրոց եկեղեցիին կողքին: Անհրաժեշտ պարագային, նոյն-
իսկ առանց եկեղեցիի: Հայոց լեզուն տունէն ներս եւ մեր հաւաքական
կեանքին մէջ»:

Գոնսուլ Առաքելի ձայնն այժմ կերկրում էր:

Առաջին կարգի ժողովականները նրա աչքերում արցունքի շիթեր
նկատեցին: Պատերից իջնող թէք լոյսերի տակ նրա դէմքի գծերը շեշտուել
եւ հինաւորաց նահապետի արձանացած արտայայտութիւն էին ստացել:
Յորհրդաւոր լուրթեան մէջ նա շարունակեց.

— Եւ ուրիշ առթիւ կը լսուէր մի այլ ահազանդ. — «Ե՞րբ պիտի հա-
մոզուին, թէ Աստուծոյ առջեւ ամէնէն թանկ դարձարանքը իրենց զաւակ-
ները ոսկեղէն մարդ ընելն է, զանոնք կրթել եւ լուսաւորելն է Աւետարա-
նի ոգիով, ազգութեան սիրով, լեզուի ուսմամբ»: Այսպէս կը դէժը մօտ
իննըսուն տարի առաջ ներուն եկեղեցականը՝ Յրիմեան Հայրիկի արժա-
նաւոր աշակերտն ու գործակիցը՝ Գարեգին Եպիսկոպոս Սրուանձտեանց,
այն առնն, երբ Հայրենի Հողին վրայ Հայ Դպրոցը առաջին գծի վրայ էր:
Այսօր աւելի քան անհրաժեշտութիւն է Հայ Լեզուի պահանջը: Այս փաս-
տին ուրացումը նորօրինակ ցեղասպանութեան մը ժառանգական կը բա-
նայ մեր առջեւ... Այո՛, ուր որ ալ երթանք, ո՛ւր որ ալ ըլլանք, չի՛ մոռնաւ
Հայ Լեզուն: Թէկուզ մոռնաւ մայրդ, բայց չի մոռնաւ Լեզուդ: Այս պատ-
դամը բանաստեղծուէի մը պատգամը չէ լոկ, այլ կ'արձագանգէ դարերու
խորքերէն՝ Հայ մեծ պատմարան Մովսէս Խորենացիէն...

Գոնսուլ Առաքելը գլուխը վար հակեց:

Յանկարծ որոշը կարծէք թէ ելիկտրական մի հուսկու հոսանքից
մղուած կենդանացաւ որոշանդոտ ծափահարութիւնների տարափի տակ:
Միասնութեան ալիքը իր յուզեռոտ օղակի մէջ էր առել մի բոլոր հայերի
Ջեֆըրսոն քաղաքի Մասոնականների ժողովարանում: Գոնսուլ Առաքելը
թեւերը առաքելափ պէս բացելով գլխի թեթեւ շարժումով հանդարտութեան
կոչ արեց ներկաներին: Երբ ծափահարութիւնը հետզհետէ մարեց, նա շա-
րունակեց.

— Այլեւ բաւական է որչափ խօսեցանք ու ճառեցինք: Այժմ հերթը
եկած է գործին: Որեւէ յապաղում կրնայ ճակատագրական ըլլալ: Հրատա-
պութեան այդ գիտակցութեամբ է, որ հոս բոլորիդ ներկայութեան կը
խոստանամ հարիւր հազար նուիրել Ջեֆըրսոնի մէջ Հայոց Դպրոց ու մը-
շակութային կեդրոնի մը կառուցման նպատակին: Անկէ վերջ միահամուռ
հիւսիսով կը ձեռնարկենք եկեղեցիի մը կառուցման: Նախ դպրոց:

Ժողովարանում կարծէք մի խուրձ լանթիւ էին նետել: Ընդհանուր
քաղաքում էր տիրել: Գոնսուլ Առաքելի վերջին խօսքերը կախուել էին մի-
ջոցում: Ներկաները չլմանալ՝ դեռ չէին կարողանում կռահել իմաստը: Մի
ականթարթ յետոյ սակայն, ալեկոծ ծովի պէս ծփաց սրահը կեցցէներէ ու
բացազանդութիւնների ժողովրդի տակ: Ոմանք արտասուում էին:

Այդ գիշեր Գոնսուլ Առաքելի յաղթանակի գիշերն էր, իր տարինե-
րի երազի իրականացման նախըզանքը: Հին ցիլիքները մինչեւ ականջների
կէսը խրած եւ երանութեան ժպիտը դէմքին առնն գնաց:



Այդ դիւէր դրեթէ ալք շխփեց Գոննուի Առաքելը: Անհամբեր լուսա-
նայուն էր սպասում՝ ինչպէս կաղանդի նախօրէին զարմանահարալ ահնկա-
լիքներով երանացած մի մանուկ:

Վաղ սուսուտեան խնամքով սափրուեց, հին խողանակով մաքրեց իր
հին ցիւլնգըրը, հազաւ իր կիրակնօրեայ հաղուստը, կապեց իր սօնակն
փողկապը եւ իր կնոջ օրհնութիւնը ստանալուց յետոյ՝ երիտասարդական
քայլերով իջաւ քաղաք:

Սեպտեմբերեան պարզունակ առաւօտի մէջ Ջեֆրըսոնը միջերկրա-
կանեան զուարթ քաղաքի տեսք էր ստացել: Նա կանգնեց Մադիսոն եւ
Ուէսթմորլենդ պողոտաների անկիւնում գտնուող իր շէնքի առջեւ եւ հը-
պարտութեամբ նայեց նրա մաքուր, քառակուսի, դիմացկուն կառոյցին՝
իր քառասուն տարիների տքնաջան աշխատանքի վատտակին: Վաղեմի բա-
րեկամից ընդմիջտ բաժանուող յուզքը կրծքին՝ դիտարկել հանեց, մտովին
հրաժեշտ տուեց շէնքին եւ յոգնած աչքերի խոնավութիւնը հապճեպով
մաքրելուց յետոյ ուղղուեց դէպի Դրամստուն:

Կէս ժամ յետոյ շէնքը այլևս Գոննուի Առաքելին չէր պատկանում:
Հոկտեմբերի կէսերին Ջեֆրըսոնի ծառայիւմ մի փողոցի անկիւնում
դրուեց Հայկական Դպրոցի առաջին աղիւտը:

6. 4.

(«ՆՈՐ ԱՇԽԱՐՀԻ ՀԻՆ ՄԵՐՄԱՅԱՆՆԵՐԸ» շարքէն)

ՀԱՅԿ ՅՈՎԱԿԻՄԻԱՆ

Ձ Ի Ա Ր Շ Ա Ի

Ա.

Սեւադարի փէշերից
Դու ես կրկին ինձ կանչում.
Վառ յուշերի մշուշից
Ինձ ես նայում, կարօտում:
Օ՛ր, դու փռքիկ տեսչեայ,
Իմ խաղընկեր կենսավառ,
Կարծես ինչ հետ եմ տեսնում՝
Շրջում արտերն ու գետառ:

Է՛յ, դու՛ք կանաչ արօտներ,
Մարախներ տիգուհու.
Եւ դո՛ւք գուլալ աղբիւրներ,
Որ երգում էք առշուկու:
Անա՛նք մօտ եմ կարծես.
Կարծես այցի եմ եկել՝
Քաղում ալուկ, խրիմդուկ,
Ձիգիգամ ու խաւրժիլ:

Բ.

Յիշում ես այն առաւօտ –
Բռնել էիմէ՛ք ձիւրջաւ,
Դէպի դաշտերն արեւոտ

Քշում էիմէ՛ք խօլաբշաւ:
Մեր արշաւին միացաւ
Երամակը խրիմիդով.
Փռչին որպէս ամպ ելաւ,
Գետառն իջնաղ կածառով:

Քամապնչած բուռակ, ձի,
Քառատրափ սլացան,
Իսկ ես՝ անվարժ պատանի,
Վախից մռռցայ ամէն բան...

Թռչած սանձ ու երասան,
Կառչած բռնիկ Ջլփաշի (*),
Եւ տեսքի ձւ տնճայն
Թուայ թափով ամենի:

Հանդուռները մօտակայ,
Փռածք արին կտրելու
Ձիերի երթն անապայ,
Բայց անկարող օգնելու,
Շուարանքի մտնուած,
Կիսաճամբին մնացին –
Ո՛ր՛կ կարող էր տախտած
Նժոյգների դէմ կանգնի:

(*) Ջլփաշ – Ընտրիկ տեսակի ծառակ:

Գ.

Գետառն իջնող նեղ մամբին,
Կար մի ձորակ հղեցնուտ.
Նեղ էր անցքը, դժուարին,
Եւ քարքարոտ ու փշոտ:
Սանձը խլած գիծ Ջլփան
Վիհն անցաւ քռիչքով,
Ու ես անվարժ այդ քափին,
Ձորը ջնկայ ճըշոցով...
Դուն էլ ընկար նայն կիրնում,
Քո ազգքն էլ էր խիստ ծեծուել -
Ծուկնդ՝ քերուել, արինել.
Լացում էիր ու գռռում...
Ես ինձ գտայ շատ շուտով,
Ոտքի ելայ անարգել,
Բայց զգացի արքաափով
Որ ձայն բազուկս է ջարդուել:

Վերքս տաք էր տակաւին,
Ձէք զգում ո՛չ մի ցաւ,
Մօտիկ համդուարն առաջին
Երբ արկածի վայրն հասաւ,
Ջարդուած ձեռքս մի տեսակ
Փաթքեց մի կշտ կտաւով,
Շալակն առաւ ու արագ
Ինձ տուն տարաւ հնալով:

Գ.

Երբ՝ սիրտնած ու վաշտս,
Այդպէս մօրս մօտ տարան.
Երբ նա տեսաւ արիւնտ
Վերակապը իմ կռան,
Սաստիկ ցնցուեց ու ճչաց...

.....

Ա՛խ, մօր սիրտը անմահ,
Ո՞նց դիմանար ազէտուած
Որդու ցաւին այդ օրումն:

Ու իմ սիրտն էլ մզկտաց
Մօրս վիշտը տեսնելով,

Եւ ես ցաւս մոռացած,
Հընշում էի ամօթով,
Որ քանկագին մայրիկիս
Վշտի պատճառ եմ դարձել,
Որ նա իմ խենթ արարքի
Պատճառով է տառապել:
Եկաւ հայրս՝ ալեհեր,
Ջննեց ձեռքս ու ասաց, -
Բազուկն է կտորուել.
Կանչէ՛ք նանին Մուսէսի,
Նա հմուտ է ամէնից.
Ասէ՛ք, քող շուտ ետեղ գայ, -
Ու կանչեցին Մուսէսի
Ծեր մայրիկին իր տանից:

Մուսէսի նանը՝ բուժակ,
Գիւղում ունէր մեծ համբաւ.
Նա տատմէր էր ու ասակ,
Ամէն տեսակ յետմացաւ
Ու զխաջաւ բուժելու:
Թէ ոսկորը կտորուած,
Խախտուած լինէր իր տեղից,
Նա լաւ գիտէր հարկ եղած
Դարմանումն անելու:

Ե.

Տառիկն եկաւ, ծանր ու մեծ,
Շտկեց մէջքը կորացած.
Շուրջը դիտեց ու քնդաց,
- Ի՞նչ է՛ք բան ու գործ քողի
Երեխի շուրջը բռնել...
Տեսնեմ էս քաջ ձիւտքի
Ո՞ր կռանն է ուժ հասել...
Ի՞նչ էլ լինի, շուտ կ'անցնի:

Թեւ զննում էր զգայշ,
Եւ ինձ հետ էր կատակում.
Սի՛րտ էր տալիս ու սիրուն
Նուէրներ էր խոստանում:
Այսպէս՝ խօսքով, կատակով,
Նա ուղղում էր, յարդարում
Ոսկորները խնամքով -
Անվերջ խօսում, կատակում:

Նամին ծածուած Տօրօնը (*)
 Խառնեց ձաւի գեղնուցով,
 Եւ այդ քանձոր շաղախը,
 Յօւր շտեմած կտառով
 Թեւիս փաթեց եւ դրսից
 Բարակ տախտակներ կտպեց,
 Որ բազուկս շարժելիս,
 Ոսկորները շխախտուեն:

Ջ.

Երկու շաբաթ տնային
 Բանտում փակուած մնացի.
 Վերջս բաժուեց ու կրկին
 Ձի քշելու գնացի:
 Էլի՛ ընկեր ու արշաւ,
 Էլի՛ մանուկ կենսավառ,
 Արտերն եղան առաջատակ –
 Էլի՛ ընկեր ու արշաւ:

(*) Տօրօն – ներկատու բոլոր է, որ բուժիչ
 յատկութիւն ունի:

Թեւրան

Դ.

Անեղ օրերն այն լուսէ,
 Անցան հալուող ձիւնի պէս.
 Նրանց արցունքն ալմաստէ,
 Բնաբ դարձաւ իմ ձեռքին:
 Անց է կացել իր կարգին
 Մուսէսի նմը քարի,
 Ու մնում է իմ քեւին
 Անգիւնը մի յուշ, մի սպի:

Է.

Սեւազարի լանջերից,
 Քերծին նստած մի տղայ,
 Ձայն է տալիս, կանչում ինձ –
 Սեւ աչք-յօնքով մի աղայ:
 Ձորում, գաւարք ու ունեւան,
 Արծաթ փրփուրը քերմին,
 Դեռ վշտում է, զգրդում,
 Ջրաղացը եին գիւղին:

Հ. Ե.

ՈՒՂԱ ՈՐԲԵՐԵԱՆ

Զ Ր Ո Յ Ց

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԵՂԱՐԱՆԻ ԿԱՌԱՐԱՐՈՒՄԻ ՄԱՍ

— Այլո՛ւ, ի՞մա, տո՞ւնն ես, ըսել կ'ուզեմ, գուրս պիտի չելլե՞ս:

— Ո՛ւ, ի՞նչ կայ նորէն, ձայնդ ինչո՞ւ կը դողայ...

— Ի՞մա, լաւ կ'ուզեմ, եթէ չլամ պիտի պայթիմ, կրնա՞մ քիչ մը դաւ քովդ: Հոս, մեր տունը լեցուն է:

— Եկո՛ւր, եկուր նայինք, հանդարտէ՛: Ի՞նչ կ'ըլլա, ի՞նչ եղաւ նորէն...

— Ձե՛մ գիտե՞ր թէ ինչ կ'ըլլամ, բայց լաւ չեմ, կը ներես, նորէն քեզ անհաւաքիս երբ:

— Ոչինչ, լաւ, եկո՛ւր, ես առանձին եմ:

Հեռաձայնը կը դոցուէր: Անմիջապէս երկու զաւաթ սուրճ կրակին վրայ: Սիւկարէթ... սիկարէթ... ս'աւր է սիկարէթին տուփը... հա՛, հոս է... բայց ի՞նչ սիրած սիկարէթներէն չունիմ... հոգ չէ, ինք ի՞նչ պայտասակին մէջ կ'ունենայ անպայման... հանդարտեցուցի՞ր մը... կամ ոչ, աւելի լաւ է հանդարտեցուցի՞ր երաժշտութիւն մը...

Աներեւակայելի գեղեցկութիւն աչքի տռնելու կապոյտ ու հանգարտ ծով. վարդադոյն-նարնջադոյն հորիզոն, սեւ կէտեր եւ քիչ մը աւելի մեծ գիծեր, մակոյկներ եւ նաւեր ներկայացնող, աւելի մօտ, ճիշդ ծովակերպին, խումբ մը ձրկանոսներ, որոնք պարանի մը վրայ ինկած՝ կը քաշեն:

Այս բոլորը շատ աւելի հանդարտեցուցի՞ր են, քան որեւէ քնաբեր դեղ:

Հինգ վայրկեան անց, Վերա կը հասնի:

Նայն ժպիտ մը չրթունքին: Սեւ ալ-նոցներ աչքին, որոնք իրականութիւն մը կը ծածկեն, կտրմամբ քիթ մը: Անշարք, անխնամ հազուածք:

— Կը ներես, շատ շուտ հասայ...

— Եկո՛ւր... ոչ, այս ամբողջ վրայ... նաեւ հանէ՛ վերարկուդ... ա՛, այսպէս... սուրճը պատրաստ է, հիմա կուզամ:

Ռազմագիտական թեքնիքս ի՞նչ կատարելութեան հասած էր այդ օրը: Սեղանին վրայ բաց թերթ մը, որուն վրայ Վիէթնամի պատերազմէն սրտածմբիկ տեսարաններ կ'աշխատէին կարծես գիւրար գերագանցել: Անխուսափելի էր զանոնք տեսնելը:

Երբ սուրճով միասին վերադարձայ, Վերա կլանուած էր թերթով: Պատուաւոր գէմբերով եւ անդամներով դիտարներ, իրենց զաւակները ողբացող մայրեր, աներեւակայելի վիրաւորներ:

— Վերա՛, ակնոցներդ հանէ՛ եւ սուրճըդ առ:

Սուրճը առինք, գիտելով ձկնորսները, որոնք թիւով 9-10 հոգի էին: Ուռ-կանը հասած էր վերջապէս ծովափ: Երեսունէն-քառասուն ձուկ հալիւ կային անոր մէջ: Տա՛ւը հոգիի համար: Տեսարանը իսկապէս որ քաջալերական չէր: Մօտաւորապէս մէկ ժամէ ի վեր կը քաշէին ողի ի բոխն եւ արդիւնքը, հազիւ

կողմով մը ձուկ։ Ծուարած գիրար կը դիտէին։ Անոնց ձայնը չէր հասներ ինծի, բայց վստահ եմ որ բոլորն ալ հակայ հայհոյանքներ ունէին իրենց չրթունքին, նաեւ հողինքըն մէջ։

— Վերա՛, — ըսի, դառնալով քարեկամ ուհիս, — դուն սնանկացած ես։

— Ինչո՞ւ, — յանկարծ տեղէն ցատկեց Վերա։

— Այո՛, պարզապէս սնանկացած։ Կը յիշե՞ս զէպի լեռ. պտոյանիս։ Քեզի մանրամասնութեամբ քացատրեցի, որ սէրդ ամբողջութեամբ մէկ բանի չյատկացնես։ Որ, սէրը պէտք է բաժնեւ առնուազն երկուքի։ Սիրած անձէդ զատ պէտք է սիրես նաեւ ուրիշ բան, նոյնքան զօրաւոր, նոյնքան ամբողջական։

— Օրինակի՞ համար։

— Օրինակի համար, նկարչութիւնը։ Լաւ կը յիշեմ որ դուն դժելու մասնաւոր ձերք ունէիր։ Հետեւէ՛ դասընթացքներու, մօտէն ծանօթացիր նկարչներու գործերուն, ստեղծէ՛ նորութիւն մը կեանքիդ մէջ։ Ի վերջոյ, սիրած անձէդ զատ կապուէ՛ նաեւ ուրիշ իրականութեան մը։

— Ձեմ կընար։

— Փորձէ՛ եւ պիտի տեսնես։ Անշուշտ գիրքին պիտի չըլլայ, բայց կ'արժէ փորձել։

— Իմ մա՛, ես դիւ շատ դժբախտ կը զգամ։ Օրերէ ի վեր տխրութեամբ եւ վիշտով կը սնանիմ։

— Եւ յետոյ, ան ալ ըսեմ քեզի, որ երջանկութիւնը շատ յարաբերական է, ինչպէս ամէն բան։ Ոչ ոք կըրցած է հասնիլ կատարեալ երջանկութեան։ Պէտք է բնորոշինք զայն ունենալ պակի բաժիններով, մասնիկ առ մասնիկ։ Կայ նաեւ ուրիշ բան։ Կրնանք տակաւին սխալած ըլլալ։ Թերեւս այն՝ ինչ որ կը կործէինք, թէ մեզի կատարեալ երջանկութիւն պիտի տար, սխալմունք համակ դժբախտութիւն։ Գիտեմ որ շատ դժուար է հիմա քեզի համար այս խօսքերն ընդունիլ, թերեւս նոյնիսկ մտիկ ընել։ Գիտե՛մ... իրականութիւնը միշտ խորթ կը հնչէ։

— Վերա իրրեւ թէ չէր լսեր։ Մինչդեռ,

վստահ եմ որ բառ առ բառ կ'արձանագրէր խօսքերս, աւելի ուշ՝ վերլուծելու համար զանոնք։

Պ

Իրիկնաժամ է։ Ձկնորսները կը պատրաստուին մեկնիլ։ Ծովը ստացած է մութ-կապոյտ երանդ մը։ Պէյրուսի կը սկսի կայծկլտալ հեռուէն։ Ինքնաշարժներու լրջօնը դեղին փայլուն պարսնինքնաշարժներին համարուն երկու կողմէն մերուն վրայ։

— Վերա՛։

— Այո՛։

— Դուն մոռցար, թէ ինչո՞ւ եկար քովս։ Պիտի լսայիր։

— Յանցաւորը դուն ես, մոռնալ տուիր։

— Ա՛, ա՞յդ ալ յանցանք։

— Այո, Իմ մա, կ'ուզէի լալ, կ'ուզէի ձերբազատիլ դիւ տանջող մտքերէն։ Իմ մա՛, քիչ մը եւս, եւ ես կեանքէն պիտի հեռանամ։

— Ի՞նչ է, անձնասպանութիւն...։

— Ո՛չ, ո՛չ, խենթ չեմ... վանք պիտի քաշուիմ...

— Իսկապէս որ նորոյթէ լուր չունիս։ Տակաւին պէտք եղածին չափ արդիական չեւ։ Սիրելի՛ս, յուսահատները, ըմբոստները հիմա վանք չեն քաշուիր, ալ կ'ըլլան հիփփի։ Հիփփի՛, կը հասկնամ։

— Ե՞ս, հիփփի՞։

— Այո՛, դուն, ինչո՞ւ չէ։ Եւ այս օրու կ'ըլլաւ նախադարձաւոր հայ հիփփիական շարժման։ Պէտք եղած հազուատները ունիս արդէն։ Քանի մը շաբաթ առանց բաղնիքի եւ... ահաւասիկ կատարեալ հիփփի մը։ Ոչ ոքի օտարաւած ես հաշիւ տալ, ոչ ոք մտիկ ընել, նոյնիսկ պարզապէս խօսիլ... Կրուստ, երբ կ'ուզես, կը խնդաս, եթէ ուզես։ Աստիճաբար հիփփի մը առանձնաշնորհներն են։ Հը՛, Վերա՛, ի՞նչ կ'ըսես այս պաղափարիս։

— Վերա կը խնդար, Սիկարէթ մը վառեց։

— Ձարժանալի է, ես լալու տնդառնալի որոշումով եկայ հոս եւ ահաւասիկ կը խնդամ։ Կեանքը լեցուն է հակասական երեւոյթներով։

— ...

— Բայց, էմմա՛, ինչպէ՞ս կարելի է կոչել այդ նոր շարժումը մեր մէջ։ Գիտես որ սկզբունքով պէտք է հայացնել ամէն անուն։

— Բնաւ հող մի՛ ընեք այդ մասին։ Կը գտնենք անուն մը։ Ատոր համար պէտք էկայ դիմելու Միխիթարեան միաբանութեան հայրերուն։ Օրինակ, «Հայ (անխուսափելի եւ անհրաժեշտ) կենդանի-մեռեալներու միութիւն»։ Կենդանի-մեռեալ... որմէնչդի պէս բան մը։ Երկար մաղեր եւ տարատ, կամ կարճ մաղեր եւ կարճ փէշեր, կամ կարճ տաբատ եւ երկար մօրուքներ, եւայլն... եւայլն։

Վերա կ'ունենդէր, ակնարկը՝ անորոշութեան։

Յանկարծ կը սկսէր խնդալ։ Վստահ եմ որ կ'երեւակայէր իմ առած իւրաքանչիւր մէկ պատկերա, դերերը բաժնելով իր բարեկամներուն եւ ընկերներուն

միջեւ, սրտանց ծիծաղելով ստացուած արդիւնքներուն վրայ։

Կը խնդայինք տակաւին, երբ բաժնւեցանք։ Կը խնդայինք ուրախ, ազատ, անկաշկանդ։ Մոռցած էինք ամէն բան, ամէն ոք։ Մոռցած էինք մանաւանդ լալ։ Ինչո՞ւ լալ, երբ կարելի է խնդալ։

Տ

— Բայց, Վերա՛... ոպասէ՛, մի՛ երթար, ըսելիք ունիմ տակաւին քեզի։

Ձըռի տակաւին որ արեւը երբեմն կը խաւարի, բայց միշտ կայ... Լուսինը յաճախ կը ծածկուի ամպերէն, բայց դարձեալ կ'երեւի... որ դուն մէկ ժաման ընթացքին, կրնաս թէ՛ լալ, թէ՛ խնդալ...

Սպասէ՛, Վերա՛, մի՛ երթար. Թոյլ տո՛ւր որ խօսիմ, Թոյլ տո՛ւր որ լաւ բացատրեմ ինքզինքս, մանրամասնութեամբ. Թոյլ տո՛ւր, մանաւանդ, որ համոզեմ ես զիս՝ նախ։ Խնդրեմ, մտիկ ըրէ՛... Ի՛նչ չար ես...

Բ. Ո.



ՎԱՐԴԱՆ ԳԵՈՐԳԵԱՆ

ՄՏԱԾՈՒՄԻ ԵՒ ՀԱՌԱՋԱՆՔԻ ՇԻԹԵՐ

Պատիժները օրինականացած սանձադատումներ են, որոնց նպատակն է պաշտպանել ընկերությունը կամ անհատը չարագործներու դէմ:

Արգելափակուած յանցանքներ կրթելու եւ իրենց պիտանքը զգացընել տալու նպատակով եղած ամէն աշխատանք, նպատակ մըն է ընկերութեան եւ մեղանշողներու համար հաւասարապէս: Լրդի քաղաքակիրթ աշխարհը կը հետամտի ատար, այն պարագային սակայն, երբ չարագործներ նենգամտօրէն կը կեղծեն ու ներումի արժանեանալէ ետք կը մզուիմ մոր մեղանշումներու, օրէնքը կը պրկէ իր սանձերը, եւ կրկնակ պատիժներ կը սահմանէ յանցանքներու եւ արդարօրէն:



Միտմանն ու մեղանշումները մարդկային են: Պէտք է աստուածային գառնան սակայն ներումով մեզի ընձեռնուած պատեհութիւնները, սրբազրելու համար քերիներ, յառնալ կոչուած են նուաստացնելու մեզ ու դարձնելու մեր անձը խոտելի ձրիշներու աչիւն:



Տկարներու դէմ գործուած մեղանշումները երբ լայնամտօրէն կը ներուին անոնց կողմէ, յաճախ մեղանշող հօրը կ'արեամարհէ իրեն համդէպ ցոյց տրուած ազնիւ վերաքերումը: Իր այս լրբենի կեցուածքը հետեւում է բարբարոս մտայնութեան մը, թէ մեղանշումը հօրին իրաւունքն է:



Ազնուական հոգիներու համար ներումը անփոխարինելի շնորհ մըն է, անոնք որ ծնած չեն այս առաքինութեամբ, իրենց պիտանքում հանդէպ՝ վիրաւորուած անձերու ցոյց տուած ներդաւանութիւնը կը վերագրեն մըկատումներու ու կը հաստատեն այս կերպով ներումի անարժան եղած ըլլալու պարագայ մը:



Յեղասպան հայրերու կամ մախնիներու յաջորդները մայմբան մեղաւոր են, եթէ չվնտան միջոցները գործուած ռիւրները մեղմացնելու: Գերմանիան քանց Հիթլերի ցեղասպանութեամբ ծակտիմ քուած արատը, երբ ըրաւ հատուցում երեաներու եւ կախաղաններու վրայ քաւել տուաւ իրենց ցարծած մեղքերը բոլոր ռերագործներուն: Թուրքը, յիսուն եւ աւելի տարի-

ներ հտֆ, ո՛չ միայն չ'ընդունիր թալէաքներու եւ ընկերներու հայադինջ ունիւները, այլ կը շարունակէ պատմութիւնը մեղացախելով հայը յանցաւոր ցոյց տալ: Հրեան ներեց Գերմանիոյ, հայը չներեց ու պիտի չկրնայ ներել թշնամիին, ցորչափ սնրագործը չէ ընդունած իր յանցանքը ու չէ հատուցած իր պարտքը:

❖

Քաղաքական ճիւղները պատմութեան մաս կազմելով, չեն մոռցուիր: Ցեղասպաններու յաջորդական սերունդներ պէտք է իմանան այս իրողութիւնը եւ մտցնեն արմատական փոփոխութիւններ իրենց վերաբերման մէջ, համզէպ անիրաւած ցեղերու եւ ազգերու:

❖

Ապրելու կամք ունեցող ժողովուրդ մը, պէտք է մնայ պահանջատէր արեան իր իրաւունքներուն: Միայն տկարները եւ այլասերումի ուղին բռնող ազգերն են, որ ուրանալով ցեղային իրենց արժանապատուութեան դէմ գործուած ամէմ սրբապղծութիւն եւ անարգանք, անյիշատչարութեան մէջ կը փարձեն փնտել միտքարութիւն եւ սփռափնէ:

❖

Տեղ մը մեր մեռելներուն եւ հոգերուն ազազակը պէտք է միացնէ գմեղ իրարու, ստեղծելու համար նիւթական եւ բարոյական այն հզօր ուժը, որ պահանջ է թշնամին զգաստութեան մղելու:

❖

Սփիւռքի հայ գրականութեան համար նախագծուած է այլեւս ուղին: Կարկառելի հայ ստեղծագործող միտքը, ի խնդիր մեր քանակին անկարուստ պահպանման եւ ի փառս հայ համնարի ամէն մարդի վրայ երաշագործութեանց:

❖

Համակերպութեան մէջ մենք կարանցուցինք արմենական ռզին, իսկ երբ փորձեցինք պայքարելով վերականգնել մեր ցեղային մարտունակութիւնը, ծնաւ նոր հայը ու կերտեց հայրենիք:

Վ. Գ.

Գուգնոս-Այբէս

Շ Ո Ւ Ք Ս

Երբ կը փայտի առանձին քիչ մ'արեւոտ այս համբէն,
Թափառայած ու տարտամ իմ փայլերուս համբնքաց,
Ինձ մնան լռութ, անտրտունք, ստուերներէն տարաբեր,
Կը սահի շուքս կարծես հեռունքս՝ լուսաբազմ...:

Իր մութին մէջ կայ ժպիտն հիւսիսափայլ աստղիկին,
Ջուր կը քաշիւն ան տակաւ ծաղկանց՝ շրթն՝ մեք առ շրթն՝ մեք.
Մինչ փայլերուս հասկնալ կը հետեւի ամենիկին,
Ինչպէս սղակ մը երկշուս կառչած մօրը ինքնակն...:

Այսպէս, գուցէ տարինե՛ր պիտի փայլեն միասին
Հալածական, հալածե՛ղ ա՛յլ իմ շուքս թրվոտն,
Դէպի լրումն այս ճամբուն, դէպի հրաշքն արեւին:

Ու երեկոն երբ իջնէ երազի գոյն ու շնորհ,
Գուցէ միտքն ըլլաս դուն իմ խորհուրդիս չափ անհաս,
Գառ ու կորուստդ անդարձ գլխուս վերեւ շնորհ...:

ՔՈՒ ՊԱՏԿԵՐԻՒ ՀԱՄԱԶԱՅՆ

Թշուառակա՛ն, այս համբէն ո՛ւր, դէպի ո՛ւր կը շտապես,
Երազներուդ դաշտերէն փայլէն վերջ ընդերկար...
Ո՛ւր կը փայտիս, հեռաւոր ո՛ր վայրերում անհանգէտ,
Լեւծ աշդպէս երբեմնի ծառուղիներդ դալար...:

Հեւքը կուրծքիդ մաշեցնող քեզ կը տանջէ անընդհատ,
Մունկներուդ պէս ուր արիւնն առատօրէն կը հոսի.
Քարերուն դէմ ապրաստ՛ր ու քարերուն դէմ միմա՛կ,
Ո՛ւր կը վազես, աշխարհէն այսօր խռո՛վ, մեկուսի...:

– Հալածական մարդերէն՝ ես համբարդն եմ հեռագնաց.
Աչքերուն մէջ չե՛ս տեսներ պզտոր լինենք արիւնի...
Իր սէրերէն պարպուած սիրտս անդունդ մ'է վերքի,

Որուն մատիւն իբր ազօ՛թք, ես գրեցի առ Աստուած.
«Ո՛վ քարեգութ հայրըդ իմ, անմահն է քեզ որքա՛ն,
Մարդը գոր դուն կերտեցիր քու պատկերիդ համաճայն»:

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆԵԱՆ

ՍՈՒՐԵՆ ՍԱՆԻՆԵԱՆ

Մ Ի Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ՄԻ ՀՐԱՀԱՆԻ,
ԲԻԳ ԶՈՅԻ
ԵՒ ԱՅԼՈՑ ՄԱՍԻՆ

Բ.

Ինչպէս ամէն մարդ, բարեկացած Սիւզիէն նոյնպէս ուզեց իր զայրոյթը մեղմել ծխախոտով: Նա վերցրեց իմ եւ իր արանքում նստարանի վրայ դրուած ձեռքի սեւ ու մեծ պայուսակը, դրեց սեղանի ոտքի բարակութեան իր դիտերի վրայ եւ մեծ քարը դէմ տալով բացեց այն: Պայուսակի ներսից մի տուփ ծխախոտ հանելով, նա մէկ հատ ինձ առաջարկեց, մէկ հատ էլ դրեց իր բերանի անկիւնում, եւ նորից պայուսակի ներսը նայեց: Հասկանալով, որ նա լուցկի է փնտրում, ես ցաւ յայտնեցի, որ լուցկի չունեմ: Սակայն նա դէմքն առանց պայուսակի ներսից կտրելու, ձեռքով նշան արաւ, որ ես չփորձեմ անհանգստանալ եւ վրի ծուռմից խռպուեմ ձայնով ասաց.

— Ո՛հ, ո՛հ: Մենք մեր ծխախոտները Բիգ Զոյի հրահանով պիտի վառենք: Իմ անզուգական Բիգ Զոյի կրակով...

Բայց նա հրահանը չէր կորոզանում զանեւ եւ չկարողացաւ դանել:

— Ո՛հ, է՛հ հրահանը, — խիստ, շատ խիստ, նստարանակցիս հարցրեց Սիւզիէն:

— Հրահանը, — հրեշտակի դէմք ընդունեց նստարանակիցս:

— Այո՛...

— Ի՞նչ հրահան...

— Բիգ Զոյինը...

— Քեզ մօտ է, — այս անգամ աչքերն արագ-արագ թարթել սկսեց նստարանակիցս:

— Ինձ մօտ չկայ:

— Զգիտեմ, — ուսերը վեր հանեց, մէկ վայրկեան վեր պահեց եւ ուղիւ հառաչանքով վար բերեց նստարանակիցս:

— Էլի՞ թոցրել ես...

— Ա՛հ, Սիւզի՛, — կնոյրը յանդիմանեց նստարանակիցս եւ յիշելով որ երկուր ժամանակ կոշիկների ծայրերին չի նայել, ոտքերը իրար միացրեց վեր հանելու համար...

Սիւզիի բարկութեանը սահմանը անցաւ: Ոտքով խփեց նստարանակցիս սրբունքներին եւ ճշաց.

— Ասում եմ, տո՛ւր հրահանը...

Սա, որ Սիւզիին չէի սիրում, բայց եւ այնպէս ուզում էի, որ նա յետ առնէր հրահանը:

— Hone'y... — քիչ-քիչ վեր հանած ոտքերը դնելով, ձեռքերը աղաչական կրծքին ծալեց նստարանակիցս:

— Ասում եմ, տո՛ւր հրահանը, — այս անգամ տեղից ելնելով, նստարանակցիս առջեւը յարձակողական կանգնեց պահանջատէր Սիւզիին:

— Հրահանը երեւի ծաղարանում ես թողել, դնամ բերեմ, — տեղից պատրաստակամ ուղեց ելնել նստարանակիցս:

— Նստի՛ր: Մաղարանում ես հրահան չեմ դորձածել:

— Դու ախտեղ, ամէնից քիչը, քսան դաշնիկ ես ծխել:

— Իմ գլանիկները իմ երկրպագուներն էին վառում: Ասում եմ տուր հրահանը...

— Համի՛ր...

Սիւզիի համբերութիւնը հաստաւ։ Եւ նա վճռեց երկրորդ անգամ պատժել նըստաբանակցիս, ինչպէս որ պատժում են շար ու յամառ մի ստահակի։ Նա բարձրացրեց ոտքը եւ խփեց նստաբանակցիս ծունկին։

— Ա՛ռ քեզ համի՛ր... Տո՛ւր հրահանք...

— Ա՛ռա... — ցաւից ճշաց եւ երկու ձեռքով ծունկը բռնեց չէզ նստաբանակցիցս, — Ա՛ռա... Oh, Honey, it hurts me!

Սակայն Սիւզիին զբաւեցրեց չաւաղանայութիւնը։ Տեսնելով, որ ամուսինը գրեթե ծնկանն է իջնցրել եւ յարմար գէրջ տըւել հարուածելու համար, նա երկու ձեռքով բռնեց պայուսակի երկու անկիւններէն, ինչպէս զբաւեցրանի փորձը։ Եւ աղբիւններ բռնում մի հաստ գրգռեց եւ գլխից էլ վեր բարձրացնելով, իջեցրեց նրա գլխին։

— Թրա՛խկ...

Այստեղ իրաժամանակ մի քանի բան կատարուեց։ Նախ, եւ հասկացայ, թէ ինչու նստաբանակցիս գլխարկը ջարդուած էր, երբ եւ նրան տեսայ առաջին անգամ։ Յետոյ, մի սկիւռ հարուածի ձայնից անքան վախեցաւ, որ սուր ճշուցով ծառը բարձրացաւ։ Հարուածից նըստաբանակցիս գլխարկը նրա աչքերից էլ վար իջաւ եւ էլ նա վեր հանել չէր կարողանում այն։

— Ա՛հ... — յանուն Սիւզիի հանգէպ ունեցած իր սէրին, յանուն այդ անպիտան հրահանի, իր գանկի վրայ կուտակուած ցաւից անքաջ նստաբանակցիցս։

Բայց այդ չէր կարելորդ։ Կարելորդը նրա չոր գանկի դիմացկունութիւնը չէր, որ երեւի վարժուել էր, այլեւ Սիւզիի հարուածի ուժգնութիւնը։ Սիւզիին, երեւի, ինչքան որ թոյլ էր իր կրծքի, կոնքի եւ դիտերի մասերում, այնքան, ինչպէս երեւում էր, ուժեղ էր իր թեւերում։ Որովհետեւ Սիւզիի հարուածի թափից բացուեց նրա պայուսակը եւ ամբողջ պարունակութիւնը դուրս թափ-

ւեց։ Էլ ինչե՛ր չկային այդտեղ։ Մազերի ներկ, աչքերի ներկ, շրթունքների ներկ, դէմքի դոյնդոյն ներկեր։ Մի քանի փոքրիկ հայելիներ։ Մի ազատութեան կինակ։ Նիհարացման դեղահատեր։ Պըզընձեայ եւ արծաթեայ դրամներ։ Մազերը գանգրացնելու մի քանի ունելիներ։ Թեւը փախած գուլպաներ։ Ուխակի մի փոքրիկ շէշ տղամարդու զրպանի համար։ Կտրուելուց ապահով մի անելի։ Մի նշարակ։ Անուշահոտութեան մի քանի շէշեր։ Դէմքի փոշու մի տուփ, որը քացւեց եւ փռելով ծածկեց նստաբանակցիս գլխարկը եւ ուսերը։ Սանրե՛ր, սանրե՛ր եւ ծխախոտի գոյնդոյն բաղձաթիւ տոփեր։

— Ah, you sh—! Իրերս թափուեցին, — նստաբանակցիս հասցէին անվայել, շատ անվայել բառ գործածեց Սիւզիին։

Եւ ուղեցի օդնէլ նստաբանակցիս գլխարկը իր պատշաճ տեղը բարձրացնելու համար, բայց շարեցի այդ, մտածելով, որ ուրիշի ընտանեկան գործերին խառնուած կը լինի։ Սակայն վճռեցի օգնել Սիւզիին թափուած իրերը հաւաքելու մէջ։ Սիւզիին կին էր եւ կոտորունների մէջ թոյլ կողմն էր։ Մինչ եւ թափուած իրերն էի հաւաքում, տեսայ որ նստաբանակցիս գլխարկը յետ քաշեց աչքերից, միտ կողմից էլ Սիւզիին բռնեց նրա փողկապից եւ նշարակը դէմ տուեց նրա վզին։

— Տո՛ւր հրահանք...

— Վա՛յ, ծաղում է, — ձեռքերը վզի դիմաց շարժել սկսեց նստաբանակցիս։

— Աւելի շատ կը ծաղկի, եթէ շտապ հրահանս, — զայրոյթից հեւալով ասաց Սիւզիին։

— Յետ քաշի դռնակը, զրպաններս նայեմ, — համաձայնեց, գող, անիրաւ եւ ուրիշի իբր յափշտակել ցանկացող, նըստաբանակցիս։

— Շուտ արա՛, — նշարակը էլ աւելի առաջ տարաւ, — անխիղճ Սիւզիին։

Նստաբանակցիս տնքաց-տնքաց եւ իր հագուստի ինչ-որ անյայտ տեղից հանեց հրահանք եւ պարզեց կնոջը։

— Ա՛ն, չգիտեմ ինչպէս է եղել, որ եկել իմ գրպանը մտել:

Սիւզին շատաւ հրահանը, այլ խելաց նրա ձեռքից: Խից, ճանկուելով նստարանակցին գողգողացող մասները: Եւ նորից ծիծաղեց, սարսուռ բերելով վրաս: Միծաղեց խման, կանացիութիւնից զուրկ, դիւային մի արարածի ծիծաղով: Եւ եւ նորից ատելութիւն ունեցայ դէպի այդ կինը:

Սիւզին նստեց, եւ բացելով հրահանի կապիւրդը, մատը քսեց նրա վրաքրքիկ անիւի վրայ:

— Դ՛ը՛, ք՛ը՛...

Քի ուղում էի, որ հրահանը չվտուռէր, բայց վառուեց: Սիւզին նախ վառեց իմ դէմքի վրա եւ յետոյ իրենը: Վառեց ծխախոտը, ծուխը ներս քաշեց, եւ էլ ծուխը յետ չեկաւ: Այն ժամանակ միայն հասկացայ, թէ ինչու գեղեցկուհի՝ Սիւզին որովայնի այդքան մեծ էր: Սիւզին նորից ծուխը ներս քաշեց եւ նորից ծուխն անյայտացաւ նրա ներսում: Եւ զարմացել էի: Բայց, երբ նա խօսել սկսեց, ծուխը պարանոցայան սկսեց դուրս գալ նրա բերանից եւ քթանցքներից:

— Այս հրահանը պատկանում է Բիդ Ջոյին եւ դրա համար էլ այդքան թանկագին է ինձ համար, — ասաց նա, — աւելի ճիշդը եւ եմ նուէր արել նրան: Բիդ Ջոն սիրում էր ծխել, եւ միշտ լուցկի էր փնտրում: Եւ երբ էլքս դառնում բարկանում էր: Well: Մի օր էլ նրա ծննդեան օրուայ առթիւ այս հրահանը նուէր արեցի նրան: Այս ծեր շունն էլ ներկայ էր, — գլխով նստարանակցին կողմը նշան արաւ նա, — նախանձից քիչ մնաց ընկնէր ու սատկէր (դեռ այն օրերից սիրահարուել էր վրաս): Բիդ Ջոն շատ աւրախացաւ ու դարձաւ այս ծեր շանն ու ասաց:

« — Hey, Mister, don't you think that Susie is an angel? »:

— Բիդ Ջոյի ձերբակալումն այնքան արագ կատարուեց, — իր խօսքը շարունակեց խման ու այլանդակ Սիւզին, — որ

նա մոռացաւ այս հրահանը իր հետ վերցնել, որ իմ նուէրն էր եւ այնքան սիրում էր: Մի քանի օրից յետոյ տեսակցութեան դնացի եւ հրահանը հետս տարայ, բայց քննիչը թոյլ չտուեց յանձնել:

« — Oh, beautiful lady!, — ասաց նա, — Բիդ Ջոյին դուք աւելի լաւ էք ճանաչում: Եթէ նա այս հրահանը ունենայ բանտը կրակի կը տայ: Հետն էլ աւելի մեծած թանաքակաշններին, բայց այս բանտը նորակառույց է եւ տանքերդու միլիոն տուր է արժեքել կառավարութեանը, կ'այրուի մոխիր կը դառնայ... Մեր զօրավար նախագահն նուէրն է... »

— Բայց Բիդ Ջոն ծխող է, սիրում է ծխել, — ասացի, — նա ինչպէ՞ս պիտի վառի իր ծխախոտները:

« — Գիտեմ, — ասաց քննիչը, — նա իր ծխախոտները վառում է խուցում յատկապէս պատրաստուած ելեկտրական մի յարմարանքից: »

— Այս հրահանը իմ նուէրն է Բիդ Ջոյին, — ասացի:

« — Գիտեմ: Բիդ Ջոն այնքան իր ձերբակալման մասին չի մտածում, ինչքան այդ հրահանին... Եւ այդ հատկանշաւի է... Եթէ եւ Բիդ Ջոյի տեղը լինէի, նոյնն էլ եւ կ'անէի: Բայց պարզ է, որ եւ ուշացել եմ, — հառաչեց քննիչը: »

— Այդ ժամանակ երկու զինուած պահակներ Բիդ Ջոյին ներս բերեցին:

« — Սիւզի՛... », — կանչեց նա աղեկտուր, — Susie, my sweetheart!

— Մենք իրար դիրկ ընկանք, եւ ես տեսայ, թէ ինչպէս քննիչն ու երկու պահակները զաղանօրէն սրբում էին իրենց աչքերը: Երբ բաժանման բոլորէն եկաւ, քննիչը ձեռքը Բիդ Ջոյի ուսին դրեց եւ ասաց անկեղծօրէն:

« — Բիդ Ջո, երբ դու տիկին Սիւզիի գեղեցկութեան, խելքի, կանացիութեան, նուիրութեան մասին էիր խօսում, եւ լսում էի ու չէի հաւատում: Մտքումս ասում էի, այդպիսի պատմութիւններ շատ եմ լսել... »:

« — Իմ Սիւզին մէկ հատ է, — մըռնընչաց Բիդ Ջոն, ընդհատելով քննիչին:

« - Ես էլ այդ էի ուզում ասել, - ասաց քննիչը, - հիմա, որ տիկին Սիւզիին տեսայ, նախանձեցի քեզ, Բիլ Ջո, որ արժանացել ես այդ չքնաղ կնոջ այդքան տաք սէրին: Այդ սէրը վայելելուց յետոյ, մեռնելը, որ շատ դժուար բան է, քեզ համար շատ դժուար էր լինի, նախանձեցի Բիլ Ջո... »:

« - I won't die! », - գոռաց Բիլ Ջոն:

« - Դու չես կամքով շարժուի մեռնես, Բիլ Ջո, այլ քեզ պիտի մեռցնեն, Բիլ Ջո, - շարունակեց քննիչը, - այդ էլ ասեմ, որ քեզ պիտի մահով չեն մեռցնելու: Բայց միևնույն ժամանակ չը նորհալալ եղի, որ ասելի տառապանք մահուան մասին դեռ օրէնք չի ընդունուած, բախտաւոր Բիլ Ջո: Ուրեմն շատ պնդ, որ դու առիթից օգտուես եւ համեմատաբար թեթեւօրէն բաժանուես այն աշխարհից, գեղեցկուհի Սիւզիից եւ այլ բաներից:

« - I won't separate from Susie! », - ձեռքը ծանրութեամբ սեղանին խփեց Բիլ Ջոն:

« - Ես էլ Բիլ Ջոյից », - ասացի ես:

« - Ո՛հ, սիրելի տիկին, ցաւում եմ ասելու, որ դուք ստիպուած պիտի լինէք բաժանուել, որովհետեւ Ջոն ախպիսի մի տեղ պիտի գնայ, ուր ուղարկուած են տղանց մի ուրիշ կամաւոր ուղեկցութեան », - ասաց քննիչը:

« - Ես մի աշխպիսի տեղ չեմ ուզում գնալ », - հակառակեց Բիլ Ջոն:

« - Բայց դու պիտի գնես, - ասաց քննիչը, - եւ ես վստահ լինելու համար ներկայ պիտի դնուեմ իմ ճամբորդութեանը: Քեզ կա՛մ էլեկտրականութեամբ պիտի մեռցնեն, այսինքն՝ այնքան էլեկտրականութիւն պիտի հոսեցնեն ներսդ, որով կարելի էր մի ամբողջ պալատ մի ամբողջ գիշեր լուսաւորել կամ էլ դադարեցնել, թունաւոր շոգիով քեզ մլուկի նման պիտի թունաւորեն, շնչահեղձ անեն... Հիմա, դու ինձ ասա, մեռնելու այդ տեսակներից ո՞ր մէկն ես ընտրում, որպէսզի չես ընտրութիւնը ես

իմ թղթերի մէջ նախօրօք արձանագրեմ եւ առ որ անկէ ներկայացնեմ... »:

« - Ոչ մէկը », - գոռաց Բիլ Ջոն: Ներկաները ծիծաղեցին:

« - Այդպէս չի լինի, Բիլ Ջո, - ասաց քննիչը, - երբ քեզ ընտրել տալարկեցի, գիտցիր որ գեղեցկուհի Սիւզիի համար արեցիք »:

« - Ես էլ հինց Սիւզիի համար է, որ ոչ մի ընտրութիւն չեմ կատարում, որովհետեւ ոչ մի ձեւով չեմ ուզում մեռնել », - ասաց Բիլ Ջոն:

« - Գիտեմ, - ծիծաղեց քննիչը, - այդ ո՞ր ապուշն է, որ գեղեցկուհի Սիւզիին թողած, ցանկանում է մեռնել: Բայց քեզ պիտի մեռցնեն, Բիլ Ջո եւ իմ բարեկամական խորհուրդն է քեզ, որ հիմա կուսանից հաշտուես այդ մտքի հետ, որպէսզի այս շնախարհիկ կնոջը կոնիծ չգտանաւես: Միշտ մտքումդ ունեցիր, Բիլ Ջո, որ քեզից յետոյ թողնում ես մի չքնաղ կին, որին դու սիրել ես, եւ նա էլ քեզ է սիրել: Միթիթարուի՛ր այն բանով, որ դու ես մեռնողը, իսկ նա ապրողը, եւ ոչ հակառակը: Բախտաւոր մարդ ես, Բիլ Ջո: Այս աշխարհում մի հրեշտականման կնոջ հետ ես ապրել, որը երեւի իր անմահ ժայնով երգել է քեզ համար: Այն աշխարհումն էլ, նորից հրեշտակները պիտի երգեն քեզ համար »:

« - Միթէ՞, - այն աշխարհում Բիլ Ջոն հրեշտակներով չըջապատուած պիտի լինի », - հարցրի:

« - Կը լինի, տիկին, կը լինի, - վստահեցրեց քննիչը, - ես բանտային ֆահանային կը խնդրեմ, որ նա այդ բանը կարգադրի »:

- Սակայն, Բիլ Ջոն փաթաթուել էր ինձ եւ գոռում էր, թէ ինքը չի ուզում մի անծանօթ աշխարհ գնալ, ուր եւ թե՛րեւս դանձարկղեր չկան եւ հրեշտակներն էլ ինձ չափ դեղեցիկ չեն... Նա ուզում է այստեղ մնալ եւ ինձ հետ ապրել... Առանց Սիւզիի ես այն աշխարհում չեմ կարող ապրել եւ ինքնասպան կը լինեմ », սպառնում էր խեղճ Բիլ Ջոն... Եւ, երբ նրան տարան, դեռ երբ-

կար ժամանակ բանտի միջանցքներից լսելի էր նրա կանչը։

« — Susie, my love! — Susie! »:

— Երբ տուն եկայ, — իր խոսքը վերջացրեց առարարախոս Բիզ Ջոյի սիրտը կրակի պես Սիւզին, — այս Old Dogը իմ բնակարանում նստած ինձ էր սպասում։ Նա ուռեւել էր բերել, իմիջի, ծխախոտ եւ սիգարայաւառակ։ Ինձ սենսաւ թէ չէ, ձեռքերը իրար քսեց եւ սկսեց մոլորակի անասնէի ձայնով աղղտըղու ու ինձ սիրաշահել... Թո՛ւհ, անպատկա՞ւ...

Ամէնքս լուռ էինք, երբ նստարանակիցս շարժուեց սեղում, հազաց եւ բռնեց Սիւզիի թեւք։

— Honey, զնանք ծաղարան...

— Get lost and leave me alone, — թեւք թափով նրա ձեռքից հանեց Սիւզին։

Այդ ժամանակ էր, որ մշուշի միջից երեւացին երկու հոգի։ Մօտ տասն քայլի վրայ նրանք կանգնել էին եւ Սիւզիին վրիթ նշաններով իրենց մօտ էին կանչում։

Սիւզին ծիծաղեց եւ նորից ամբողջ մարմնով նողկանքի սարսուռ անցաւ։

— Դրանք իմ երկրպագուներն են։ Առանց ինձ դրանց կեանքը ոչինչ բան է, — ինձ բացատրեց Սիւզին եւ զարձաւ մշուշի մէջ կանգնածներին, — Hello, boys!։ Ի՞նչ կայ-չկայ...

— Տիկին Սիւզի, խնդրում ենք, որ մէկ բոլկով մեզ մօտ գա, — ասաց մըշուշի մէջ կանգնածներից մէկը։

Նստարանակիցս տեղից վեր թռաւ։

— Ես չեմ ուզում, որ դու գնաս...

Սիւզին այնպէս զարմացաւ, որ կարծես ինքը մի թաղուհի էր, իսկ նստարանակիցս նրա ծառան, որ այդ բանն ասաց։

— Why not!,- իր տոմարական ծիծաղով ծիծաղեց նա։

— Honey!,- ձեռքերը կրծքի վրայ ծալեց նստարանակիցս, աղաչական։

— Sit down!,- շատ խիստ բարեկացաւ Սիւզին։

— O. K.!: — O. K.!: — Համաձայնեց

նստարանակիցս եւ նստեց։

Սիւզին իր շունեցած կոնքը օրօրելով դնաց։ Գնաց կանգնեց մշուշի մէջ դանդաղների մօտ եւ նրանք թողեցին ու հեռացան։ Գիշ յետոյ մշուշի մէջ կանգնածներից մէկը մեզ մօտ եկաւ։

— Տիկին Սիւզին իր պայուսակը մոռացել է այտեղ, — ասաց։

Ես կողքին նայեցի եւ նոր միայն տեսայ, որ իրապէս Սիւզիի պայուսակը նստարանակիցին ծնկերի վրայ է դրուել։

— Իմ կողմից կեղծ ասէք, որ թող չլսաւ ինձ համար լուս վերադառնալ, թող դքսն ինչքան ուզում է, ես այդ թոյլատրում եմ, — պայուսակը եկուտորին յանձնելով ասաց նստարանակիցս։

— Կ'ասեմ, — քմծիծաղով խոստացաւ եկուտը եւ հեռացաւ։

— Դժուար բան է գեղեցիկ կին ունենալ... Բայց իմ հոգը չէ... Սիւզին ինչքան որ գեղեցիկ է, այնքան էլ հաւատարիմ է ինձ... Նա սիրում է ինձ... Շա՛տ...,- ասաց նստարանակիցս եկուտի հեռանալուց յետոյ։

— Անշուշտ, — ասացի։

Նա ոտքերը իրար միացրեց, վեր հանեց, նայեց նրանց ծայրերին եւ ծիծաղեց ինքնադու։

— Սիւզիին դուք տանը պիտի տեսնէք, երբ մենք տունն ենք։

« — Ջան, — գրկում է գլուխս նա եւ նայում աչքերին, — Ջան, եթէ ես հարիւր կեանք ունենայի, հարիւրն էլ պիտի ուզեմայի քեզ հետ անցկացնել ու միայն քեզ հետ ապրել »:

« — Սիւզի՛, — ասում եմ ես, — ես քեզ արժանի մարդ չեմ։ Գեղ արժանի են մեր երկրի միլիոնատէրերը, մեր երկրի նախագահները, աշխարհի թագաւորները... »:

« — Ջա՛ն, — ասում է նա, — դու ե՛ւ իմ միլիոնատէրն ես, ե՛ւ նախագահը, ե՛ւ աշխարհի թագաւորները »:

— Յիշանիկ մարդ էք, — ասացի, որովհետեւ, կարծում էի, որ պէտք էր մի բան ասէի։

— You don't say!,- ասաց նա եւ գրպանից հանելով ծխախոտի տուփը ինձ

մեկնեց, — ծխենք մէկ-մէկ հաստ:

— Այո, բայց կրակ չունենք, — մի ծխախոտ վերցնելով ասացի ես:

— Կրակ չունենք, — զանաւորէն ժպտալով հարցրեց նա, — պարոն, դուք մոռացել էք Սիւզիի ինձ նուէր արած հրահանի մասին, — ասաց նա եւ մեծ հրճուանքով գրպանից հանեց այն հրահանը, որ քիչ առաջ Սիւզին դանակը դէմ տալով նրա վզին առել էր ձեռքից:

— Բայց, պարոն...

— Խնջ...

— Այնչէ, — ասացի, — ոչինչ... Սա-կայն եւ...

— Գիտեմ ինչ էք ուզում ասել, — ընդհատեց նա ինձ, — Սիւզին երիտա-սարդ է եւ զեղէցիկ: Եւ որպէս այդպի-սին, նա ունի իր ժամայնները: Քիչ առաջ մեզ Բիդ Ջոյի մասին պատմումները ինքը յորինեց, ինձ բարկացնելու նպա-տակով: You know? Երբ մի կին շատ է սիրում իր ամուսնուն, նոյնքան շատ սի-րում է նրան բարկացնել...

— Բարկացնել ինչու՞ համար, — հար-ցրի:

— Նա անմիջապէս չպատասխանեց: Բարձրացրեց հրահանի կափարիչը եւ մեծ մատով դարձրեց փաթեթիկ դործիքի անիւք:

— Քը՛ս, չը՛ս...

Հրահանը վառուեց փաթեթիկ լոյս տարածելով այլեւս խտացող ու մեղ պա-րուրող մշուշում: Մենք վառեցինք մեր ծխախոտները: Նստարանակիցս զգուշու-թեամբ պահեց հրահանը եւ կատարեալ հանգստացողի նման ընկաւ նստարանի յենակին ու տարածեց թեւերը:

Եւ արդէն մոռացել էի իմ կողմից նրան ուղղուած հարցումը, երբ նա խո-սեց այդ մասին, դիմացը նայելով, կար-ծեա պարաֆէի ծառերին եւ նրանց վրայ նստած սկիւտներին բացատրելով:

— Կինը սիրում է իր սիրած տղա-մարդին բարկացնել, որովհետեւ ցանկա-նում է նրա ուշադրութիւնն իր վրայ դարձնել... Սիւզին, որ կանացիութեան խտացում է եւ որի հոգին այս մշուշի պէս նուրբ է...

Թիչեցի Սիւզիի ծիծաղը եւ նորից փշաքաղութիւ: Ծխախոտ հատել էր ար-դէն եւ ետ պէտք էր դնայի: Ոտքի ելայ եւ ընդհատելով նրան ասացի:

— Հաճելի էր մեր հանդիպումը, պա-րոն: Մանաւանդ որ պատիւ ունեցայ ծա-նօթանալու ձեր ազնուական կնոջ հետ: Խնդրում եմ իմ սէրը, իմ յարգանքները, իմ բարեւանքն ու խոնարհութիւնները փոխանցէք ձեր պեղանի տիկնոջը, որի հաճելի ու ջերմ ներկայութիւնը ես պա-տիւ ունեցայ վայելելու, թէեւ կործ ժա-մանակով, բայց այնքան բարեսիրտօրէն ինձ շնորհուած:

Նա նոյնպէս ոտքի ելաւ եւ ասաց:

— Նոյնպէս ինձ հաճելի էր ձեզ հետ ծանօթանալս, պարոն: Անշուշտ, ձեր յարգանքների հաւատարմացումները ես կը վերականգնեմ իմ այնքան սիրելի կնոջը, ո-րը շատ նրբազգաց է եւ բարի: Ասեմ, որ Սիւզին պիտէ ջերմացնել հոգիները մե-նակեաց մարդկանց եւ կեանքը նրանց համար հաճելի դարձնել: Սիւզին դիտէ իր կանացի հմայքը վեհանձնօրէն բա-ժանել տղամարդկանց միջեւ: Մասնաւո-րելով խօսքս, ասեմ, որ ես նկատեցի, թէ ինչպէս Սիւզին առանձին ուշադրու-թիւն էր ցուցաբերում ձեր նկատմամբ: Գուցէ այն հաղուագիւտ բախտաւորներից մէկն էք, որ արժանացաք Սիւզիի առան-ձին համակրութեանը...

Եւ սարսափեցի եւ շտապեցի հեռա-նալ:

— Շնորհակալութիւն, պարոն...

— Ամէն ինչ կարգի են, — ասաց նա:

— Յետեւութիւն, պարոն, — ասացի:

Եւ մենք, մայրաքաղաքում ապրող երկու «Վէնալումէններ» վայել բարեկիրթ հանդիսաւորութեամբ, մեր ձախ ձեռքե-րը դրեցինք մեր մէջքերին, միատեղ շարժումով մեր աջ ձեռքերով հանեցինք մեր գլխարկները, մի պահ իրար դիտե-ցինք ու մեր մէջքերը ծռելով եւ մեր գլխարկներն ալից ձախ տանելով, միմ-եանց խոնարհութիւն արեցինք:

Ս. Ս.

(Շար. Յախորդ Քիւեմ եւ Վերջ)

ՎՈՍՍԹԱՆԺԻԱ ԻՆՏԻԱ

Գիտելի՞ք արդեօք, Նինայ սը Մուսեսա,
Սեւ երգի ջրվէժ, գիտելի՞ք արդեօք
Երբ փարձ կ'ընէիր քու «Էսքրեանման»
Սարսըռում ձայնիդ երանգները շոգ:

Մէկ ու կէս ժամ է մօտդ եմ տես,
Այս ուրկէ՛ տնչափ խորք ու ներշնչում,
Հմայֆիդ ափը չեմ ուզեր երթալ
Ուրիշ քան կ'ուզեմ պառա՛լ այս պահում:

Կը զգայի՞ր ինչպէս Սպանիան հեռու,
Երկիրդ սիրտի, պարագ աւիւնի,
Անշարժ կանգնած էր քեզ ունկնդրելու
Շեշտերդ հպարտ՝ Մուսեսայի սրդի:

Եւ ես զգացի՛ խորքերէդ պայքած
Ա՛ր Էսքրեանման, երբ յորդ յայտ կայ,
Ոչ մէկ սիրտ այլեւս հեւք է անմարագ,
Ալ չի պարտութիւն ոչ մէկ Արմատա...

... Լոյսերուն մէջ հիր՝ կրակի կախարդ
Կ'երգէի՞ր նաեւ տանջանքներ շոգ,
Իմ Էսքրեանման, հեռացած Մուսեսա,
Նինայ սը Մուսեսա, զգացի՞ր արդեօք...

ԽՈՐԱԳԻՐԸ՝ ԻՐԱԽ ՈՐ

Չտեսց աչքս տանդ մանապարհին,
Սիրտս հասակիդ շուֆին՝ չդողաց,
Սեւ երակն հեռու մայրերուն մօտիկ՝
Մեր ռոմանսերի քննութեամբ չեռա՛ց:

Յանախ տնկատնում գրոյցներ քացինք:
Վիճեցա՛նք: Շատ աչ զատաւարանին
Աստիճանները արագ հաշուեցինք,
Հագար կախման կէտ քաղած սեղանին:

Բայց մինչեւ հիմա խելքս չհասաւ
Թէ ինչու՛ այդքան ցնցուեցար երէկ,
Թէ ինչու՛ ա՛յդքան ցնցուեցար երէկ,
Երբոր ընկերոջ մը հետ իջայ պար
Ճիշդ այնչափ ուրախ՝ ինչքան քեզի՛ հետ...

ՎԵՀԱՆՈՅԵ ԹԷՔԵԱՆ

1968, ՊԷՐՍԻՔ

ԱՐԱ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԱՅՈՒ ԱԶՔԵՐ

Ինքնաշարժը կը բարձրանայ զուգեղանակա՛ն լիռնային ճամբաներէն: Կ'երթամ Տէնիքըն՝ հին կարօտ մը սեղմած սըք-ախս:

Կ'երթամ Զուգեղանո՛յ արեւմտաքին կորստած գիւղ մը: Կ'երթամ տեսնելու քրոջս աղջիկը՝ որ եօթը տարի առաջ էր հայտնաբերել ծածկեց երկար թարթիչներով ու ըսաւ անբռնկա՛մբ:

— Մի մեղադրիր դիս, քեզի՛, կը սիրեմ այդ զուգեղանոցի ուսուցիչը: Որոշած ենք ամուսնանալ:

— Բայց, Շուշի՛կ, լաւ մտածէ՛, դուն հայ, ան օտար:

— Բայց, կը սիրեմ...

Մարաթայ սա՛ր էղնի քըզի պահապան:

Աստուր պապի հպարտ ձայնը կ'իյնայ զուգեղանակա՛ն ասֆալթին վրայ, ու հեզանք մը դաժանօրէն կ'արձագանգէ մտքիս մէջ: Մոռցած եմ շուրջս, ու մըտովին կը խօսիմ տասներու տարի առաջ մահացած Աստուր պապին հետ:

«Հէ՛յ, Աստուր պապօ՛, հաշ մը իզէր տեսնէր թէ քու ձագեր իմալ են էղէ բաժան-բաժան: Շուշիկ օտարի հետ է կարգուէ. Զաւիկ զացեր է Պիլճիքա, Վարդան լէ՛ Ամերիկա: Ես լէ՛, ահա, կարուկ սրտով կ'երթամ Տէնիքըն, որ տեսնամ զՇուշիկ ու դըռն թոռան որդին՝ Գարլը:»

❖

❖

Սասուն, Հալէպ, Տէնիքըն... Երեք սերունդ. երեք զաւակ. հպարտութի՛ւն, արիւն-աւեր, օտար ափեր ... ու Տէնիքըն:

Ինքնաշարժին առաջ վազող ընթացքին հետ, միտքս կ'երթայ ետ, կը հասնի Հալէպ զաւակի թիւիչ հայաչափ թաղի այն տունը, ուր ծնաւ Շուշիկը՝ իր սասունցի պապին ու մամին օրհնարեր նայուածքին տակ:

— Աստուա՛ն աշուին քու վըրէ՛ն էղնի, բո՛ւ թոռնիկ: Թաւ ու տու՛ման չտեսնա՛ս:

Ճամբու աղին դրուած ցուցատախտակը՝ որու վրայ գրուած է «Տէնիքըն», ապտակի մը պէս կը զարնուի նայուածքիս ու կը ցրուէ մտածումներս:

Տեսնենք՝ կարմիր կղմինտրներով ու ծաղկած պարսկականով պնուած՝ շարուած են իրարու մօտ: Սիրտս կը սեղմըւի. անոնցմէ մէկուն մէջ կ'ապրի սիրելի Շուշիկը:

Ինքնաշարժը կը կենայ գիւղի փոքրիկ հրապարակին մօտ: Կ'իջնեմ վար:

Շարժավարը՝ նայելով ձեռքի հասցէին՝ ցոյց կու տայ հրապարակէն մեկ-

նող ճամբաներէն մէկը: Գերմաներէնով
կը բացատրէ տան անդը. բան չեմ հաս-
կընար. կը ժպտիմ ու գերմաներէն գիտ-
ցած սասը բառերէս ամենազործածակա-
նը կը նետեմ առաջ:

— Տնայի՛ր 20էն:

— Պիքթը 20էն, — կը պատասխանէ
ջաղաքավարութեամբ:

Կը վերցնեմ պայուսակն ու կը մըտ-
նեմ ցոյց տրուած ճամբուն մէջ:

Տեղացիները զարմանքով ու ժպտով
կը գիմաւորեն անծանօթիս անցքը: Պահ
մը ետք, երբեքստարգ մը նշմարելով չը-
փոթանա, կը մօտենայ ու գերմաներէն
հարցում մը կ'ընէ: Կ'ենթադրեմ՝ թէ եր-
թակէք տեղս կը հարցնէ:

— Ասալի՛ք ձեռքի՛ն, — կ'ըսեմ, ցոյց
տալով ձեռքի հասցէս:

Երբեքստարգը կը ժպտի, ու զիս կ'ա-
ռաջնորդէ քսան քայլ անդին՝ գտնուող
տնակի մը մօտ:

Դողացող մասնիկով կը քաշեմ զան-
գի լղթան: Պարտէզի դրան ճաղերու ա-
րանքէն սրտատրոփ կը նայիմ կղմինտրէ
տան դոց դրան, ուրկէ պիտի տեսնեմ
Շուշիկին գէմքը: Կը բացուի գուռը ու
տարեց կիւն մը զարմանքով կը յառաջա-
նայ գէպի անծանօթ այցելուն: Բայց հին
ծանօթ մը յիշողի պէս յանկարծ կը կե-
նայ, կը ժպտի, ու ցուցամատը մեկնե-
լով իմ կողմս կ'ըսէ:

— Օնէլ Արամ, իսա՛ զո՞:

Ու առանց սպասելու պատասխանին,
առանց բանալու պարտէզի դուռը, աղ-
մըկելով կը վերադառնայ ներս, «Օնէլ
Արամ» զաւուստը յայտնելու Շուշիկին:
Պահ մը ետք, Շուշիկը թեւերու մէջ
էր: Զիստեցաւ. լացաւ: Յուզումը սեղ-
մեց կոկորդս, դողացին լըթներս: Բայց
երբ թաց աչքերը բարձրացուց կուրծքիս
վրայէն, ուղեցի թեթեւեւ մթնոլորտին
ծանրութիւնը, ու հայերէն խօսքեր թըր-
թըռացին հեռաւոր Զուրիկերիոյ Տէնիքըն
կողման կորսուած դիւզին մէջ:

— Ինչպէ՞ս ես, Շուշիկ:

— Հաւ եմ, քեռի՛:

Նոր նշմարեցի, թէ մեր մօտն էին
նաեւ Շուշիկի ամուսինը՝ Ատուլի, իր

հայրն ու մայրը՝ քիչ առաջ զիս գիմա-
ւորող տարեց կիւնը: Շուշիկ պատմած էր
իրենց Օնէլ Արամի մասին ու ցոյց տը-
ւած լուսանկարս:

Մտանք ներս: Փոքրիկ սեղանի մը
ետեւ, շրաներկի տուփին ու տետրակին
վրայէն բարձրացաւ հինգ տարեկան
Քարլի զլուխը: Շուշիկէն ժառանգուած
հայու երկու աչքեր միմեկեցան աչքե-
րուս մէջ ու իջան սրտիս...: Հայու աչ-
քեր՝ լոյս աշխարհ եկած հեռաւոր երկրի
մը կորսուած դիւզին մէջ, հայու երկու
աչքեր... Ինչ հեղինակ: Կարծեցի հոն,
այդ աչքերուն մէջ տեսնել տաքութիւնը
Ատուլի պապին, աղքատիքութիւնը քե-
ռայիս, քեռքութիւնը Շուշիկին: Մօտե-
ցայ, դրկեցի փոքրիկը, սեղմեցի կուրծ-
քիս, համբուրեցի իր հայու աչքերը.
մոռցայ ոտքերուս տակ գտնուող հողին
օտարութիւնը, ու չչնջացի:

— Գիտե՞ս, ես մամայիդ քեռին եմ,
մանչուկս:

Տնեցի՛ք ջաղաքավարութեամբ իմպ-
տացին: Շուշիկի նայուածքը ինկաւ ոտ-
քերուս մօտ: Նոր անդրադարձայ, թէ
հայու երկու խոշոր աչքերու հրապարակ
տակ դարձած էի անփափկանկատ: Քարլ
հայերէն չէր գիտեր:

Քարլը դրի իր շրաներկի սեղանին
ետեւ, շոյեցի սեւ մազերը ու կեղծ զը-
ւարթութեամբ մը դարձայ տնեցիներուն
կողմը:

Ինծի արամադրուած ննջասենեակի
պատուանէն դիտեցի դուրսը: Լուսնակ
դիշեր էր. առուակի մը երգը կու գար
հեռուներէն ու կը լոյնէր բլուրներու կո-
ղերուն հանգչող ծառերու չլուկները:
Աստեղազարդ երկինքին վրայ, օտար
աստղերու կեղծոնին՝ ես տեսայ հայու
աչքեր, որոնք կը պոպղային քամիին
դէմ դողացող կայծերու նման:

❖

Յաջորդ օր, Ատուլի դնաց մօտակայ
գիւղաքաղաքի դպրոցը՝ իր ուսուցչական
պաշտօնին: Հայրն ու մայրը սկսան ա-

նորեայ աշխատանքին, իրենց ընդարձակ բանջարանոցին մէջ։ Եւ նստած էի տան դրան առջեւ ծաղկած թաղարներուն մօտ, ու երկու զառաքներով հպարտ լեռ մը կը գծէի Գարլի համար, երբ խոհանոցի կողմէն հասաւ Շուշիկի երգին ձայնը։

«Միծեռնա՛ղ, Ծիծեռնա՛ղ...
Դուն գարնան սկսում քոյնակ...»

Մատիտը ջղազրգիւ մասներով շարժեցի լերան կողերուն։ Ինչո՞ւ երգել երգը, երբ անարժանազ Կիտի մնայ ան, ու միայն թախիծ պիտի իջնէ սրտի անհունին։ Ինչո՞ւ խղճել մատիտը լեռան կողերուն, երբ Գարլի հայու աչքերը մանկական պար պիտի բռնեն զուգորդական լեռներուն վրայ։

«Անգ շիճիք քո բռնը,
Հայրենի կտուրի տակ...»

Լերան ստորոտին կը ջանամ տուն մը գծել Գարլի համար։ Կը գծեմ, բայց մատներս կը դաւաճանեն ինծի ու կը մերժեն ծածկել կտուրը։ Խեղճ, անհայրենիք ծիծեռնա՛ղ, ո՞ւր պիտի շինես բոյնդ, երբ անկտուր է տունը...։

Գարլ կը դիտէ գծազրուծիւնս։ Թե՛րահաւատութեամբ կը նայի աչքերուս, կ'անէ մատիտը ձեռքէս, կը փակէ կտուրը զուգորդական ոճով՝ օտարաւոր ծիծեռնա՛ղ մը գետեղելով մէջտեղը։ Կը բարձրացնէ մատիտը լերան կատարին ու զուգորդական դրօշակ մը կը գծէ ինք։

– Նա՛յն, – կը բացազանչեմ։
Ռէտինով կը ջնջեմ դրօշակը։

Գարլ գերմաներէնով կը բողբոջէ, բացատրութիւններ կու տայ։ Ձեմ հասկընար։ Թերեւս կ'ըսէ, թէ լաւ մազըլցողներ են իրենք ու կրնան դրօշակ մը գետեղել ինք։ Կը ջանայ երկրորդ անգամ ըլլալով դրօշակ մը գծել։

– Ոչ ոք կրցած է դրօշակ գետեղել ինք, մանչո՛ւկս, – կ'ըսեմ, լոյսով գըլուկը ու աննկող մատիտը ձեռքէն։

Շուշիկի երգին ձայնը կը խառնուի հայերէն խօսքերուս։

«Եման տեղս Աշտարակ...»

»

– Շուշիկ, միշտ կ'երգե՞ս հայերէն երգեր։

– Յաճախ։

– Ինչո՞ւ։

Պատասխանը կ'ուշանայ։ Շուշիկ կը դիտէ պարտէզի մացառներուն մօտ ծաղկած առանձին կակաչը։

– Յիշելու համար ձեզ, բոլորը։
Յիշելու համար մանկութիւնս։

– Միայն այդքա՞ն...։

Կը լսենք։ Հաքցական կը նայի ինծի։ Կը զգամ՝ թէ աչքերուս մէջ կը ջանայ գտնել մեղադրանքի չիթեր։ Հուսահատաբար կը յիշէ այն գիշերները, երբ կը մէկտեղուէինք լոյս ընտանիք ու կ'երգէինք ազգային երգեր։

– Աստիճի լաւ տղայ է, քեռի՛, շատ լաւ կը հասկցուինք ու կը սիրենք զի։ Բար։ Երջանիկ եմ, շատ երջանիկ, միայն ձեռք հեռադիմարութեան կարօտն է, որ կը տանջէ դիմ։

Ձգատառանցի։ Նայեցաւ դիմացի տան կտուրին հանդիպ ծիծեռնա՛ղին. օրօրուեցաւ իր ճօճաթոռին մէջ, ու շարունակեց։

– Երբ կը մնամ առանձին, հայերէն կը խօսեմ Գարլի հետ։ Ձարմանքով կը նայի ինծի, բան չի հասկնար առայժմ. բայց թերեւս օր մը հասկնայ, խօսի։ Այո՛, կ'երգեմ ինք երգերս։ Առաջ երգեալուն բառերը կարօտի ցաւերու կը վերածուէին կուրծքիս տակ։ Նոր կը հասկնայի տարիներով երգած երգերուս ամբողջական իմաստը։ Յետոյ, սկսայ դիտակցաբար չմտածել բառերու իմաստին մասին. աստիճանաբար քակուեցաւ տառապանքի սեղմումը կուրծքիս տակ ու մնաց ձեռք կարօտը միայն։ Այլեւս չեմ ուզեր խորանալ հարցերուն մէջ, երբ լաւ գիտեմ, թէ սկսած ու անկարող բեկոր

մըն եմ՝ կտրուած ամբողջութենէն ու նետուած օտար մայրաքաղաքի մօտ։ Ձգէ՛, քեռի՛, չիօսինք այս հարցին մասին։ Կարճ այցելութիւնը չվիճարկուի տխուր յիշատակներով լեցուն հանդիպումի մը։ Լուսինայն ընդունեցի առաջարկը։ Ոտնոտեց ամուսնոյն մասին, իրենց առօրեայի մասին։ Քարլին, ձմրան ու վարնան, չմկումի ու մաշկումի մասին։ Խօսեցանք կարեւոր ու անկարեւոր բազմաթիւ հարցերու մասին, ու դարձեալ պրպտող նայուածքներով նայեցանք իրարու։

— Յոստովանանք մը ունիմ, քեռի՛, — ըսաւ մտածկոտ, — չեմ գիտեր, թէ ինչպէս պիտի ընդունին բառերս։ Տարին մի քանի տնգամ կ'երթամ Զիւրիխ, ու անպայման կը հանդիպիմ տարեց հայ բարեկամուհիի մը։ Եղեռնը տեսած կին մըն է, որ կորսնցնելէ ետք ծնողքը, ինկած է Թիֆլիսի որբանոցը, միացած է հօրեղբորը Սեւաստաստանի մէջ, անցած է Ստեփան, Գոնսթանցա, Աթէնք, Միլան։ Միլանոյի մէջ ծանօթացած է զուգեւորացի երիտասարդի մը հետ, ամուսնացած ու հաստատուած են Զիւրիխ։ Կը հանդիպինք իրարու, կը մնամ ժողով մէջ կամ երկու ժամ, կը խօսինք Եղեռնէն, թուրքէն, հայրենիքէն, կը խօսի՛նք...

Շուշիկ խօսեցաւ, խորտակեց իր դժբաժնի հարցին մասին չիօսելու՝ արեւստական պատնէշը։ Չընդմիջեցի զինք։ Ոտնոտեց, պարպեց ներաշնարհը, ու զիւրիխաբանակ հայ տիկնոջ բառերով փակեց խօսքը։

— Ձորնայ թուրքին արմատը, որ այս օրերուն հասցուց մեզ։

Ձեռքս դրի Շուշիկին ձեռքին ու ըսի ղողացող ձայնով մը։

— Գնա՛, Շուշիկ, միշտ գնա այդ տիկնոջ մօտ...

Քարլ իր ճիշերով մեր ուշադրութիւնը հրաւիրեց իր կողմ։

— Ձեռք, մաքքը՛ր։

Երկու դադաթներով լեռ մը գծած էր ջրաներկի տեսրակին մէջ, ու անոնց բարձունքներուն տակած զուգեւորական երկու դրօշակներ։

•••

Կէսօրէ ետք, սկսայ հաւաքել դոյրքերս ու դասաւորել ճամբորդական պայուսակս։ Ժամը վեցին պիտի վերադառնայի Զիւրիխ, շարունակելու համար ճամբորդութիւնս։

Շուշիկը մօտս էր ու կ'օղնէր ինծի։ Լաւ առաջարկ մը ընողի զոհունակութեամբ ըսի։

— Երբ վերադառնամ, ամէն շաբաթ հայերէն թերթեր պիտի դիմեմ քեզի։ Գոհ կը մնաս, չէ՞։

Անմիջապէս չպատասխանեց։ Մաշեց անձեռոցս ու դրաւ պայուսակիս մէջ։

— Նամակ գրեցէ՛ք, Թիֆլիս չեմ ուզեր։ չեմ ուզեր շեշտուօրել տառնմանութիւնս։

Ցնցուեցաւ։ Ձոր էր ձայնը։ Բայց հակասութիւն մը կար խօսքերուն մէջ։

— Այն ատեն, ինչո՞ւ կը հանդիպիս զիւրիխաբանակ հայ տիկնոջ։

— Ձեմ գիտեր։ Ձեմ կընար չհանդիպիլ։

Սեղմեցի զայն կուրծքիս։ Ո՛վ գիտէ անգամ մըն ալ երբ պիտի տեսնեմ զինք։

— Լաւ տղայ է Ատուֆը, Շուշիկ, — ըսի, հասարակ բառերու ետեւ ծածկելով հայու յուզումս, — քու լաւ լուրերդ պիտի տանիմ ձօրդ ու սիրելիներուդ։

— Քեռի՛, գիշերները երբ երգէ՛ք, յիշեցէ՛ք զիս...

Կրկնէ կը դողար յուզումէն։ Ձուգեցի շարունակել այս տխուր տեսարանը։ Մեր հայու սրտերով որո՞ւ դէմ կը պայքարէինք Տէնիքըն կոչուող այս կորսուած գիւղին մէջ։

— Երթանք, Շուշիկ, չուշանամ։

Ամբողջ ուժովս զոցեցի ճամբորդական պայուսակս, կոշտութեամբ քաշեցի անոր զոյգ զօտիները, սեղմեցի, ամբացուցի։ Կարծէք ան էր տխուր իրականութեան միակ պատասխանատուն։ Շուշիկ նշմարեց շարժումներս, հասկցաւ զիս ու ժպտաց տխուր։

Տան դրան առջիւ սպասող երկու ծեփունիներուն յայտնեցի շնորհակալու-

թիւններս ու անոնք բարի ժպիտներով
ճամբեցին դիտ։

— Առաջ վիտրը գեղըմ, Օճէլ Արամ։
Ատուֆ վերցուց պայուսակա։ Շու-
շիկն ու ետ բռնեցինք Քարլի ձեռքերէն,
ու սկսանք քալել դէպի գիւղին հրապա-
րակը։

Ձիւրթի մեկնող մարդատար ինքնա-
շարժը պարապ էր։ Հինգ վայրկեան ու-
նէինք ասակաւին։ Սեղմեցի օտար ազգա-
կանիս՝ Ատուֆի ձեռքը։ Համակրած էի
անոր, լուսաւոր էր, Բարձրացուցի Քար-
լը ու սեղմեցի կուրծքիս։ անգամ մը եւս
էր հայու աչքերը խռովեցին հոգիս։
Համբուրեցի աչուկները... այո՛, միայն
աչուկները...։ Ու սիրելի մը կորսնցնո-
ւի տխուր զգացումներով զայն յանձ-
նեցի Ատուֆին։ Շուշիկը առի թեւերուս
մէջ։ ան վերաւոր աղանձակի մը պէս
դուրսը թեքեց ուսիս...։

— Մնաք բարո՛վ, Շուշիկս, երջան-
կութիւն։

— Ըսէ բոլորին, թէ լուս եմ, շատ
լաւ...։

Ձարունակեց։ Բառերը խեղդուած
էին յուզումի ծանր մատներուն տակ։

Ձուրցերիացի շարժավարը, ինքնա-
շարժին դուռը բռնած կը ժպտէր ինծի։
Վեցը մէկ վայրկեան կ'անցնէր։ ուշա-
քած էինք։

Ինքնաշարժի պատուհանէն նայեցայ
դուրս, իմ հայ Շուշիկիս, սեւ աչքերով
Քարլին...։

Ինքնաշարժը շարժեցաւ։

— Ձմռանք դիտ, քեռի՛, դրեցէ՛ք...։

Հայու աչքերով Քարլի ձայնը միա-
ցու մօրը խօսեցրուն։

— Առաջ վիտրը գեղըմ, Օճէլ Արամ...։

ՏՆ

Շարժավարին հետ առանձին եմ ասա-
նովեց հողինոց մարդատար ինքնաշար-
ժին մէջ։ Տխրութիւն մըն ալ այս ա-
ռանձնութիւնը։

Ձուրցերիական դուռը լեռները ի
զուր կը ջանան իրենց դեղեցկութիւննե-
րով մեղմել խռովքս։ Այս բուսէին օ՛վ
հետաքրքրուած է անոնց դեղեցկու-
թեամբ։ Միտքս թեւեր առած կը թռչի
դէպի Ստանոյ բարձրադիր լեռները, ուր
կ'ապրի Աստուր պապի հոգին։

«Հէ՛յ, Աստուր պապօ, հաղ մը ի-
դէր տեսնէր քու ձագեր։ Գու թողան
որդին զմեր լեզուն չդիտնայ, այժանցոց
լեզուն կը խօսի։ Շուշիկ՝ օտարի կին,
Ձաւիկ՝ Պնիճիքա, Վարդան՝ Ամերի-
կա...։ Ես լէ՛՝ Օնըլ Արամ։ Հէ՛յ, Աս-
տուր պապօ...։»

Գիւղի տունները օկսած են ծածկուել
բլուրի մը վարադոյրով։ Թաց աչքերուս
դիմաց կը ազդողին վերջին տունները, ու
կը թոթովեմ։

— Մնաք բարո՛վ, Տէնիքըն...։

Ա. Ա.



ԻՎԱԿԱՆԱՆ ՇԱՐԺՈՒՄ

ՄԻՍԱԳ ՄԵԾԱՐԵՆՑ

Յիշատակելի բազմաթիւ թուականներու կարգին, այս ասորի նշուեցաւ նաեւ Միտաջ Մեծարենցի մահուան թուականը, որուն տեղադրման հայրենիքի թէ սփիւռքի մասաւորականները, տեղում իւր տրամադրելով իրենց հիւսուցումը հայ բանաստեղծութիւնը նորահրաշ գանձերով զարդարած տեղիներէ բանաստեղծին հանդէպ:

Անհուական արժանիքներով կազմուած եւ ունի խառնուածք իւր տեղի Մեծարենց, ուր լուսն տուած հայրենի կղերքի մը հետք բերած բազմազանակ աղաւթութիւններուն ու հրաշակերտեց տեղեկ բանաստեղծութիւնը խորութեամբ ու նըրբութեամբ, լոյսով ու հուրքով, արքայութեամբ, պահպանումով:

Իր զգայնութիւններով, տեսողական ու լըտողական կարողութեամբ մանաւանդ, բացարձակ նորութիւն էր Մեծարենց, ինչորտ ընկալութեամբ եւ իմացական սուղումներով յայտնագործող խորհրդաւոր ուժ մը, որ իրքեւ քառ ու պատկեր, իրքեւ ձայն ու խորհուրդ, իրքեւ լոյս եւ գոյն տարածուեցաւ էջերուն վրայ, յուրբութեամբ ներկայութեամբ մը:

Հարկ է յիշուել, որ ընթերցողին հոգին լեցնող համալրաւ այս վառաւոր յանկարծական ծայրագումարի մը գինը չէ: Մեծարենց տեղեկակից չէր ներկայաւոր իր շարժին, արարչագործութեան օրէնքներուն: Պերճախաւ է հետեւեալ հաստատումը:—

«Իմ գրական մեծագոյն մտանգութիւնն եղած է հոլորակի տեղեկ պիտակումներուն յիմարական հետազոտող մը լըլլալ եւ խառնովի արտաքին ազդեցութեանց նուազագոյնից հրաշմանակ մէկ խառնով: Կարծիքի եղածին չափ ինքզինքս ըլլայ»:



Որքա՞ն փոփոխելի պիտի ըլլար որ Մեծարենցի այս պատգամը նոյն ստեղծութեամբ էջերէն եւ արտք եւ մեր նորերը իրենց եւս խառնովին հարաւորին ազդեցութեանց նուազագոյնէն զրոյմէնք եւ փորձելին ինքզինքին ըլլալ:

Իր խառնուածքին բերումով ու խառնուածքին տեղեկաւոր ջանքերով՝ Մեծարենց եղաւ ինքզինքը, ու իրեն հետ՝ մեզ, ցեղին քանի մը երակներուն լուսապայծառ արտայայտիչը:

Հետագայ էջերուն վրայ կու տանք Գր. Պրլուտեանի ընդարձակ մէկ գրութիւնը, որ ինքնաթիւ փորձ մըն է Մեծարենցը ըմբռնելու եւ վերլուծելու:

Գ. ՊԸԼՏԵԱՆ

ՄԵԾԱՐԵՆՑԻ ՀԱՄԱՐ

Բանաստեղծական վաստակ (1) մը հանգոյցն է նշանակութեան հերոսը՝ ուր բանաստեղծական փորձ մը (Էֆսիկրիանս փոփփ) կը խորանայ։ Փորձը կամ բանաստեղծական արկածախնդրութիւնը գործին հէնքն է, հոգեբանական-բնազանցական բարդ տարածութիւնն ու ժամանակը, ներքին կառուցը՝ որ իր արտայայտութիւնը կը գտնէ տնջառ քերթումներու մէջ։ Քերթումն ու փորձը նոյն բաներն են զրեթէ, փորձն ըլլալով քերթումին լինելութիւնը, քերթումը՝ փորձին հանդրառաններէն մին։ Միակ տարբերութիւնն այն է, սակայն, որ փորձը ներքին միութիւն մըն է, իր զարգացումին մէջ շատ անգամ ոչ-երե-

ւութեան։ Քերթումները բացայայտելու համար, չի բաւեր այլեւս բաւարարուիլ անոնց անմիջական թելադրանքով, այլ պէտք է դնել անոնց յարաբերութիւնները փորձին հետ ու նորէն կարգաւ փորձը՝ ըստ քերթումներուն։

Նման առաջադրանքներ կը ձգտին բանաստեղծական աշխարհ մը (այս պարագային Մեծարենցինը) տեղաւորել իր կենսական բարդութեան ու զբաղմունքով մանրանշան (էջ 280) (2), այսինքն՝ զբաց ծիրի մը մէջ։ Պէտք է փորձը բռնել ու կարգաւ իր բաղմանի մակարդակներուն վրայ, բաղմանի իմաստներու հանդիպումին, անցնելով մէկ մա-

(1) Բազմիմաստութեամբ և բարդ ի գործ է մտնել տեղատեքէսութիւն մը պարզապէս ալ։

(2) Մեծարենցի գործէն մեր յղումներով համարժեցանք Վերկերի ժողովածու, Հայագիտ. հրատ., 1959։

կարգուկէն միւսը: Քերթուած մը, կեանքի հանդէպ կեցումով մը ըլլալէ զատ ու աւելի, բանաստեղծական փնտրողութիւն (3) մըն է, որ հարց մը կը դնէ ու կը փորձէ լուծել: Հեանաբար, ընթերցումը չի կրնար ըլլալ միակը: Բանաստեղծութիւն մը չունի վերջացած ու վերջնական իմաստ: Որեւէ մտեցում մեկնաբանութիւն է ու մասնակի: Յաւանութիւն է կարծել որ հեղինակի դիտանկիւնը ամենայան է. արդէն անկարելի է զայն զտնել: Սակայն մեկնաբանութեան առարկայականութիւնը իր ամբողջութեան կղզւութիւն մէջ կը կայանայ:

Մեծարենցի գործին բոլոր քննարկումները կը կրեն կնիքը որոշ գեղադիրական ըմբռնումներու եւ մասհոգութեան երևում, որոնք Մեծարենցին չեն ապահովաբար: Մեծարենցի մեր ընթերցումը մեկնաբանութիւն մըն է իր կարգին. ընթերցում՝ անոր փորձը վերականգնելու համար. չունի վերջնական ըլլալու յաւանութիւն, քանի որ ինչ ընթերցումներ ալ կարելի են:

Մտնելու համար Մեծարենցի աշխարհէն ներս, պէտք է գտնել անոր գոյափոփոխական ամէնէն նախնական պատկերը, որ իր փորձը կը պայմանաւորէ եւ ուրիշ փորձը կը սկսի: «Սենեակը» կամ «Իցիկը» այդ պատկերն է. բանաստեղծը՝ փակ մթնոլորտի մը մէջ, ուր «կը հանգիստ գտնուի» (էջ 64): Մեծարենց ամէնէն առաջ, իր բառով, «սենեակի ապրող» է (4): Սենեակի բնակիչը «հեռու» է քաղաքի ժողովրդէն տաղակալի» (էջ 178), հեռու կեանքէն եւ արտաքին աշխարհէն: Սենեակը հեռաւորութիւն է եւ բաժանում միասին. բաժանում «միւսէն», էականէն: Սենեակը գրեթէ պարագ է, եւ միակ կենդանութիւն տուող, լիցնող ներկայութիւնը, «բոլոր» մարած

է» (էջ 28): «Ստուերի գորշ լճակները» (էջ 64) ժխտական ներկայութիւններ են, գրեթէ բացակայ, եւ որոնք աւելի կը զգացնեն պարագը. երբեմն պիտի շարժին ու ձգտեն ... ստուերները» (էջ 38), բայց այս անգամ շեշտելու համար «ստուերներն որ կը տեսնէ» եւ անձկութիւնը շրջադիւն (էջ 38): Սենեակի պարագը «տարտամութիւն մըն» է, որ կը պատէ խորհրդազգաց / լուսաւարներն ու հուսկ իրեն ալ յետին» (էջ 162): Այս տարտամութիւնը՝ զուգորդուած «երբեք» ընդհանուր բառով, պարագը ոգեկոչելու տարբեր ձեւ է: Իրերը չունին հոս ոչ մէկ էական թանձրութիւն, ներկայութիւն եւ շրջադիւն դուրս՝ անոնք կը մընան, անջատ եւ հեռու, «հարցումներու հանդէպ խուլ» (էջ 36): Անոնց անպատասխան, լուս, գրեթէ բացակայ ներկայութիւնը շրջադիւն էական առանձնութիւնն ու բանաստեղծը կ'ըսէ: Իրերուն վրայ զգացական գոյի մը պակասը՝ նըշան է հաղորդակցութեան բացակայութեան: Սենեակին այս նախադրումը, նստացումը պատճառ կ'ըլլան ներքին աշխարհի քանդումին. եւ «հանդիսատես կ'ըլլամ մաքիս պատկերներուն քայքայումին» (էջ 36): Պատկերները, որեւէ դուրսի մը հետ կապի մնացորդներ էին, եսին դիմաց կեցող առարկայութիւն: Անոնց «քայքայումը» ամբողջովին կը դնէ Մեծարենցը «զոյց» շրջանին եւ կը թողու գինք անձկութիւններու, ցաւերու եւ դիտակցութեան մտերմութեան մէջ: Այսպէս է որ անոր «ուսին կը ծանրանայ» (էջ 52) լքումը: Նեղցող, ամփոփառող այս աշխարհը, վանդակի մը շուրջ կը պզտիկնայ երեսակայութեան համար. «վանդակին մէջ փակուած հէգ / Բըռնիկին պէս մենաւոր / բանտուեցան սրբատիւ սէգ / վարդ բաղձանքները բոլոր» (էջ 172): Մայրադոյն կծկում է սա, պարագի խորունկ զգայնութիւն:

Եթէ սենեակը լքում է եւ բաժանում, իր դոյ մթնոլորտով է նաեւ պատկերը եսին. Մեծարենց կը խօսի եսի սենեակին մասին. «Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական / ու լըլլայ որ

(3) Եստ կեանքի եւ բանաստեղծութիւնը զուգորդուած մը վերածող ըմբռնումներ:

(4) Տես, Թ. Ազատեանի «Մեծարենց», 1922, Պոլիս, էջ 34:

ծափին ձայնին երգը գուժական / եսիս սենեակին ունենայ ցուրտ առանձնարանն (էջ 34)։ Յատկանշական է որ մէկ տողի մէջ տարազուն սենեակի արթնցուցած զգայութիւնները՝ սենեակն իրրեւ առանձնութիւն, ցուրտը՝ կծկում ու պարտադրանք, իայց շեւ-սենեակն զուգորդումը տուելի խորունկ է։ Եւր կեզրոնն է անհատականութեան ու մտածումին։ Կեզրոն՝ որուն շուրջ մտածումը կը դառնայ ու չի կրնար զայն բռնել։ Եւր, հոս, մաքուր պարապ մըն է եւ ըլլալու համար պէտք ունի դիմազարձ ներկայութեան։ Մեծարենց կը գտնուի եսի այս պարտադրանքով ու մէջ։ Իր ամբողջ ճիգը պիտի ըլլայ ո՛չ թէ մնալ ճեսի սենեակին մէջ, զոց ու միտակ, այլ հլլիլ զուրս պարտադրանք, հասնիլ ոչ-եսին կամ ներկայութեան։ Այս է Մեծարենցի խնդիրը, որ կրնայ առնել բնազդնականէն մինչև բանաստեղծականը զացող ծիրը։

Մենեակը կը կապուի մէկ ուրիշ կառոյցի՝ մութը կամ խուարը, որ կու գայ ամբողջացնել զայն։ Մեծարենցի մօտ մութը իր նկարագիրները կը փոխէ ըստ ժամանակի եւ ուրեմն տարբեր նշանակութիւններ ու զգայնութիւններ կը հագուի։ Իրերկունք, զիշերը կամ խաւարը, տարբեր հոգեմիջոցներ կը ստեղծեն եւ ուրոյն իմաստներու կը ձգտին։

խաւարը պատկերն է անորոշ խորունկին ու խտացումին։ զարմանալի չէ որ ընկերանայ սենեակին — ձեռքը մաքուր օննեակիս մէջ / ուր կը հոսին գալար-գալար / յորդ ալիքները մութին (էջ 28)։ Մութը երկու հակադիր կեցածքներու վրայ կը բացուի — մերթ ընդունում, մերթ խուսափում։ Երբ խաւարը կ'ընդունուի, Մեծարենց կ'ըսէ — «Ես կը տրեմ խաւարը աստապաղին» (էջ 40) եւ այնտեղ զէպի դուրս շարժում մը կ'երազարծուի, կարծէք, ձեռք վիշտ մը լայն սիրտը կուրծքէս դուրս կը նետէ (էջ 40)։ խաւարը կը դառնայ մտերմութիւն, ուր «(ան կ'ըմպէ) օհ հեշտանքը ցւռոտ կեանքին» (էջ 40)։ «Վհուկի պէս թախազէմ մթութիւնը» կ'ընէ ո՛չ հանգիստ, զոնք տանելի վայր կ'ըլլայ։ Վի-

ճակը չի դադրիր զէպի խորունկն էջը մը ըլլալէ։ Եսի ծիրին մէջ ապրելու եւ զմեքութեան վհուկին հետք զէմ զիմաց գալու այս քաջութիւնը Մեծարենցը կը մղէ քաջելու խաւարին մէջ եւ անցնելու զվախին ճամբաներէն / ալ յափաքած, ու լակորոյս / զիշերներու ըմպած զինին խաւարածոր» (էջ 55)։ Մութին մէջ թափառումը զրեթէ ֆիզիքական ցնցումներ կը բերէ, նոյնիսկ սարսափ ու սոսկում (էջ 183)։ Բայց Մեծարենց կը քալէ «երկիւղի սեպ ճամբաներէն» (էջ 28) մինչև հոն՝ կեզրոնը, ուր զլոյսն (իւ հոգւոյն) քիչ-քիչ կը մաշի (էջ 23)։ Լոյս-մութի խաղով արտայայտուածը կը դառնայ շուտով մտածում։ զիտակցութիւնը կը յայտնէ «մահուան սրտփութին» (էջ 52) ներկայութիւնը։ «անզոյութիւնը» (էջ 209) կամ կակիծը, «զոր արեւին լոյսն անգամ չի թուէր» (էջ 38), նոյն ճշմարտութիւնը կ'ըսեն։ ուրիշներ ալ կան (էջ 140) եւ ուլուր։ Եսին պարապը կը յենի ուրեմն էութեան կորուստին կամ «մաշող լոյսին» ձգած պարտապիւ վրայ։ Էութեան կորուստն է՝ որ կը դառնապարտէ Մեծարենցը մութին։ Մեծարենցի դոյս-վիճակը այս կորուստն է, անոր անխուսափելիութիւնը։ Էութեան կորուստը, նուազումը, մահն է, որ կը կրծէ զինք եւ ասոր համար է որ պատկերաւորումի ժամանակ, երեւակայութիւնը մահը անձնաւորացումի կ'ենթարկէ։ «Վը-հուկը» կամ «պարեկը», որ կը քալէ «սեւ սաթի ... ցայտը մը ձգած իր քամակէն» (էջ 90), արտաքին ուժեր են այլեւս։

Էութիւնը հոս չի սահմանափակուիր էակով։ Անոր կորուստը, լայն իմաստով, կորուստն է թէ՛ էակին եւ թէ՛ արտաքին աշխարհի էութեան։ Եւ այս երկուքը անբաժանելի են։ Այս մասին հետաքրքրաւոր է Մեծարենցի մէկ արձակը՝ «Ես էակին կորուստը կը զուգորդուի էութեան կորուստին հետ» — «Անկանկերու ընդհատ շաղող սրտփութները, որոնք ապրին վրայ կը մեռնին դողահար, ու ծովափին խուսափուկ լոյսերուն ծիրառի երանգաւորումները, որոնք կը թռչնին յանկարծ ... կը թափանցեն հոգւոյս

մէջ յաւիտենական դադափաբը խուսափուէ գոյութեան ու մահագուշակ անադորութիւններուն: ... Մահուան անդընդային զգայնութիւն մը՝ մահագոյն մտածութեանց միապաղաղութեան մէջ» (էջ 210) գոյներուն, ձեւերուն անյայտացումը, «խուսափուէ» բառին զուգահեռ գործածութիւնը, կը թարգմանեն արտաքին ու ներքին աշխարհներու համասար ընկղմումը ոչինչին մէջ:

Նօսրացող բայց միեւնոյն տաւն խորացող այս մթնոլորտին մէջ, տարօրինակ չէ որ մտածումը ներքին պարապին առջեւ գտնուի, ինչպէս անդունդի մը առջեւ: Գիտակցութեան համար անգունդը կ'ըլլայ բացարձակ ժխտականը — «Եւս կը սպասէ, մաքին մութին մէջ դաժան, / զոր ցոնցեր է շրջան դաշտին անդունդին / կ'ուզէ նայել անգամ մըն ալ իր շորս դին» / Գաղղրութիւններն արդեօք կու գան, ահ, կու գան» (էջ 140): Կը բաւէ որ զանդունդին միանան ջուրերը, եւ պատկերը ամբողջական է. տարբերուն սահմարձակ ու ներերկրեայ աշխատանքը, անոնց դէմ մեր անկարողութեան գիտակցութիւնը, կը յայտնակերպեն զուրուականը. «Եւս կը սպասէ, մաքին մութին մէջ դաժան / Գարշէպին վրայ, վարէն մթաւ ջուրերուն / զինք կը կարծէ շորժող տեսին ուրուական, / վարէն մուշլ տարփի ձայներ կը վրժան...» (էջ 140): Անդունդին ձգողութիւնը, մաքնիսի պէս քաշող կարողութիւնը կը թարգմանեն ոչինչին զօրութիւնը: Կարելի է ըսել, որ այս հանգրըւանը Մեծարենցի ներաշխարհին յատակն է, ուր ան կրնայ ըսել — «Ամէն յոյսեր մեծ պարապին կը յանգին» (էջ 170) յատակ՝ որ նաեւ իր փորձին զըսպանակն է:

Յաճախուած կորուստի գիտակցութենէն, Մեծարենցի ձայնն անգամ կ'ըլլայ նեղ, խուսափող շշուէ, դատապարտուած խեղդուելու — «Իմ ձայն շշուէ մըն է, փսփուք մը այսպէս» (Ազատեան, էջ 32): Բանաստեղծը կատարեալ է: Ձայնը, որ ընդլայնումի միջոց պէտք էր ըլլար, հազիւ կայ, բացակայի եւ

ներկայի սահմաններուն. «ասոր համար է որ Մեծարենց չի կրնար խօսիլ իր մահը. էութեան կորուստը կարելի չէ խօսիլ, մահը կարելի չէ խօսիլ. բոլոր մահուան լուրջ գրուած քերթուածները մահուան վրայ չգարշ մը կը նետեն ու փոխաբերութիւն են: Երբեմն Մեծարենց կ'ուսննայ լուսութեան փորձութիւնը եւ համարին պէս «կ'ըղձայ անհունին մէջ մնալ» (էջ 150), անհունն ըլլալով բացարձակ լուսութիւնը. սակայն լուսութեան մէջ քանտարկում մը կորուստի ձեւ մըն է, միշտ դեռ Մեծարենցի հարցն իսկ է — անցնել կորուստը էութենէն, անոր վերադարձումին, պարապէն՝ լեցունին, փսփուք ձայնէն՝ «համայնականին» (էջ 113): Մեծարենց յատակօրէն կը տարազէ այս հարցը, «Ինքնաքննադատութեան փորձ մընի մէջ, քիչ մը տարբեր չէլտով: «Փսփուքելի էր, ուրեմն, որ Մեծարենց ջանար իր Էպիքուրէն դարս ելլել (5) (էջ 281): Այս անցումը եսի «ոչնչաբանութենէն» (էջ 281) դէպի վաւերական էութիւնը, միայն հոգեբանական երեւոյթ չէ, այլ բնագիտական ու բանաստեղծական. այսինքն՝ շատ ենթակայական «փսփուքէն» անցնել «Համայնական Ձայն»ին, անցում՝ որ հիմնական յեղաշրջում է Մեծարենցի աշխարհին մէջ:

Ներքին ճշմարտութեան մը յայտնումին՝ Մեծարենցի առաջին հակադրացութիւնը ժխտական կեցումն է. Մեծարենց կը փախչի այդ ճշմարտութեան ահաւորութենէն. եւ փոխուստի բանահետեւին մէջ իսկ փոխաբերութիւնը կը ծառայէ ծածկելու ճշմարտութիւնը — «Երբ փախչեմ, չեմ գիտեր ինչէ, թերեւս իմ հոգիէս, իմ ցաւատանը հոգիէս, ուր տառապանքը լոկ երգեց երգը անծանօթ ու խորին տրտմութեամբ՝ որ իմ էութեանս մէջ կ'ապրէ» (6) (էջ 209): Ասկէ անդին, Մեծարենց կը փորձէ սահմանափակել այս ճշմարտութիւնը եւ ըլլալ՝ կորուստը,

(5) Ընդգծումը մեր կողմէ:

(6) Ընդգծումը մեր կողմէ:

գրեթե բացակայ դարձող էությունը բըռնելու ճիգ: Իր նայումները ամբողջապես դուրս է, դէպի ոչ-հստակ, որովհետեւ ոչ-հստակ գրաւումը վերագտնել է կորսուող էությունը: Ասոր համար է որ այն լուրեր երբեք աղաղակը հոգւոյս՝ որ դէպի կեանք կը վազէ, խանգաւան ու բաղձալից» (էջ 210): Ես էն դէպի համայնականը երթալու Մեծարեցի պահանջը՝ համայնապիտան զգացումի մը թելադրանքը չէ, այլ ներքին աշխարհի քայքայումին մէկ պայմանաւորած երեւոյթը, այդ քայքայումը ժխտելու ձեւ մը:

Էություն կորուստէն՝ անցումը դէպի վերադարձումը էություն, իր համապատասխան կառոյցը կը գտնէ զգոցէն բացառի անցումին մէջ: Թաւարէն դուրս գալու, բացուելու համար (պէտք է մոռնալ եսը, որպէսզի արտաքինը կարելի ըլլայ ընկալուի), պէտք է հասնիլ պատուհանին» իր նամակին մէջ (Ազատեան, էջ 34): Մեծարեցի կ'ըսէ. — «... Մինչ մէկ, սենեակի ապրողներ՝ տակաւին մեր պատուհաններէն (7) կը դիտենք զայն (կեանքը) ու կ'իմաստաւորենք»: Պատուհանը (8) պատկերն է վայրին, որ կը բացուի աշխարհին վրայ. հոն՝ եսը կ'ըլլէ իր առանձնութենէն եւ իր կապերը կը հաստատէ: Սակայն պատուհանէն զիմաստաւորելը երկու բան է — դիտողը ո՛չ հոս է, ո՛չ հոն. աւելի հոս է քան հոն: Պատուհանը սեմ է ու սահման: Ասոր համար է որ ան կ'ըլլայ նշանը կրաւորական կեցութեան մը, որ սպասումն է:

Սպասումը՝ արտաքին աշխարհի հետ եթէ կապ մը կը ստեղծէ, այդ կապը կը ցորդութեան (հարստութեան) սահմանը չ'անցնիր. արտաքին աշխարհի մէկ դէպքին, կը համապատասխանէ մտածում մը միայն. տաղնապը գրեթէ կը քողարկուի:

դիտողը աչք մըն է միայն. արտաքին աշխարհի ամայութիւնը կը նետէ դինք ներքին ամայութեան: «Իրիկուններն ես կը խոկամ / ամայութեան երգը կ'անցնի / պատուհանիս երբ առջեւէն» (էջ 43) եւ կու գայ ցայտը կեանքի աշունհորուն» (էջ 43): Մասնակաւ այս եզրանակը պոյսովիճակը ցատկէն ճիգ մըն է, միայն, եւ դիտողը աւելի սենեակի ապրող է քան դուրսի: Սակայն, հոգեբանական տարրը, այսինքն՝ «ազերսանցներ», հոգեբան, ցաւերը, յոյսերը» (էջ 278), կը բանայ քերթողը արտաքին աշխարհին եւ ան կը գտնայ «Սպասման հիւանդ» մը (էջ 53): «Ես կը փնտռեմ / սպասումն հոգիս համակ պարտասած / ու տենալանգով շտապած... / լոյսի շող մը գոր կը մարեն անդուլ վարանքն ու կապած» (էջ 28): Այս փնտրողը բեւեռի մը կառուելու փնտրութեան է, կամ առարկայութիւն մը ստեղծելու ճիգ, որ կը յայտնուի «մեղուններու» (էջ 54) եւ «նաւագնորուն» մեղուններն ընդմէջէն: Մեծարեցի կը սպասէ «Լոյսի շողին», «Արեւին» կամ երկրորդ դէպքի մը ժպիտին, որոնք կրնան յորինել միջոց մը, տարածոյթ մը, ուր դիտող աչքը կ'ըլլայ. «Դիտ կը սպասէ, մաքին մութին մէջ դաժան / նշոյլներուն դեռ՝ սիրաշարժ շրթունքին, / դեռ սիրածագ բոցին՝ աչքի մը անդին...» (էջ 140) սպասումը կը ձգտի հաղորդակցութեան, եւ հոս բոլոր նշանները մտերմութիւն, մօտեկութիւն կ'որակուին. — «Կը սպասէ... / Համակրութեան պզտիկ բառ մը մեղրանուշ / պրզսիկ ճրագ մը դորովի բացարձարժ / որ նշմարել տայ խաւարին մէջ յանկարծ / հին սիրական ուղին, հոգ չէ, այսքան ուշ...» (էջ 140): Բառն այս մակարդակին վրայ կապի եւ «Համակրութեան» միջոց է եւ կէտ՝ միասին ըլլալու, հասկըցունելու, մինչ ճրագը զգոցէն բացը դալու կարելիութիւն: Բայց հաղորդակցութեան մը սպասումը կը մնայ անպատասխան. «Ջեռքս է պարապ մնացեր դատարկին մէջ սրգաւոր» (էջ 52): Ջեռքը գնդակացած հրաւէր է կապի, բայց ձեռքը կը մնայ պարապ: «Սպասման

(7) Հնչգոյն մեր կողմէ:

(8) Պատուհան-պատշգամ-սեմ ճոյն կտաշ-ցից կը պատկանի եւ համարժէք են Մեծարեցի երեւակայութեամբ համար:

ցայգը՝ կ'երկարածուի եւ ամենայնքէ մեղուները (էջ 54) չեն վերադառնար, արտաքին աշխարհը չի պատասխաներ Մեծարինց կ'իյնայ նորէն իր խորութեան. «Բողբոջ տնիչեր բերաւոր / տարազ-արազ կ'անհետին / սպասումէն մինչեւ որ / մենակ մընամ ես մթին / խոհերուս հետ տարութեք» (էջ 197) :

Պատուհանը կրնայ բլլալ վայրը հազորակցութեան, եթէ արտաքին աշխարհը վայ մեղի. ան կ'ըլլայ նշանը ընդունութի եւ ընծայութի : Այսպէս է որ «Համբարդի գիշեր, պատուհան է բաց» զպատուհան մըն է բացարձակ հազորակցութեան, բացուող՝ էութեան վրայ : «Համբարդ»-ը կը միացնէ արտաքինը եւ սպասողը : Հովիւ իր համբարդը պատուհանէն կը զրկէ (էջ 36) կամ պատուհանը կը մատնահարէ (էջ 115) : Նոյնը կ'ընէ լուսնկան. «Եւ հաճոյիկ, անուշ, բարի լուսնկան / վարագոյրէն շողիկ մը ներս կը զրկէ» (էջ 32) : Կը պատահի որ հազորակցութիւնը տաքան դիւրին լսուելով եւ երեւոյթները խուսափին, լոյսի փնտրտուքը կը դառնայ մտատանջող կանչ եւ Մեծարինց կը վերածուի մայրի մը, որ ոգեկոչումով իրերը կը ձգտի բերել գոյութեան : Կանչը իր ամէնէն նախնական նկարագիրը կը գտնէ, այսինքն՝ տն կը կոչէ էութիւնը. «Ներս խուսէ ուժգին, ներս պատուհանէս / ու լեցուր խցիկս...» (էջ 22) կամ. «Ենկուր... կը մըսին հէզ երազներն իմ որբուկ» (էջ 52) : Բայց կանչը կը մնայ հոս ոչ-իրականացնող երեւոյթ, որովհետեւ անոր արարչական կարողութիւնը կը յայտնուի միայն երբոր սպասողը կը մաքրուի իր եսի «Ոչնչաբանութիւններէն» :

Այս արամադրութիւնը զէպի ոչ-իրականացնող երեւոյթները, կը շեշտուի եւ իր լրումը կը գտնէ հոգեբանական բարդ երեւոյթի մը մէջ, որ երազանքն է : Ընդհանրապէս Մեծարինց երազի բանաստեղծը չէ. երազը աւելի մեր խորութեան ու մեր եսին կը տանի, քան երազանքը, թէեւ երկուքն ալ եսի այլացումներն են : Մեծարինց կ'արթննայ երազէն

ու գրեթէ ոչինչ կ'ըսէ այդ մասին : «Երազի պահեր» (էջ 28) երազանք է միայն : Արդարեւ՝ երազանքը հոգեբանական այն ծաւալումն է, որ արտաքին աշխարհի մէջ երեւոյթէն մեկնելով՝ հաճելի ու դիւրին (բառը, հոս, ոչ մէկ ժըխտական շնչոյ ունի) տարածութիւն մը կը ստեղծէ եւ կը ձգտի ընդլայնել կարեւորութիւններու ճիւղը : Երազանքը՝ ներքին խորութիւններու այլակերպ արտայայտութիւնն է, առանց «արամադրէ» վիճակներու ստեղծման :

Երազանքը Մեծարինցի մօտ կը խաղայ միեւնոյն դերը, զոր պատուհանը կը խաղար. եսէն, «Հուսուորէն» անցում դէպի անհունը (Ազատեան, էջ 41) : Այս փորձը կը պահուուր հոգեբանական խաղերու ցանցին տակ : Երազանքը նախ՝ կը ձգտի միայն ծաւալումի (9) մը : Ձախներ՝ ուրիշ երեւոյթներու կարգին, առիթ են երազանքի. «Ձայներ գիւթիչ աշխարհներէ, տարտամ, անուշ, հեռու / որոնք անդին դիւ կը տանին երանաստան մը բաղձոտ / ու կը ներհմ արբիւր» հովին գիւթիչ նեկտարն ըմպած հոտ» (էջ 35) : Միջոցի ընդլայնումին կ'ընկերանայ անիրական վայրի մը ճանաչումը եւ յետոյ նինջը կամ անէտցումը. այստեղ արտաքին աշխարհ մը կ'ընկալուի եւ եսը բացայայտօրէն կը կորսուի : Երազանքը կը բարդանայ, կ'ըլլայ ծրագրութեամբ, մանրամասն արարողութիւն, ծէս, պիտի ըսէինք : «Անբըջանքի թիթեռները» միջոցին մէջ կը գըծեն «չառայլ թռչչիկ / ահօսն հեշտագին» (էջ 65) անոնք թեթեւօրէն կը նիւթականացնեն, կը ստեղծեն միջոցը, ուրկէ կ'անցնի «թեյն անուրջին» (էջ 77) : Երազանքը պատրաստող աշխատանքի մը ոգեկոչումը կայ «Կապոյտ յաճումներուն մէջ» : «Կը դառնան միւր կախիլներն իմ ապրումէ անբնական, / ուրբերով դեղին, ճերմակ մահն երբեմնի

(9) Երազանքի պարագայիմ գծուար է ճիշդիւնը սակմաները մերթիմ եւ այստեղիմ աշխարհիմնում :

շերտաներուն...» (էջ 76)։ Այդ գերթընդունաժողովուն նամակներուն և հարգանքին, անոր լինելութիւնը։ Քերթընդուն կեդրոնական տունը կը յորինեն եղող աշխարհ մը։ Երազանքը կը ձգտի յայտնել աշխարհը, ինչպէս նաեւ հասնիլ «միւսին», հակին, «եղեմն արատաւած» կանացի բոց հողիներուն» (էջ 77)։ Այս «միւսը» միշտ կ'անցնի երազանք-երազի մէջէն. «Երազներու պերճուն հէն» (էջ 81) կամ «երազային» է, երբ «կը ժպտի պատուհանին հետեւէն» (էջ 86)։ Երազանքը, պատուհանը, միշտ հեռացնող պատկերներ են։ Կը պատահի որ «երազներու պերճուն հէն» բռնելու փորձ մը ըլլայ, փոխաբերութիւնը կու դայ մատախուղով մը հեռացնել զինք մեզմէն։ «Մտախուղով կը լինայ հիւր շրջադիւն երազին» / ուր տարածի մարմինիդ հը պարտ շուշանն է կեցեր» (էջ 87) մատախուղն ու շուշանը փոխանակ էացնելու կ'անգայտացնեն պատկերը. շուշանը կ'այլակերպէ մարմինը, որուն էութիւնը կը մնայ անձանոյ։ «Գապոյա յաճումները» հեռաքրքրական են նաեւ բանաստեղծական արարքը խորհրդանշող դիմով մը — «կորստուղէ՛ Ծուպը ոսկեղօծ՝ Ծովածիծաղ ու թրթռան / քնարին բիլ նայումը քնքուն ծիծիկանքին մէջ յորդազից» երազանքը բանաստեղծութեան անող արարք է եւ բանաստեղծութիւնը կը ներկայանայ ծովային լիութեամբ եւ կը հակադրուի «փոփոխութիւն»։ Յատկանշական է որ հոս թեան ընկալումի մէջ մը քայլէ զուգահեռ բանաստեղծութեան հետ, հակառակ անոր որ փորձին տարբեր մակարդակները կը կապեն։

Սովորական երազանքը միշտ ոչ-իրականացնող երեւոյթ կը մնայ, աւելի բազմաճիւղ, վերացում քան բանի մը ընկալում։ Երազին կարելի է հասկնալ պիտակցութեան վերադարձն ու հարցումը — «Ահ, ինչո՞ւ ես մնացի դիրկն երազին այս տրտում» (էջ 82)։ Գիտակցութիւնը հոս էական անանձնութիւն մըն է եւ մատախուղութեան մը թողած լքումը։ Ասոր համար է որ «կ'իջնէ մանձրոյթն երա-

զանքին» (էջ 28)։ Երազանքին դերաբեկութիւնը եւ ուժի վատնումը շարժառիթներ են, որ Մեծարենց տարազէ երազողին զոյգութեանը՝ անոր անկումը իր առանձին խորութեան մէջ։ «Տառապանքին աշխատ հոգի ծովը լքուն / երազողին է, միշտ այլայլած ու միշտ զաւան... / Ու իր ցաւը կը տանի լուռ խարակներուն, / որոնք ընդմիջաւ կ'արհամարհեն զայն անտարբեր, / փափաքելով կարծես անկէ խուսել հեռուն» (էջ 194)։ Երազանքի այս հակադէր եղբին մէջ, երազողը միւսակ, անջատ ծով է եւ ծովը խորութիւն է ներքին ու կը կապուի անհունդէն վար եղող «մթար լուրերուն»։ Մովը կ'ապրի ինքն իր մէջ, ինքն իրմով. իր ու ժայռերուն միջեւ ո՛չ մէկ կապ, քանի որ ժայռերը կը «խուսին» եւ ժայռերը հոս առարկայութիւնը կը ներկայացնեն։

Երազանքը երեւութական ծաւալումն է հսին, ծաւալում՝ որ համապատասխան արդիւնքի մը չի հասնիր ու կը ձախողի։ Մտածումը ա՛յլ չունի բեւեռ եւ կը լրջի աննպատակ. «Մտածումը, ինչպէս ճամբորդ ուղեկորոյս / կ'անցնի փութով, անձկապէս / երկարածիկ, մերթ լուսաւոր ու մերթ անլոյս ճամբաներէն իմ մտքին» (էջ 28)։ Այս թափառումը խաւարին մէջ, կրնայ ըլլալ նաեւ «մատախուղին» մէջ, որ ուրիշ ժխտական ներկայութիւն է՝ զոց միջնորոտ եւ թանձրութիւն, ուր մեկերը կը կորուզին և ուղղութիւնները կը փոխեն։ Երեւակայութեան համար մատախուղը պատկերն է այս «տարածութեան», անելին — «Մտախուղապատ երկունքին մէջ / ուր մտածումը կը դեպերի ուղեմայր» (էջ 82)։ Թանձր մշուշը նայն հողմիկները կը թարգմանէ (էջ 43) մշուշ — մատախուղ — խաւար միեւնոյն անձեւ, անորոշ թանձրութիւնը կը ներկայացնեն եւ կը պատկանին «զոց» իրարային։ Այս «մթապին» դիւրեւերու ապաշխարանքին մէջէն (է, որ) յանկարծ կը բացուի լիարժեք, լիարակ, վազքի մը պէս՝ որ հորիզոնին ծայրը կը բարձրանայ լուսինը (էջ 283)։

Լոյսին յայտնումին կ'ընկերանայ մէկ ուրիշ յայտնում՝ խառնած սա քառասուն մէջ. «Եւ անծանօթ աշխարհներուն / անեղբուն մէջ խորհրդազեղ՝ / կ'անդրադատենայ մէջն իմ հոգուն / կրկներկոյթը դունադեղ» (էջ 71)։ «Անծանօթ աշխարհներուն կրկներկոյթը» խորունկէն բարձրացող պատկեր մըն է, որուն «կրկներկոյթէն» պէտք է հասնիլ երկոյթին։ Մեր մէջ «կրկներկոյթին» գոյութիւնը նշան է հիմնական կապին, որ կը միացնէ եսը առարկայութեան եւ ես-իր յարաբերութեան անխուսափելիութեան ազդեցութիւնը։ Այս «կրկներկոյթէն» յետոյ, «ուխտաւոր ուղեմղար» քերթողը կը քալէ «Անհունին յաւերժալու երկինքներուն» (էջ 71)։ Դէպի «Անհուն»ը գնացքը, այս մահադարձիկին վրայ՝ դեռ կը մնայ ծրագրային եւ «Յայդն է պայծառ» (էջ 70-71) չի լուսարաններ մեզ աւելի։ Սակայն այս երթը կը միանայ Մեծարենցի «հանաւորէն-անհունը» երկարաձգուող ճամբորդութեան։ Մեծարենց այս մասին կը գրէ իր նամակներէն մէկուն մէջ, ուր պատասխանելով քահանայի մը «Ինչո՞ւ Տիեզերքի հոգիին հետ չես խօսիր» հարցումին, Մեծարենց կը պատասխանէ. «Իմ գրեթէ բոլոր քերթումներս այդ մեծ խօսակցութեան կը նկրտին, որքան ալ իմինս չըլլայ Աստուծոյ հետ զէմ յանդիման խօսակցութիւն. բայց ո՞չ ապաքէն Աստուած ամէն տեղ է. Ձմբան պարզ գիշերուն» մէջ հեծած ազօթքս ու արեւին ուղղուած պաղտաւոր իրեններուն, հետեւաբար եւ իրեն համար էր. ի՞նչ երջանկութիւն, տերեւի մը խաբլափին մէջէն տեսնել տիեզերական զորութեան զապտիքը. ու այդ փոքրիկ մասնաւորէն մեկնիլ դէպի ամեռն... հաւնաւորը կը բարձրանայ, կ'երկարաձգուի դէպի ամեռն, ինչպէս արաւետ մը՝ որ լերան կողմն ի վեր միմչեւ կատարը կը հասնի» (Ազատեան, էջ 41, *Ընդգծումը մեր կողմէ*)։ Հաստատուելով ցուցնէ Մեծարենցի բնազանցական մտահոգութիւնները։ Ապա ի յայտ կը բերէ անցածին մէջ երկու ժամանակ. նախ՝ «խօսակցութիւն մը» իրերուն հետ, որոնք արտա-

յայտութիւնն (10) են էութեան, ապա՝ բարձրացում մը դէպի էութիւնը։ Այս անցումի փորձը ի զօրու է նաեւ բանաստեղծութեան համար ալ (այս մասին քիչ ետք)։

«Մասնաւորէն» բացարձակը ճամբան առաջին ժամանակը յայտնադրումն է իրերու լայն աշխարհին եւ «ընդմեջ»։ Տեսանք՝ Մեծարենց կը սպասէր լոյսին, ճրագին, եւ անոնք հաղորդակցութեան պատկերներ էին։ Առաւօտի լոյսը զարթնում մըն է. դիշերուան մղձաւանջին, մառախուղին ու մութին մէջ առաւօտը «լոյսի պար» մըն է հորիզոնէն վար, երբ «խաւարը կու տայ խոյս» եւ «աշխարհ արեւուն նոր դալուստը կ'ողջունէ» (էջ 162) երկաթորէն սպասուած լոյսը կը պայթեցնէ «զոց»ի շրջանը. անոր յառնումը յորդ է եւ բերրի ծով. «Այսօր լոյսի ծովի մը մէջ արթնայ» (էջ 93)։ Լոյսի ծովը իր թաւալումին մէջ կը հասնի մինչեւ սպասուող. «Հորիզոն ներս կը խուսէ / զբթումն ալիքի նման» (էջ 74)։ Առաւօտը կը բանայ քերթողը եւ իրերը որոնց կու տայ փայլուն մակերես։ Առաւօտը նորոգ մանկութիւն է, երբ «ժամուկ հոգին», «կը ծծէ հոտեան խաղը-տանքն ու դուռն ալուն զով» (էջ 56)։ Այլեւրը, Մեծարենցի մօտ ուժգին լին, այլ թեթեւօրէն հոտուն, հեղուկ, լուսաթափախ տարածութիւն ուր իրերու ուշխարհը կը հազնի մեւ, բոյր, դոյն, Թող առաւօտին միանայ թեթեւ մշուշ ար ձանձաղ ջրովէ՞ր պէս ամբարտակէն վար կը հոսի» (էջ 51) եւ առաւօտը կ'ըլլայ լիութիւն։ Առաւօտը է նաեւ «զգուսող», թարմացնող — «... Առաւօտն, իր խունկ մե-

(10) Պոֆէրիստական աշխարհի մը մէջ, իրերը զմարտն են. Մեծարենց այս գաղափարը կ'արտայայտէ ֆարսի մէկ մեքեթիով... Երբեք անհունութեան վրայ բացուած պատուհաններ են, իմաստաւոր այլքն համար, Արդ՝ Լուսնները կամ մեծերու աշխարհը շնորհաբար եւ վերջացած աշխարհ է, մինչ Լուսինը կը գտնուի աննկատ անդին, ուրեմն անհուն է։

քերով ... դպուկաց ամենն ալ ցուրտ ծաղիկներուն, որոնց բաժանկները բարձրացան, բարձրացան անոր նայուածքին լոյսովը թրջուելուն» (էջ 214)։ Մեզ մեր մանկութեան վերադարձնող սոսափան հանգէպ՝ Մեծարենց հիացում է, դարձացում եւ ամբողջական ընծայում, ամբողջական մոռացումովը եսին։ Այդպիսիքը սովորական սոսափան նկարագրութիւն չէ, այլ տարրերուն տարածումը դիրքնք ստեղծող լոյսին մէջ։ Ասոր համար է որ երկու տողի վրայ «փոխ» բաժը կը գործածուի — «Տանիքներուն վրայ մշուշը անդուռ լաթեր կը փռէ / ճամբաներուն վրայ արեւը՝ շողոյթներ ասկեման» (էջ 101)։ Անոնց ծաւալումին կ'ընկերակցայ հազարակցութիւնը։ Հովը, թիթեռները, մեղուն, աղանձները տեսանելի կապեր են, յարաշարժ ու կենդանի։ Այդպիսիքն մէջ նուազն է, որ կը ստեղծէ յարաբերութեանց տարածութիւնը։ Սրինգը, աքլորին ճիւղը, աղբիւրներուն ձայնը, թռչուններուն խմբերը կը ստեղծեն բարդ միջոց մը, ուր ամէն տարր կը հաղորդակցի լոյսին։

Հիացումի արարք՝ քերթուածը մեզ կը բանայ դոյնի, մեծի առաւելագոյնը բոյրէ տարածութեան մը վրան։ Փերթուածը, հետեւաբար դիտող աչքը, միայն կը նկարագրեն, որովհետեւ նկարագրութիւնը հոս արարողութիւն է, ծիսակատարութիւն՝ որ ինքն ալ կը մասնակցի առաւելուն։ Առաւելը պահն է նաեւ, երբ տարրերը ամբողջովին արտաքին կը դարձնեն երբեքինը։ «Ագասիկաներ, գինով լոյսէ ու տապէ, / օրորուելով մաքուր շուշ մը կը հեւան» (էջ 33), կ'արտաշնչեն եւ իրենց էութիւնը կը բացառայունեն, կը թափանցուն լոյսէն ու կուտան լոյս։ Լոյսի այս ներդրոծն շրջագայութիւնը իր ծիրին մէջ կ'առնէ հոգիներն ալ, որոնց «կ'իջնէ երազ մը բուրհան» (էջ 33), այսինքն՝ անոնք կ'ընկալին լոյսէն, կ'ընդունին զայն, կը կենսաւէտուին։ Ի դուր չէ որ ընկալումի արարքն ըլլայ հիացական — «Թա՛ւ հանեցէք ու ծափ դարկէք, կարծրութիւններ հինայի / եւ արփածին բոյրեր հաղած»

առտուն մեղի կը նայի» (էջ 101)։ Ասորեւն այս ճանաչածքը յայտնութիւնն է աշխարհին, եսի դէմ առկայութիւն, ուրկէ էութիւնը կը նայի մեղի ու կարեւրի կ'ըլլայ զայն ընդգրկել։ Եսը անոր դէմ ժայթք մըն է, բաց աչք մը։ Եւ կը սկսին իր յարաբերութիւնները իրերուն հետ։

Առաւելի քերթուածները, ըլլալով առաւելի հիացական նկարագրութիւններ, կը մատենեն եսին չթացումը։ Նկարագրութիւնը կը ձգտի հասնիլ, միանալ իրերու մակերեսէն եւ իրերը բերել էջով յայտնելու տարածութեան վրայ։ Նկարագրութիւնը լուծումի փորձ մըն է դիտարար հարցին — մասնաւորէն-անհունը ճամբուն վրայ անցումի կարելիութիւն մը։ Սակայն յաջողութիւնը կը մնայ խնդրական։ Նոյն՝ առաւելը չի տեսնար այնքան մը, որ եսը արմատապէս ալլակերպուի։ Երկրորդ՝ նկարագրութիւնը անկարող է բռնելու առարկայութեանն անդին դուրսն ուղի հոսթիւնը։ Նկարագրութիւնը կը ընայ մեկերու, զոյններու եւ որակներու ծիրին մէջ, աւելին՝ կը հետեցնէ հոսթիւնը աչքէն։

Առաւելը կը նորոգէր, բայց կը բաւէ որ լոյսը խառնայ եւ ժամանակի գոյութիւն մը հաստատուի, որպէսզի կէսօրը դառնայ «տօթակէզ» եւ եսը դառնայ կրկին «Ապաման հիւանդ»։ Առհասարակ, Մեծարենց կը խուսափի ծայրայեղ եւ ուժգին զգայութիւններէ։ Ես չի կրնար սիրել ո՛չ կէսօրը առանց հովու, ո՛չ միւնը առանց արեւու։ Կէսօրը հիւանդագին ու գիւրաբեկ կը դարձնէ ամէն իր։ «Վարդերը կ'իյնան» (էջ 41), սիւքն ու պլպուլը բացակայ են, անտառը կը դառնայ «մենարազմիկ» եւ ծագիկները (եւ ինչ որ բուսային է) որ լիութիւնը, բերրիութիւնը կը նիւթականացնեն, կը ցամքեն։ Ընանկարը իր հեղձուցիչ մթնոլորտով մեծ պարապ մըն է, ուր «ո՛չ անցորդ կայ» «ոչ ալ թռչուն» (էջ 41) կենդանութեան երկու նշաններ։ Այդ մահացու լոյսը՝ փոխանակ մեզ էութեան մօտեցնելու՝ կը մատնէ անոր հեռաւորութիւնն ու կորուստը։ Եւ գի-

տենք՝ որքան Մեծարենց կը խրաչի պարագէն: Սպասուածին վերադարձը թոյլ կու տայ մեզի ըսելու, որ Մեծարենցի գոյալիճակին մէկ ուրիշ երեսն է յարափոփոխ վիճակներու յաջորդականութիւնը. իրեն համար որեւէ միօրինակութիւն առկայի չէ. բացառիկ աչք մը ունի ան, կռուած իրերու մակերեսի փոփոխութեանց. ասոնց պակասը իրերուն կուտայ չէզոքութիւն եւ կրաւորականութիւն մը, որ կրնայ ենթակայութենէն անջատուի հասնիլ, այսինքն՝ կորուստի: Ասոր համար է որ Մեծարենցի պատկերները յարափոփոխ կենսք մը ունին. Մեծարենց, ըսինք, կը խուսափի անձեւ բանիւրէ, որոնք աւելի բացակայ են քան ներկայ: Հասկնալի է, ուրեմն, որ Մեծարենց էութիւնը բռնելու ճիգին մէջ՝ նախ կառչի միայն որակներուն:

Պարզ լոյսի թեմային՝ ըսենք, որ լոյսը կեդրոնական դեր կը խաղայ Մեծարենցի երեւակայութեան մէջ: Բոլոր ներկայութիւնները արեւով, լոյսով, լուսինով կը յայտնուին: Ասիկա չեղուած է մանաւանդ կնոջ հետ յարաբերութիւններու ճիւղին մէջ: Կինը՝ իր մօտ, ճշտապահ թիւքնով պէս օսկեմարտ ու ներքին է, զերբ որ ճամբէն կ'անցնի հպարտ, լուսարագ (էջ 66): Այս լուսաւոր անցքը երկու հակադիր վիճակներ կրնայ օտեղծել: Նախ՝ լոյսը ամբողջովին կ'էացնէ կինը, ու կը բաւէ որ ան դառնայ՝ յարաբերութիւնները կը ստեղծուին աչքով. աչքը ինքնին արեւ մըն է. զաւակնայի աչքերը հարստ բոցն են եւ կ'այրին հոգիին մէջ (էջ 24): Լոյսով լի աչքը կը զադրի երազային ըլլալէ եւ կարծէք, անոր լուսաւորումը կը ստեղծէ զինք եւ աչքը բնական մը կ'ըլլայ, ուր սիրահար-եսը կ'ուզէ լիանալ ու կորսուիլ. «Կ'ուզէ հոգիս գինովնալ / նայուածքիդ մէջ հրահրանք»: Երազուած, սպասուած կինը կը վերածուի զլոյս-պարիկի (էջ 34), հակադրուած միւս պարիկին, որ մահն էր: Ան ամբողջովին բիրեղ է եւ իր մէջէն կը թափանցէ լոյսը էութեան. «Իրենց մարմինն ակնմանի թափանցիկ / իրենց ծիծաղն՝ արշալոյս մը ջրնը զարնան» (էջ 87): Կը

բաւէ սիրուելին մէկ նայուածքի խաղը, որ Աշխարհն ինծի ծափ ու ծաղիկ» (էջ 51) դառնայ, որ աշխարհը լիանայ, կամ այդ նայուածքով վերադառնալ: Արեւուն ու սէրին լծորդումը կը բարդանայ, երբ Մեծարենց կ'ըսէ. «Ախրոյ յոյս մը կ'աւելի հոգիս» (էջ 38) կամ «Մէք-Արեւիդ բոցն երկարէ՛ խորերն հոգւոյս իմ պատանի» (էջ 58): Այստեղ Մէք-Արեւը օտարական օտարոյ կրակն անցատրուածէն կը տարբերի հիմնովին. արեւումը միայն մը ըլլալէ աւելի լիութիւն կը նշանակէ, կեդրոնաձիգ մազնիսում՝ եւ վիճակ մը, որ էականութեւ յարաբերութեան ընդմէջէն էութեան կը տանի:

Շատ անգամ Մեծարենց կը գոհանայ հերոսուած կայծերով» (էջ 37) եւ կը մարէ լոյսը սենեակին՝ նշան ներքին լուսաւորումի: Սակայն Մէք-Արեւը կը մնայ հեռու, լոյսը իր երկրորդ իմաստը կ'առնէ ու կը հեռացնէ: Մէք-Արեւը կը թողու անուրջ, ձեւ, մակերես ու գիծ, որոնց մէջ Մեծարենց իր բանաստեղծումը կը տեսնէ. «Անուրջի ցայտերը, ըզձա-կաթ գիծեր / դո՛ւք շարժուածներ կաքառ ու պարի՛ / հոգիս բանտեցիք զդիակին մէջ ձեռք» (էջ 88): Երեւոյթներու զգուհակին մէջ այս անշարժացումը կը հեռացնէ Մէք-Արեւին ճանաչումը, բայց միեւնոյն ատեն կ'ըլլայ զսպանակը փորձին երկրորդ ժամանակին, երբ Մեծարենց կ'երթայ ձեւերէն անդին:

Լոյսը կը բացուի նաեւ կենսաւէտումի իմաստին վրայ: Հոս է դադարեղը լոյս-մութ հակադրութեան, որ հիմնական եւ թերեւս միակ երկուութիւնն է Մեծարենցի մօտ, եւ որ իր կարգին կը պայմանաւորէ անոր ամբողջ պատկերակերտութիւնը: Լոյսն ու մութը տեսողական երեւոյթներ ըլլալէ աւելի, նշանակութիւններու երանգապնակ են: Մեծարենցի շատ մը քերթուածները կը հիմնուին այս երկուութեան վրայ (11): Մեծարենցի զէպի լոյսը ձգտումը՝ զէպի զկեանքն ու լիութիւն ձգտում մըն է եւ:

(11) Օրինակ՝ «Վերադարձի երգ» (էջ 88)։

արեւելն ուղղուած իր քերթուածները՝ կենսաւէտութի բաղձանքներ, որոնք ունենան (մութիւն) կ'երթան էութեան (լոյս-որ)։ «Եօզա», լողա՛, բարի արեւ, հիւսանդ եմ» (էջ 62)։ Արեւ-կենանք զոյգը աւելի կը հարստանայ, երբ տիեզերական պատկերումի մը կը հասնի եւ տեւեւները կ'ըսեն. «Ուկի կենանք մեզ տըւի՛ր / եւ առանցքը դուն եղար / մեր տաւիշին հոծ տենշին» (էջ 117)։ Արեւու հետ այս կապը կը կազմէ եսին բնազդային մղումը, արարածին հիմնատարը եւ այդ կապն է վեր կը փորձէ Մեծարենց բարձրանալ։ Կարելի է ըսել որ Մեծարենցի արեւախոսութիւնը կը հասնի մարդկային շատ հին մտածողութեանց։ Հին եւ սկզբնատիպային (աբշիւթի) այս միտումը մէջ ապրողին համար՝ լոյսին շողիւնը, պլլուելը մարմնին շուրջ կենսաւէտութիւն մըն է, այլափոխութիւն մը, ուր արեւը կը վերաբերուի մարմնին. «Յիւլէ՛ զիս բոցնդէն ցանցերուդ մէջ / ու օրօրէ ջերմագին, / ու կիզանուտ համբարդիդ տակ / թող հողւոյս մէջէն անցնին կարգաւ / մանուկներն ընդարմացած» (12) (էջ 62)։

Լուսնին հետ Մեծարենցի խոսակցութիւնները այլացումներն են արեւուն հետ իր խոսակցութիւններուն։ Լուսնին ուստող քերթողը կը գտնուի նոյն կացութեան մէջ. «Ուկեաւար մահկնին» (էջ 126) խառնաճրէր երանութեան կը տանի զինք, «տարագրելով հոգիին մոայլը» (էջ 126) — «Եօզափեցիր վարագոյրներն սպիտակ / եւ աշտանակն արոյրէ, / եւ հայրին մէջ վառեցիր նոր ճըրագ» (էջ 127)։ Լուսնին «կրկնեւեւութիւն» հայելիին մէջ ներցում է մեր մէջ եւ զայն պահելու համար՝ պէտք է վառել «սեն-

եակին լամպարը»։ Այսպէս զանգաղ փոխանցումով է որ լամպարը՝ էութեան հետաւոր նշոյլը, յիշողութեան մէջ իր ներկայութիւնը կը լարձրացնէ։

Թերեւս անհամոզիւ թուի լոյսի մեր մեկնարանութիւնը. մեր համոզումը հառաւանդաւոր համար կ'արտագրենք Մեծարենցի նամակէն հատուած մը. «Ջմբան պարզ դիւերուան» մէջ հծծած աղօթքս ու արեւին ուղղած պաղատանքս իրեններուն, հետեւաբար եւ իրեն համար էր» (Ագաթան, էջ 41)։ Յատկանշական է, որ Մեծարենց բնազանցական տարողութիւն տայ իր քերթուածներուն։ Սակայն արեւին ուղղուած քերթուածները իր փորձին առաջին ժամանակին մէջ կը մնան, որովհետեւ անոնք կը մգտին բոնին ձեւերը, գոյները, էակները։ Բայց անոնցմով եկող էութիւնը կը փախչէր միշտ եւ ձեւերը կը բանաւորէին։ Իրեւրը հաւանական բացումներ էին «անհունութեան» վրայ, առանց որ կարենայինք մտնել հոն. պատճառը այն էր որ կը մնայինք անձնապաշտ. կը բաւէր որ վարանք ու կասկած ունենայինք, որպէսզի ընկալումը դառնար անկարելի. — «Եւ կը փնտռեմ ... / լոյսի շող մը գոր կը մարեն անդուլ վարանքն ու կասկած» (էջ 28)։ Ուրիշ տեղ երգը չի կրնար ծածկեցնել արեւ, որովհետեւ ան զիջի եւ հառաչի թել մըն է հիւր» (էջ 98)։ Հետեւաբար, ամէն եռապաշտութիւն կը հեռացնէ մեզ էութեանէն ու չի բաւեր ընծայումը, պէտք է ներքին այլափոխում։

Մեծարենցի փորձին երկրորդ ժամանակը, փախչող էութեան փնտառումն է հապէս։ Անցումը յատկաօրէն բանաձեւում է սա տողերուն մէջ. — «Ե՛կուր, անցնինք ծառաստանէն այս լոյսին / ու բացատքէն գոյնին, ձեւին ու բոյրին, / եկուր, հոգիս, եկուր երթանք միասին, / մինչեւ Եղեմն աստուածաձայն, մինչեւ Կին...» (էջ 94)։ Գլխադիրով հասկցումով ա՛յս կենդ կ'ակնարկէր Մեծարենց, երբ ամբարձ զինք «անուրջի ցայտեղանու եւ ձեւերու մէջ կը բանտէր։ Հոն կ'ենը, ինչպէս բոլոր տարրերը, կը մնար մասնա-

(12) Անտի Ինկի Վրոն Մեծարենց վերջին երկու տարիքը քաղաքային էր համար. — «Մանուկը ամփոփ փոխաբերութիւնն է հաւ մանուկը զգացումներում, տենչերում, յայտերում, քաղաքում»։ «Անտի Ինկի» արձակ էրկար ասան ընդարձակումով։ «Անտի Ինկի» կենսաբանական գիտություններում պետք է անհրաժեշտ փոփոխություններ...» (էջ 284)։

առքի, հունարի սահմաններում մէջ, ասոր համար՝ պէտք էր երթալ աւելի հեռուն: Այս պատճառով է որ կինը հոս նստակիւն փնտրութիւն ընդլայնումը կը նշէ, կ'ըլլայ մասնութիւնը որ ուրտ: Կինը էակէն անդին գտնուող էութիւնն է, կրօնական բառով Վաստածածինն: (Հոս բացայայտօրէն, փորձը կը մտնէ Աստուածանայութիւնը քրիստոնէական ճամբուն մէջ. էութիւնը իբրեւ Աստուած ըմբռնութիւն՝ ընտրութիւն մըն է Մեծաբնիցի մօտ):

Հունարէն անհունը անցումը վերելք մըն է այլեւս, ճարահետ մը, որ լեռան կողմն ի վեր մինչեւ կատարը կը հասնի: (Ազատեան, էջ 41): (Պէտք է նկատել որ նոյն փոխաբերութիւնը զործածուած է յատկանշելու համար բանաստեղծական արկածանքները): Սրբապաշտութեան համար՝ իրիկունէն մինչեւ գիշերը զացող ժամանակը ճանաչումի եւ հոգեփոխութեան երկար տեսողութիւն է, որ Մեծարենց կը դասանայ Վերջապիտեան (էջ 134):

Այս ճանաչումի եւ ընկալումի փընտրութեանը կը սկսի կիրակոսագործ. մուտքը կ'աւանդուի իրերու կորուստէն ետք: Իրիկունը կը ծածկէ ամէն բան ու երփնապակիին վրայ կը մնայ շուրջը զուարթ (էջ 39): Սակայն եկեղեցին ուղղուած է դեռ ձեւերով, գոյներով, բոյրերով: Երբ որ արտակարգ փայլը, դանդաղ բարձրացող խունկը կը ստեղծեն վերացական ասարծութիւն, ուր մը տաճար կը բարձրանայ, կը ողորտէ որ ծագի ներքին լոյսը՝ Հոգիի պայծառ Կիրակին (էջ 39): Յատկանշական է որ երեսոյթներու անդադարեւորութիւն, լիջրութիւնը կը սկսի զփրակիլ: Վերակալին ուրիշ կլիմայ է, ճանաչումի լըրջան՝ ուր էութիւնը լոյսով կու գայ իր ծագումէն (13): Վերակալութեանը չի տար

ո՛չ ճանաչումը էութեան, ո՛չ ալ հոգեփոխութիւնը մանական. ան աւելի վերացումի պահ է, սքանչանք՝ (Էֆեսոս) ուր հոգին զգիւցելը կը թաղուի անուրջին մէջ այս չքնաղ (էջ 39): Տողը հեռու է արտայայտելէ միտքի ուղիւն խումը. արդ՝ միտքի մտածողութեան ծիրին մէջ Վերակալի կենսային պաղափարը, հոգիի ու մարմնի ալլափոխումը կ'ենթադրէ, տեսակ մը ծնունդ: Էութեան ճանաչումը եւ ծնունդը փոխանցութիւն մը կ'առաջադրեն. փոխանցութիւն՝ որուն համար անհրաժեշտ է ներքին աշխատանք մը, վերելք մը Վեպիս սարակնի վերջ (էջ 31):

Վերակալի ճանաչողութեան ձգտող ճիշդին շրջանակը գիշերն է, բոլորովին տարբեր, իր իմաստով, ներքին խառնէն:

Մեծարենցի գիշերը Վերակալի գիշեր (մըն է) ընթ / լափաղապարզ երկնքով (էջ 26): Եւստ հեռու ենք վերապաշտ ամպոտ գիշերներէն: Գիշերը շուրջ ու լուսինն է, ժայթքած իր շողակի շարունակներն անբաժան (էջ 37): Այս հեշտ, փայլուն գիշերներուն մէջ (էջ 37) տուններն անգամ իրենց լուսամուտներէն շուրջ ցայտօքն կը շրջեն (էջ 60): Զարմանալի չէ որ գիշերը՝ ամբողջովին թափանցիկ՝ լոյսի զգրութեամբ... ընթ գեղօն (էջ 73): Նման գիշեր մը արեգակնային ծաւալումի, ընդլայնումի նշան է Մեծարենցի համար. աստղերուն հեռաւորութիւնը բայց ներկայութիւնն ալ միաժամանակ, փնտրութեան, ինքնապահումի մթնոլորտ կը ստեղծեն: Առաջագոծ հորիզոնները նշան են հեռու էութեան, բայց որ կրնայ հառնել մեզի: Իրերուն, բոլոր ձեւերուն կորուստը ամբողջական է. միայն պայտեր... (հոգիներուն) միտքի ճամբան կը պեղեն (էջ 73), պայտեր՝ որ լուսանշէն ճամբան կը գծեն ու կ'առաջնորդեն հոգին: Մտածողը կամ աղօթողը կը բանայ պատուհանը Հոգիին պարզկայ գիշերին վրայ, որուն մէջ լուսալ (կ'ուզէ ան) հոգին (էջ 70): Գիշերին մէջ է որ կըրնայ տեղի ունենալ հոգեփոխութիւնը,

(13) Յագուսի փնտրութեանը քիսի գտնել ալ տեղ ալ. անո օրինակ մը Մեծարենցի Յալա տիպայի մտածողութիւններէն:

երբ ղեկավարում ծծեմ հեշտագին / կաթը մեղմահոս լույսիդ տարփանջին / ու զով շողերուդ կախարդանքը թաց» (էջ 22)։ Գիշերը կը ներկայանայ բուրբ լիութեան ու ներկայութեան նշաններով։ Ողորդուն լոյսը կը ակոխուի կաթին, կարծէք, կը խտանայ իր տեսանկյունից եւ իր իմաստին մէջ, դառնալով կենսաէտութի նշան։ Պէտք է ընդգծել մոգականին եղած ակնարկութիւնները. «Զով շողերուդ կախարդանքը թաց» եւ «Ինքեթանքիդ այլքը» որոնք զերբնային զօրութեանց կ'երթան ու կը պատրաստեն մեծ բաղձանքն ու ընծայումը. «Յնորարեր զիշեր, ա՛հ, ընդունէ՛ դիւ / ընդունէ՛, միտտիք ով անդորրութիւն, / իմ ազեր-սակոծ շունչիս սոսաւին / եւ համբոյրն անանջ՝ զոր կու տայ հոգիս» (էջ 22)։ Վերադարձնալ անդորրութեան հետ միացումը կ'իւրացնուի զրեթէ, երբ հոգին իր համբոյրը տայ եւ սպասէ զիշերի համբոյրին։ Համբոյրը կը գործածուի հոս իր ամէնէն կրօնական ու միտքի իմաստով. այսինքն՝ հաղորդակցութիւն էութեան հետ եւ միութիւն էութեան ու էակին։ Գիշերի համբոյրը պէտք է խուսէ ներս հոգիէն եւ իր զօրութիւնով լեցունէ «Ինքեթան» հոգիին, զայն յորդեցնէ, որպէսզի կարելի ըլլայ զարթնումը. «Ես արթննամ վաղընընայ ջունէս» (էջ 22). քանի որ առանց էութեան ներկայութեան մեր մէջ, մենք կը ճանաչենք, կ'ապրինք անվաւերականութեան մէջ։ Զարթնումը այն պահն է, երբ էութիւնը կը մտնէ, կը չիլի էակին մէջ եւ տեղի կ'ուռնանայ Ծնունդն ու այսպէս կ'ապրուի էակին։ Այսպէս կ'ապրուի կ'իւրացնուի ղեկավարութեան ղեկով ղեկավարման մէջ։ Վերելքը՝ զէպի կ'ինը կամ Աստուած՝ կ'ըլլայ ոչ թէ միայն անհատական, այլ ընդհանրական։ Աղօթողը կը ձգտի միանալ ամբողջ բնութեան ու իր մէջէն տանել զայն էութեան. կարծէք, այս ձեռով բնութիւնը կը դառնայ վաւերական։ Վապատածադիկ ու կապտերակ զիշերին մէջ» (էջ 91) նախ՝ հորիզոնական տարածութիւնն է, որ կու դայ, ապա՝ լիացնող նշանները (ձայն, ծաղիկ), յետոյ՝ հովը՝ միացնող տարր ու

շարժում։ Երեւութականէն անհրեւոյթը անցումը կ'իւրացնուի պատկերով. «Պատկերն ըլլամ սրբազնացած ես համայնին» (էջ 91)։ Պատկերը լիւծ (schème) մըն է, որ կը կենայ երկու աշխարհներու հանդիպման կէտին վրայ. ան թէ՛ նիւթեղէն է թէ՛ աննիւթ եւ անով միայն կարելի կը դառնայ անցումը։ Հիմնական փոխանցութիւնը կ'իւրակա-նանայ երկու յաղորդական անցումէ ետք. «Գիտէն անդին կանչիս ինծի» — Անցի՛ր, անցի՛ր» եւ «Կայծաղ մը տաս մթաբ հոգւոյս»։ Ապա՝ «Գիշերին մէջ կ'իլնէ դեռ ուղիւ լուսեղէն / կաթիլ մը կաթ՝ ծովացած ջու սրբութենէն»։ Այս ուղիւ շնորհքն է, էութեան անցումը դէպի մեզի. այս փոխանցութեան արդիւնքն է. «Ու տե՛ս ահա կը մանկանամ, Աստ-ւածամար, / ու տե՛ս ահա կը մանկա-նամ զիշերին մէջ» (էջ 92)։ Հոս լույսի թեմային կատարեալ լրումն է կատարեալ հոգեփոխութեան մէջ. միտքը հաղորդակցութիւն, էութեան ճանաչում ու լիութիւն միտածանակ։ Սակայն մանկացումը սովորական մանկութեան դառնալու փափաք մը չէ, այլ «Կիրակի ժամ Մնունդը։ Մանկացումը նոր սկիզբ մըն է, սկիզբ՝ վաւերական տեւողութեան։

Կարելի է ըսել որ մանկացումի արարողութիւնը Մեծարենցի փորձին կատարն է, ուր անոր ամբողջ փնտրումը կը բացուի էութեան վրայ։

Այս շարժումը դոյ է նաեւ բանաստեղծական արարքին մէջ։ Մեծարենցի համար բանաստեղծը ա՛յն մարդն է, որ առաջին մարդու մանկանմանութեամբ (14) ու պարզութեամբ, հանդիսատես ըրաւ մեզ տեսարանին, որ մեր գիտցածը չէր, յաւիտենապէս կրկնուած միօրինակ դանդաղութեամբ. այլ կուտացած, քաղցր նորոյթ մը՝ զոր ըմբռնելու հաճոյքը պարզեց մեզ՝ սիրելի ձեռքը» (էջ 297)։ Այս հաստատումը վերջաւորութեան է Մեծարենցի մէկ երազանք-այլ լուսնութեան, որուն մէջ ճշմարտ մը

(14) Ընդգծումը մեր կողմէ։

կամ «քահանայ մը» հովիտի մը տաճարին առջեւ կ'ընդունին երազողը եւ զայն կը տանին «խաւարտչուտ նրբուղիներէ» եւ «պարապինդ մթութեան» մէջէն (էջ 287) մինչեւ դուռ մը՝ բացուող՝ նոր հորիզոններու վրայ։ «Ամէն ինչ նոր է սակայն, նորագոյնութիւն, շարժադուռ, անօրացած, ձայները, բոյները, լոյսերը, մեւերը, ամէն ինչ» (էջ 287)։ Այս դուռն ու մանաւանդ նոր հորիզոնները բանաստեղծութիւնն են, որ մեզի աշխարհի նոր իմացում կու տան, այսինքն՝ կու տան աշխարհ մը, որ մեր գիտցածը չէր։ Յատկանշական է որ այլաբանութիւնը ահա նարկէ ջուրմի, քահանայի ու տաճարի, ռառեր՝ որոնք ծիրային ու քնազանցական տարողութիւն ունին։ Քուրմը կամ քահանան բանաստեղծն է, որ աշխարհ մը կը յայտնէ։ «Յաւաբարտչուտ նրբուղիները» ներքին աշխատունքն է, բանաստեղծական արարքը, որ կ'այլակերպէ բնականային մեր տեսողութիւնը։ Բանաստեղծի աչքը, աչքն է առաջին մարդուն, որ իրերուն նոր տեսանկիւնութիւն կու տայ։ Մոտաւորապէս նոյն բանը կ'ըսէ «բիւրեղի դիմապատկեր», որուն մէջ մանուկ մը արեւուն դէմ կեցած բիւրեղով կը խաղայ ու կը դիտէ քնանկարը։ «Ա՛հ ինչ դիմապատկեր, ծիածան ծոպեր ունի ամէն բան... / շափուկաներ, կարկահան, դիմաբիւթ, շողակ ու թարչիչ... / Մոգն է լեզուն գոյներով ու ծիրերով ոսկեծիւղ» (էջ 56)։ Հարկ կ'ա՛յ ըսելու որ բիւրեղը բանաստեղծութիւնն է, որուն միջոցով իրերը կ'այլափոխուին ու կու գան մեզի։ Մեծարենցի համար բանաստեղծութիւնը բիւրեղ նայուածք է եւ դիմապատկեր։ Իսկ բանաստեղծը ըլլալ կը նշանակէ դառնալ «առաջին մարդը»։ Մանկացումի հարցը կը գտնենք ուրեմն բանաստեղծութեան մէջ ալ եւ արդէն շատ դժուար է փոքր բանիւ բանաստեղծութիւնէն։ Մեծարենցի համար դուռն զալ եսի գոյնաբանութիւններէն ու հասնիլ համայնականին՝ կ'ենթադրէ մանկացումի արարք մը եւ ստիկա ի զօրու կը մնայ բոլոր մակարդակներուն վրայ։

Դէպի իրաւ բանաստեղծութիւնը գացող փնտառողը Մեծարենց կը նմանցնէ արահետի մը, որ լեռան գագաթը կ'ենթադրէ իրաւ փնտառութիւնը գտած էինք քնազանցական մակարդակին վրայ, կը գլուխը դրայնք գայն «բազմանշան» մէջ եւս, որ բանաստեղծական հանգանակ է ու լրացուցիչ մասը՝ «մեքնաքնադատութեան փորձին»։ «Բարձունքներու լայնի ճամբան... / ծաղկահաւ կողերէ վեր կը մտնուի / ու գագաթին հասած՝ նոր ու հեշտալի / հորիզոնին սնդուս դիմին կը նայի» (էջ 113)։ Նոր հորիզոնին ծանօթ ենք տրոհէն. ահ «բերրի» բանաստեղծութիւնն է եւ բիւրեղ նայուածքը։ Սակայն այսքանը չի բաւեր Մեծարենցին. ահ կը ձգտի ըլլալ «Համայնական Ձայն», որ կը լեցնէ «բերթողներուն ... հոգին ամոյի»։ Այս բազմանշան կը լուսարանուի, կը կարծենք, երբ կարգանք բանաստեղծի լմբռնումը Մեծարենցի մօտ։ «Բանաստեղծին ձայնը արեւելեական յարաբերութեան մը լարը պէտք է ըլլայ, բոլոր գոյութիւններուն համադրական թրքթրապոստով տրոհուին» (էջ 281)։ Բանաստեղծի ձայնը, ուրեմն, կ'ըլլայ համայնական Ձայն, երբ ահ կը դառնայ կեդրոնը յարաբերութեանց ու կը թրքթրապոստով բոլոր գոյութիւններու կշռութիւնը։ Համայնական Ձայնը կը հակադրուի անձնապաշտ երգին ու «փոփոսեցին»։ Ձայնը խայթէ մըն է, որուն մէջ տիեզերքը ամբողջ իր արտայայտութիւնը կը գտնէ եւ կ'ըլլայ։ Համայնական Ձայնը ձայնն է բոլոր տարրերուն. «Հոգիուն խմբերգ», «Աղբիւրներուն ձայների», «Լիճի մրմունջը», «Ուղիների շողալը», «Լուսնի» եւ «Բուռնութեան» երգը» (էջ 113)։ Համայնական Ձայնը գումարումը չէ տարրերուն, այլ տարրերը լինելութեան բերող կենդանութիւն։ Ան էութիւնն իսկ է որ կը բացուի մեզի ձայնով, որ ձայնով կը յայտնուի։ Ձայնը կը պատասխանէ Մեծարենցի Հիմնական Հարցին՝ եսէն դուքս գալու ճիշդն։ Ասոր համար է որ բանաստեղծութիւնը

խաղայ Մեծարենցի մօտ հւ բանաստեղծական ձևեր պետի մը գրառումը» (16) էութիւնը ընկալելու ձեւ մըն է:

Պիտի ուզէինք աւելի մօտէն քննել Ձայնին նկարագիրը եւ անով պայմանաւորուած բանաստեղծական հանգանակը: Ձայնը համայնական ըլլալու համար պէտք է որ ըլլայ «Երգը՝ իզմի եւ հառաչի» (էջ 98): Անձնապաշտ երգը չի կրնար զծաղկեցնել Արեւ մը ու «Կ'անհետի մշուշին մէջ՝ որպէս սուղակ» / որ քերականը յաւէտ չի դարձի երեւան» (էջ 98): Ներգործօն Ձայնը կը սուղութի իրերուն մէջ եւ ի յայտ կը բերէ անոնց էութիւնը: Ձայնին այս նկարագիրը կը զտնենք նաեւ «Յենթեքուն մէջ» (էջ 139) ու «Բենթեքուն» (բանաստեղծը) «մութիւն ու լուսուն պատշգամբին վրայ է» ու կը նուազէ: Քերթուածը ողորդուած է նշաններով՝ առաւօտ, սրինգ, ձայնաշար, սիւք, «Պիտի», կը նայի ծովէն անդին, լըջացած / հորիզոնին. կը կարծէ ինք կերպեր է, / իր անանուն արնալով՝ բոլոր դաշն ու ցած / ձայնաշարը՝ զոր սիւքն հեղի կը բերէ: «Յենթեքուն հոս զկը կարծէ» իր ձայնով կերպեր է ձայնաշարը: Այլ տեղ՝ արինգը իսկապէս կը կերպէ՝ «Արինգ մըն ալ այս առտուան մէջ մանիւղ / արնալն է ան այնհօրանի անդէսդէն, / որ մէկին մէջ կը ծագեցնէ երգ մը՝ արնալ (17) / ու աստղուն ըմպած դաշտին տեսին ողորդ» (էջ 98): Արինգը հոս կը ծագեցնէ «երգ մը արեւ», իր ձայնով կը բերէ արեւը իր ծագումէն եւ արեւը՝ զիտենք, նշանն է էութեան: Առանց արեւու՝ երգը «Պիտի» ընկալող թռչնիկին պէտք է (էջ 62) ու կը կոտորի: Արեւ ծագեցնող ձայնը բանն է, որ կը

ստեղծէ (18): Եւ այս ձայնը «Մեծ, հշմարիտ ու նախնական ձայն» մըն է (էջ 139), ըլլալով ձայնը առաջին մարդուն. բանաստեղծը անանձնական արինգ մըն է, ուր էութիւնը կը խօսի իր «Համայնական Ձայն»ը:

Թէ ինչպէ՞ս ամէն տարր կը հաղորդակցի կերպովն ու կ'ըլլայ մասնիկը Համայնական Ձայնին, դժուար է պատահանել՝ առանց պատասխանելու Մէկութեան եւ Ծառութեան աւելի բարդ հարցին: Մեծարենց կ'ըսէ. «Քերթուածները իբրեւ բառ պէտք է ունենան տիրելի թրթռումը, թռչունին զայլալը, մարդկերուն զորովը, զաշտին ու լերան մտանոյն զօրութիւնը»: Քերթուածները պէտք է բանին տարրերը, բանաստեղծին ձայնը պէտք է միանայ տարրերու կըլնոյթին, էութեան ու բերէ զանոնք մեզի: Այս ձեւով է, թերեւ, որ ձայնը կ'ըլլայ Ձայն: Ձայնը ներուն՝ բառին մէջէն պիտի աշխատի ու պիտի պահէ զայն կենդանի: Այնպէս կը թուի որ Ձայնին ու բառին միջեւ ո'չ մէկ հեռաւորութիւն կայ ու բառը՝ միւս կողմէ իրն իսկ է: Կ'անցնինք նման ըմբռնումի մը յարուցած դժուարութիւններուն վերայէն, դժուարութիւններ որոնք կ'անդրադառնան «Ըլլայի՞նք»-ներուն վրայ: Այս մակարդակին վրայ՝ Մեծարենցը համար հարց չի ծագիր կարծէք եւ ան կը տաւորապէս իր «երգը»՝ «... Ահաւասիկ իմ երգս, արտոններուն շունչովը լեցուն... առուեղբորքի անուխին ու անհանգիստ կովը օծուն... Հնձուած արտերուն ու հերկուած հողերուն բոյրովը, արեւեփ խաղողներուն ու մեղրացած թուզերուն անուշաբուր մկաղմուն...» (էջ 212): Եարունակութեան մէջ, ապառնիք զոր՝ ծածուկութեամբ՝ հակառակ շեշտին, երգին կարելիութիւնը ապագային մէջ կը նետէ: «Ես պիտի թրթռամ, տերեւներուն հետ, թռչուններուն հետ, 'հովին հետ,

զանայ Մեծարենցի մօտ: Մեծարենց աւելի հարկաւորակամ զիծերաւ քերթող է, քան օւղառաւայեացի:

(16) Պատասխան ակնարկութիւն մը Ստեփաննի գործին:

(17) Ընթերցումը մեր կողմէ:

(18) Հարկ կայ մտածողիւս որ բառաստեղծի ամէնէն արմատականն ու իրաւ իմաստը մէջ կը շարժի՞մ այլեւս:

տեղծութիւնը ծաւալական (15) դեր կը բոլոր ձայներուն, բոլոր հրանշներուն, բոլոր բուրմէններուն հետ...» (էջ 213): Այդպէս կը մնայ միշտ ծրագրային, Մեծարենց աւելի այդ երգին մասին կը խօսի, քան կը խօսեցնէ երգը: Այս տարազումը, ոտկան, «Համայնական Ձայնին» բանաձևումն է, բանաստեղծական հանդանակ, որ աղբիւրն է «Լլայի» ներքին:

Լուսնեան ընկալումն է հոգ: Մեծարենց մտքով լինի լիութիւն է, մանկութիւն, որուն համար աշխարհը կը վերաշաղկապուի: Լուսնին, կարծէք, իր մէջէն կը թափի ու կը լեցնէ ամէն ինչ — ծաղիկները, ծառերը, կանաչը նշանն են այս լիութեան. աւելի՛ր, այդ կանաչ արիւնք, կը խուժէ ամէն կողմ. «Ո՛հ, դադը աւելի՛ր» որ չորս կողմէն կը պոռթկայ / ընծիւղներով, շաղիկներով անհամար, / Ո՛հ արեւոտ խալտանքն արբուն աղջկայ / որ կը դեղու, բորբոք, արբշտ ու յիմար, / կուրծքին դարնան՝ որ թեւերովն իր բազմի / տարփոտ հիւղին կը պլլայ ու հեղեղ / կանաչով մը կու տայ Համբարձի իր դալար» (էջ 162): Հողին կանաչի մէջէն այս բարձրացումը, կանաչին սեւային բողբոջումը (19), ողորդումը, կենսաւշտող ուժի մը ներկայութիւնը կը մասնեն: Ուրիշ տեղ բնականութիւն լիութիւնը կ'ոգեկոչուի պատկերներէ ու առատութեամբ եւ տարրերը կը բուրբոխէ ետին շուրջ՝ որ այսպէս կը դառնայ կեդրոնը զարկերակայ յարաբերութեանց: Եւ կու գայ գոհութիւնը — «Շատ էր լեցուն հոգւոյս, ով Տէր, բազմաբեղումն այս շրջափակ» (էջ 123): Բազմաբեղումն ուր գեփիւղը, հասկնալի պատճառներով՝ «վերադարձած մանկութիւն» մը կ'ըլլայ:

Այս «շրջափակ» բազմաբեղումն ու

Համայնական Ձայնը կը միանան «Լլայ» յիշերով: Հոն այլեւս եւր կէտ մըն է միայն, ա'լ անանձնական ու դուրս: Ձայնը կը ձգտի միայն թրթռուլ տարրերուն հետ:

Միութեան, ծաւալուն եւ լիութեամբ լեցնելու ձգտումին պատկերները կը սկսենք բոլոր տարրերուն մէջ, որոնք հապէս բաց են ու կը բանան, յարաշարժ են կամ մեծ տարածութեանց մէջ կեցած: Այսպէս են իրիկունը, հովն ու հիւղը: Իրիկունն ու հովը ծաւալումի բացառաւոր նշաններ են, որոնց վրայ Մեծարենցի երեւակայութիւնը երկարօրէն աշխատած է: Իրիկունը «ծաւալական ու բուրբուն» է (էջ 120), յարաշարժ ալիք ու ողորդող ներկայութիւն (էջ 419), միեւրդեալ հիւղը աւելի բարդ է: Ան կը դառնայ հոն, ուր ճամբաները կու դան, կը հանգուցանին, «ծաւալական» վայր՝ բաց դաշտին մէջ. հիւղը է նաեւ կեդրոն՝ հոն պէս, սկսնակ՝ բայց բացք բոլոր շուրջի տարրերուն. ան «նիւթացած հարաւոր» է (էջ 111) եւ իր ծուխով կը հանդրգակցի բոլոր ուղղութիւններուն հետ ու կը կանչէ: Հետեւաբար՝ հակառակ իր անշարժութեան իրիկունն չափ սփռական է հիւղը:

Իրիկունը նախնաորելի պահ է. Մեծարենց «Իրիկունն տարփառութիւն» է (էջ 211): Իր իրիկունը «Բարբ է ու լիաձեռն ու հոտեւան» (էջ 123), մտքովական ծաւալում եւ նիւթացած դեռ. անիկա Մեծարենցի երեւակայութեան համար ծաղիկներու հեղեղ է. «Իրիկունը շէկ-լիկ հերարժանկ, առյուծ, արճենի իրիկունը շահասպարմաներով, մանիշակներով, վարդերով զարդարուած, իրիկունը ստոստուն, կը սահի կ'անցնի քովէս» (20) (էջ 211): Ծաւալական այս իրիկունը թէ՛ հորիզոնական եւ թէ՛ ուղղահայեաց ընդլայնում ունի: «Ո՛հ իրիկունն ըլլա-

(15) Առաջ համար է նաեւ այս տարածական ու սփռական պատկերակերպումը մը կը գործ-

(19) Գամալի այս պատկերը Մեծարենցի մօտ ի յայտ կը բերէ շատ տեղայնական գլխաւորեան մը գոյութիւնը:

(20) Մեծարենցի մօտ տեղայնական տեսարանը կը բացառուի կա՛մ իրը ամբողջութեամբ մէջ բռնելու ճիշդով, կա՛մ ալ լիութեամբ արտայայտելու տեսանկով:

յի ետքի ամբողջ պատկերակերտությունը հիմնադրված է երկու հատույթի վրայ — կեղ-րոնախոյս ծառայող պատկերներ ու լիու-թեան նշաններ (21)։ Երկու հիմնական զվայարանք — տեսողությունը ծառայում է համար, լսողությունը լիութեան համար։

Իրիկունը իբրեւ լիութեան ժայթք ու տարածում բնութեան վրայ, կը զար-գացնէ Մեծարենցի փորձը։ Մեծարենց կ'ուզէ իրիկունն ըլլալ, որպէսզի տա-րածուի, հպի ամէն իրի, միանայ անոր ու իր ձայնին մէջ զայն լիացնէ, բերէ քերթուածին որպէս բառ ու թրթռացում։ Իրիկունը հեռ միաձուլուելով, Մեծա-րենց կը ձգտի ընդգրկել ամբողջ բնու-թիւնը եւ հասնիլ Ձայնին։ Իրիկունը պատկերն է «Համայնական Ձայնին» էլի երգովը թռչուններուն, մարդերուն / ու տարրերուն ազազակովը արոփուն (էջ 108)։ Իրիկունը համադրական է եւ ամ-բողջ մը եւ իրիկունի քերթուածը կ'ուզէ համադրել շատութիւնը միութեան մէջ եւ մէկութիւնը շատութեան։

Հովը, մանաւանդ Հիւրը համայնա-սիրական մասհոգութիւններ ալ կ'ար-տայայտեն։ Ընութեան ու մարդուն հան-դէպ ոչրը, ձրի համայնասիրութիւն (22) չէ՝ այդ սէրը կը բխի համայնականի միաստեղէն։ Արդարեւ՝ միաստեղ մասծո-ղը ուժերու բացառիկ աղբիւր է եւ յոր-դուսի կեդրոն, ուր եսը ամբողջապէս անանձնական է ու չբացած։ Այս ուժերու

յորդումն է, որ կը վերածուի էականութեան հանդէպ սէրի։ «Հիւրիչն» մէջ «ուզեւո-րի» սպասող եսը կը զսնէ մարդը, եւ հոն՝ ընծայումը բացայայտ պատ-կերն է անզայտացած եսին։

Էութեան ընկալումէն ետք՝ Մեծա-րենց կը բացուի էականութեան։ Պէտք է քննել իր յարաբերութիւնները անոնց հետ։ «Տո'ւր ինծի, Տէ'ր»-ի պատկերնե-րու ընթերցումը երկու շարժում կը յայտնէ։ Ընկալում ու ցրում։ Ընկա-լում է օրինակ. «Տո'ւր ինծի, Տէ'ր, ու-րախութիւնն անանձնական / ծաղիկներու պէս զայն ժողովեմ ճամբուս վրան» (էջ 133)։ Կը յաջորդէ ցրումը. «Տո'ւր ին-ծի, Տէ'ր, ուրախութիւնն անանձնական / զայն շուրթերուն վրան ձգեմ իբրեւ ուռ-կան, / զայն իբր արօր աղօսներուն ձը-դեմ վրան» (էջ 134)։ Այս շարժումները ցոյց կու տան որ եսը բաց է թէ՛ հո-թեան, թէ՛ էականութեան։ Իր մէջէն էութեան կը տարածուի տարրերուն վրան, ինչպէս որ իր մէջ է որ էութեանը կ'ըլ-լայ Ձայն։ Մեծարենցի մօտ բանաստեղ-ծը կը գտնուի էութեան զարկին վրայ եւ էութեանը տինամիք ու կենսային է։

Պիտի ուղէինք շեշտել «Ըլլայի» բարդութեան եւ յարուցած հարցերուն վրայ։ Նախ՝ «Ըլլայի» իբրեւ բայ կը միացնէ եսը իրեն, օրինակ իրիկունին։ Քանի եսը միանայ իրերուն, այնքան ան կը դառնայ անոնց կեդրոնը եւ հազոր-դակցութեանց շարքը։ Սակայն այս կա-պը երկու ձեւով կարելի է մեկնաբանել։ Կա'մ այն է, որ եսը միանալով տարրե-րուն ամբողջապէս տարր կը դառնայ եւ կը կորսուի, մինչդեռ պէտք էր միայն դուրս ելլել, եւ կա'մ ա'յն՝ որ եսը կ'անձ-նականացնէ տարրերը, կը լայննայ ա-նոնցմով եւ ես — իր յարաբերութիւնը կ'անհետանայ (23)։ Մեծարենցի «Ըլլա-յի» այս հակադիր կարելիութիւններուն վրայ կը խաղայ, առանց ընտրելու։ «Է-

(21) Այս գրաբնագ ամենամեծը գտնու-կը մնայ մօթեմբու եւ քննարկարարու աւ-տումադրութիւնը։ Դիտել տանք օակայն ք-Մեծարենցի ազդեցութիւնը, Սփիւռքի կարգ մը մարտիկ կուսակցութեան վրայ, մօթեմբու եւ քննարկարարութեան մեքենայական գործածութեանը կ'ըլլայ։ Պարագան մայն է թէ՛ Բեռլինի եւ իր հետեւորդներուն։

(22) Ցատեղի բերքացում մը, գծախա-տար։ «Ըլլայի» մեքենայական վերածած է քառյալա-կան բերքաւածներու։ Օրինակ մըն է սա, Խրիշ-նարու կարգին, որ Մեծարենցի գործը պարզու-մակ ու քննարկական կը դարձնէ։

(23) Իմտեա, «Ենթաշխարհի» վերջին էջն-բուն մէջ այս քննարկը կարելիութիւնը կ'ըմբռնէ։

բրիկուան իղձօին մէջ անհետացումի ձեւը տարբեր է: Եսը կը կորսուի եւ կը թողու անորոշ դերբայ մը. «Իրիկուան մէջ անհետելու յոյսն ունենայ» (էջ 122): Այս անկատար բաղձանքները կ'իրազործուին կարծէք, երբ Մեծարենց կը գրէ. — «Ո՛հ, ես չկամ իրիկուան մէջ լուսնիստ / հոծ իրիկուան մէջ այս երանգ ու լոյսէ» (էջ 152): Այնպէս կը թուի որ եսը ամբողջապէս կը կորսուի տարբերուն մէջ, այսինքն՝ Մեծարենց վերի առաջին մեկնարանութիւնը կ'ընտրէ:

«Ըլլային երկրորդ հարց մըն ալ կը զնէ. ըղձական եղանակի անկատար ժամանակը, անկատար կը թողու եսին իր դառնայը: Ձախողութիւն է արդեօք: Թերեւս Միւս կողմէ՝ Մեծարենց կը ձգտ-

ուէր ըլլալ «Համայնական Ձայնը», լարր բոլոր դոյրութիւններուն: Հո՛ս ալ ձախողութիւն: Դժուար է պատասխանել: Առաջինի պարագային, «Ըլլային» նշանն է յարաբերութեանց եօին ու իրեն, որոնք հակառակ բաղձանքին, կը մնան զէ՛մ դիմաց, անջատ բայց հաղորդակից: Ձայնի պարագային կրնանք ըսել, որ Մեծարենցի «Ըլլային»ները իրենց ճերթուածի սահմաններուն մէջ, կը փորձեն մեկ հասցնել «Ձայնին», երբ իրենց ծառայումին մէջ կը հասնին հաւասարակշռութեան մը, ուր եսը ձգտում մըն է զէպի բառով եզած իբրեւ, ուր եսը ձայնին մէջ կը միանայ իրին, քանի որ ձայնը «Մէ-դին» մէջ կը ծապեցնէ երգ մը՝ արեւ» (էջ 98):

Գ. Գ.



2. ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ԺԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ՝ 9-11ԻԴ ԴԱՐԵՐՈՒՆ

Ա. ՆԵՐԱԾԱԿԱՆ

Է. դարու իր չգեղ ծաղկում էն ետք, հայկական ճարտարապետութիւնը ամբողջական անկման շրջան մը ապրեցաւ: Ճարտարացումն բաժն իսկ անբաւարար է յատկանշելու համար Հայաստանի կառուցողական գործունէութիւնը Է. դարուն եւ Թ. դարու առաջին կէտին ընթացքին, քանի ժամանակն այդ ժամանակաշրջանէն ոչ մէկ յուշարձան հասած է մեզ:

Երջան մըն էր այդ՝ երբ հայ ժողովուրդը, ճնշուած խալիֆաներու ծանր լուծին տակ եւ ենթակայ քրիստոնէոյ բիւզանդիոնի երկդիմի քաղաքականութեան ու ծաւալապաշտական ախորժակներուն, ամբողջովին կլանուած էր իր ազգային զոյամբարտով: Քիչ չէին նաեւ ներքին դժուարութիւնները, — երկպառակութիւն՝ նախարարներու միջեւ (բիւզանդական եւ արաբական կողմնորոշում), բաժանում՝ Եկեղեցիէն ներս (քաղկեդոնականութիւն եւ ազգային Եկեղեցի), կրօնա-ընկերային հերձուածներ (Պաւլիկեաններու աշխուժացում), եւայլն: Հասկնալի է, անշուշտ, որ նման

պայմաններու մէջ հիմնովին անտեսուած ըլլալ շինարարութիւնը:

Թ. դարու վերջին տասնամեակներուն, մինչ տկարացման լուրջ նշաններ տեսնուի, եւս աւար Պաղատի խալիֆայութիւնը, Բիւզանդիոնը վերստին կը զօրանար եւ կ'ընդարձակուէր՝ հայազգի կայսր Բարսեղ (Պաղի) Ա.ի իշխանութեան տակ: Պայմաններու բերումով՝ երկու «մեծերուն» համար նպատաւոր դարձաւ ինքնավար Հայաստանի մը վերականգնումը՝ որպէս տեսակ մը էջաբամլում: 885-ին, խալիֆան Հայաստանի կառավարիչ՝ «Իշխանաց Իշխան» Աւուս Բաղրատունիին ընդհեյ թաղաւորական թաղ. ունիւնակէս յետոյ՝ Բարսեղ Ա.ինք ալ ճանցաւ Հայոց թաղաւորութիւնը: Պէտք էր ստիպել սպասել մինչեւ Ժ. դարու 20-ական թուականները՝ որպէսզի, Աւուս Բ. Բաղրատունիի ջանքերուն շնորհիւ, իրականանային երկրի փաստացի ազատագրումը եւ ընդարձակումը:

Աւատապետական բաժանումները միշտ ալ տիրող ազդակ մնացին սակայն, հանդիսանալով բազրատունեաց քաղաքական եւ քաղաքակրթական փառքի

կարճատևութիւնն հիմնական պատճառները: Ժ. դարու սկիզբները Արծրունիները արաբ քաղաքական ազդեցութեան հնթակայ առանձին թագաւորութիւն ստեղծած էին Վասպուրականի մէջ: Արեւմտեան Հայաստանի կարեւոր մէկ մասը կը մնար ենթակայ բիւզանդական կայսրութեան: Բագրատունիներու քաղաքական ազդեցութեան շրջաններուն մէջ իսկ կազմուած էին կիսանկախ փոքր ձթաւարութիւնները (Կարս, Տաշիր-Ձորազեա, Հարաւային Սիւնիքի կիսանկախ իշխանութիւն, եւայլն):

Գաղաքական-վարչական այս խառնիճաղանձին մէջ, յամենայնդէպս, օտար լուծերու մերթ մասնակի, մերթ ամբողջական վերացումով, Հայաստանը արձանագրեց քաղաքակրթական եւ կառուցողական փայլուն վերածնունդ մը: Եւ ասիկա, ո՛չ միայն Բագրատունեաց թագաւորութեան սահմաններէն ներս՝ ուր Աշոտ Բ. Երկաթի օրերէն սկսեալ, շուրջ 120-130 տարուան համեմատաբար խառնադէպ եւ բարդաւան դարձացման միջովայր մը ստեղծուեցաւ, այլ զի մը ամէն կողմ՝ եւ Արծրունեաց թագաւորութեան, եւ Կարսի ու Տաշիր-Ձորազեայի վաղաքիւններէն, եւ Սիւնեաց աշխարհին մէջ:

Դարաշրջանի հայ գրական եւ մշակութային վերելքը անշուշտ է: Գրիգոր Նարեկացին (միտղի՞ք քանաստեղծութիւն), Գրիգոր Մազիսարոսը (փիլիսոփայութիւն), Մխիթար Հերացին (բժշկագիտութիւն), Յովհաննէս Սարկաւազը (ուսողութիւն), Դրասխանակերտցին, Ասողիկը, Թովմա Արծրունին եւ իր պատմագրութիւնը շարունակողը (պատմիչներ) ծանօթ դէմքեր են, յաճախ մեջազգային հետաքրքրութեան եւ վարկի արժանացած: Այս շրջանին է որ ստեղծուեցան վանական ճանապարհները (Տաթեւ, Նարեկ, Հաղբատ, Սանահին, եւայլն), վերադարձնեցաւ Հայ թատրոնը, ծագեցաւ մանրակարգութիւնը: Բայց քաղաքակրթական վերելքը սահմանափակուած չէր միայն գրական եւ մշակութային բնագաւառներուն մէջ:

Ջարդացան առեւտուրը, արհեստները, դիւղատնտեսութիւնը, հանքերու շահագործումը եւ մետաղագործութիւնը: Յարանուն վերելք ապրեցաւ շինարարութիւնը. — մեծցան հին քաղաքները (Նախիջեւան, Վան, Դուին, Կարին), ստեղծուեցան նորերը (Անի, Արծն, Կարս, Արճէշ, Խլաթ, Ոստան, եւայլն): 961-ին Կարսէն Անի փոխադրուեցաւ Բագրատունեաց թագաւորական աթոռը: ԺԱ. դարու սկիզբները՝ Անին կը հաշուէր արդէն շուրջ 100 հազար բնակիչ: Փաստօրէն, Գագիկ Ա. օրով, ԺԱ. դարու առաջին տասնամեակներուն, Հայաստանը դարձած էր Առաջադուր Ասիոյ ուժեղ եւ բարդաւան պետութիւններէն մէկը:

Ախոսս սակայն, թագաւորութիւնն ու վերելքը երկար կեանք չունեցան: 1041 թուականին Բիւզանդիոնը յաջողեցաւ վերագրաւել Անին: Երկու տասնամեակ ետք, 1064-ին, Հայաստանի չքեղ մայրաքաղաքը ինկաւ սելճուք հորդանքու պետ Ալփ-Արսլանի ձեռքը: Շուրջ մէկուկէս դար ան կրկին պիտի հիւծէր օտար ու դաժան լուծի տակ, մինչեւ որ, ԺԳ. դարու սկիզբը, Ջաֆարեան իշխանները վերստին ազատագրէին Հայաստանի դէժ, հիւսիսային մասը՝ առիթ ընծայելու համար հայ շինարարական արուեստի նոր մէկ վերածնունդին:

Բ.— ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Աւատապետական կարգերու յառաջացած մասնատուածութիւնը չէր կրնար լանդրադառնալ նաեւ շինարարական ըմբռնումներու եւ զեղարուեստական ոճերու դարձացման ընթացքին վերայ: Հիմնական սկզբունքներու եւ ոճի ընդհանուր միութիւն մը կը մնար անշուշտ, հայ ճարտարապետական Ոսկեդարի ամբակուռ աւանդներուն վրայ խառնուած, բայց կառուցողական եւ զարգանդակային մանրամասնութիւնները միջովայրին համեմատ առանձին զարգացում ունեցան: Այսպէս էր ահա՝ որ

Հայկական ճարտարապետության մէջ յառաջ եկաւ նոր երեւոյթ մը, — կառուցողական շրջանային զարգացման ցանցը՝ ստեղծուեցան Այրարատ-Շիրակի (Տաշիր — Զորագետի ենթարածինով), Արծրունեաց կամ Վտապուրականի, եւ Սիւնեաց ճարտարապետական զարգացմանը: (*) Ասիկա չի նշանակեր, անշուշտ, որ տուեալ ժամանակաշրջանին Բարձր Հայքն ու Տուրքերանը, ինչպէս նաեւ արեւմտեան Հայաստանի այլ շրջանները դուրի են եղած շինարարական գործունէութենէ: Բայց ներկայիս շուրջ Հնագիտական եւ Հնարարական յոսակ տուեալները՝ այդ շրջաններուն վերաբերեալ: Տիրուր է մտածել որ կրնանք եւ երբեք չուենալ — Եղեւնէն եւ Արեւմտահայաստանի պարզութենէն անդին, թուրքերը հետեւողական կերպով ջանացած են անէացնել ամէն յուշարձան՝ որ, իր լուռ ներկայութեամբ, շրջանի վաւերական տէրերուն ի նպաստ վկայութիւն մը կը կազմէր (տեսնել այս մասին մեր «Ճարտարապետական» հիւնքը — ՀԱՍԿ ամսագրի Եղեւնի յիսնամեակին նուիրուած բացատրութիւն մէջ, 1965 Ապրիլ): Իսկ անկէ առաջ, դժբախտաբար, Արեւմտահայաստանը տակաւին չէր ունեցած իր թոշածանքները:

Մէկ այլ կարեւոր տարբերութիւն է. դարուն հետ՝ այս ժամանակաշրջանի քաղաքացիական ճարտարապետութեան շինարարական զարգացումն է: Մենք խօսեցանք արդէն կարգ մը հին քաղաքներու մեծնալուն եւ նոր քաղաքներու ստեղծման մասին: Գորգ-Ղար-Ղար գարեբու աշխարհիկ ճարտարապետութեան մասին բաւական յստակ դադարաւ մը կու տան մեզի Անիի մէջ Ն. Մարի զեկավարած պեղումները եւ Թորամանեանի ուսումնասիրու-

թիւնները: Թաղաւորական եւ իշխանական շինարարական, հիւրանոցներ ու կարուստաններ, հարուստ քաղաքացիներու մենատուններ, կամուրջներ, վանական զրատուններ եւ սեղանատուններ, ամբոցներ ու պարիսպներ՝ իրենց մնացորդներով կը վկայեն այդ ժամանակաշրջանի քաղաքային եւ ուղղափառական ճարտարապետութեան զարգացման բարձր աստիճանին մասին:

Այս շրջանին է նաեւ որ լայն տարածում կը սկսին ունենալ Հայկական ներառական խաչքարերը, որպէս գերեզմանային կոթողներ կամ յիշատակի զէմք մը յուշարձաններու կոշտած յուշարձաններ: Քանակագործութիւնը կը զարգանայ ընդհանրապէս, բայց որպէս ճարտարապետական օժանդակ արեւեստ՝ ան տակաւին կը մնայ համեմատաբար զուռ (թէեւ ոչ է. դարու չոր ժողովրդականութեամբ) եւ ընդհանրապէս ենթակա՝ կառուցողական տրամաբանութեան: Խաչքարերուն վրայ ան կը գտնէ իր ամբողջական ազատութիւնը, կ'արտայայտուի մերթ փոփոխութիւն քանդակներով, բայց աւելի յաճախ՝ երկրաչափական հիւստիւնով զարգացմանով, որոնց ճոխութիւնն ու այլազանութիւնը պարզապէս սպիտակուցիչ է: Գերեզմանային ճարտարապետութեան մէկ այլ զարգացումով՝ եկեղեցիներու գաւիթները կը ստեղծուին (իբրեւ տոհմային կամ եկեղեցական պանթէոններ, գէթ սկզբնական շրջանին):

Եկեղեցական ճարտարապետութեան մէջ՝ բաւական ակնբախ տարբերութիւն կը տեսնուի մէկ կողմէ մեծ քաղաքներու (Անի), իշխանական (Աղթմար) եւ կրօնապետական (Տաթև) կեդրոններու տաճարներուն, եւ միւս կողմէ՝ գիւղական կամ վանական երկրորդական եկեղեցիներուն միջեւ: Վերջինները ընդհանրապէս փոքր են, յաճախ մատուռներ միւսին, եւ կը թուին ծառայած ըլլալ իբրեւ նախափորձեր՝ աւելի կարեւոր եւ աւելի յատկանշական յուշարձաններու կառուցման համար: «Նրանց կառուցողական պրակտիկայի շրջանակներում է, — կը

(*) Այս բայերի մասին տես Գրիգոր Մ. Մանգականեան, «Արեւիկա» հայ հարս. պատմութեան մ. գլուխ, էջ՝ 180-190, — ինչպէս նաեւ, Թոմ Էնկելսոն, «Հայկական ճարտարապետութեան Սիւնեացի զարգացումը» (Երևան, 1960):

զրէ Ս. Մնացականեան, — որ հիմնականում մշակուում եւ իր բնորոշ դէմքն է ստանում դարաշրջանի ռեալիստական ուղղութիւնը (Ակնարկ հայ մարտ. պտմթմ. — էջ՝ 180)։ Մինչդեռ առաջինները իրենց շքեղութեամբ եւ վարդաքանդակային յարդարանքով կոչուած էին մրցելու պալատներու եւ մենատուներու ճոխութեան հետ։

Միտիք մտածողութեան եւ ապրումներու շնորհիւ ընդհանուր երեւոյթ է տուեալ մամուլակաշիւին համար։ Կրօնական վերացումը ներքին բնական պահանջ էր հաստատացնելու բազմութեանց համար։ Նարեկացին իր դարաշրջանի ծնունդն է եւ անոր հարազատ արտայայտիչը։ Ու բնականօրէն, կրօնական ապրումներու այդ զարգացման արտայայտութիւնը կը գտնենք նաեւ եկեղեցական ճարտարապետութեան մէջ։ Միտիք կիսախաւարդ կ'իշխէ եկեղեցիներէն ներս՝ որոնց լուսամուտները նեղ եւ երկար ուղղահայեաց բացուածքներու են վերածուած։ Թէ՛ ներքին տարածութիւնները սահմանող գծերը (մոյթեր կամ որմնամոյթեր, որմերու անկիւնային գծեր, եւայլն) եւ թէ՛ արտաքին որմնախելներն ու կամարաշարքերը դարձած են աւելի սլացիկ, աւելի վերամբարձ։ Կառուցուածքներու հորիզոնական չափերու համեմատական փոքրացման հետ՝ աւելցած է դէպի վեր, դէպի երկինք սլացքը։ Համաչափութիւններու աւելի վերամբարձ դառնալուն հետ կը ներդաշնակուին նաեւ զարդաքանդակները՝ դառնալով աւելի մանրաշխատ եւ նրբագեղ։

Թէեւ Աղթամարի, Զարնջայի եւ Սիւնեաց շարք մը եկեղեցիներուն մէջ ներքին կառոյցը արտաքին բաւական յստակ դրսեւորում կը շարունակէ գլխաւոր եւ, բայց յաճախ կարելի է նկատել ընդհանուր մղում մը՝ ներքին մասնատուածութիւնը արտաքին միասնական ծաւալներու մէջ պարփակելու (Վանեկան, Խճկոնքի Սարգսի եկեղեցի, Կոթափանք, Փրկիչ, Ապուղամբենց Սբ. Գրիգոր, եւայլն)։ Մեծ ընդհանրացում գտած

է ի մասնաւորի գմբէթակեր սրահի կերպարը (Նորատուա, Հոռոմսի Սբ. Մինաս, Շիրակաւան, եւայլն)։

Տիրական յատկանիշներ կը մնան, յամենայնդէպս, պարզութեան ու յստակութեան ձգտումը՝ մանաւանդ երբ ի նկատի կ'ունենանք ներքին ծաւալները, ուր վերելիս ոչ մէկ զծերու եւ ձեւերու զսպումութիւնը, ինչպէս նաեւ կառուցողական տրամաբանականութիւնը, որ կ'արտօնէ թիթեղնէ կառոյցին ա'յն մասերը միայն, որոնք ճշունակներու կրման կամ փոխանցման շինարարական պաշտօնը չունին։ Այս վերջին սկզբունքին յաջորդապէս արտայայտութիւններէն մէկը Հովիւի եկեղեցիին ներքին եւ արտաքին որմնախորշերու դրութիւնն է։ (*)

Գ.— ԱՆԻՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԻԿ ՃԱՐՏԱՐԱՊԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Անին Ե. զարէն սկսեալ կը յիշատակուի արդէն, բայց իբրեւ Կամարական իշխաններու ամբողջ միայն։ Անի քաղաքին կերտումը Բագրատունիներու դործն է։

Միջազգային պատմագիտութիւնը Անին ծանօթացաւ Նիկոլայ Մառի դեկամբրած պեղումներուն (1892-93, ապր. 1904-17) եւ Թորմանեանի չափագրութիւններուն եւ ուսումնասիրութիւններուն շնորհիւ^(*)։ (Ստրիկովըսկին կարեւոր անդ յատկացուցած է Անին իր երկհատոր Պատմութեան մէջ։ Աւելի ուշ՝ 1934-ին, Մառը հրատարակեց

(*) Տե՛ս այս մասին՝ Ա. Խաչատրեան, — «L'Architecture Arménienne», — էջ՝ 22-24։

(**) Տեսնել ի մասնաւորի՝ ՎԵՐԻ, քաղաք թէ՛ ամբողջ՝ ԱՅԳԱԳՐԱՅԱՆ ՀԱՆԿԵՆԻ 22-րդ եւ 23-րդ համաթիւներով, եւ Հայաստանի արքայական ու իշխանական ազարանները եւ անոնց հերթին կենցաղը ԳԵՂԱՐՈՒՆԻՍՏԻ 1817 թ. Թ-դ համարին մէջ։ Նոյն աշխատութիւնները տեղ գտած են նաեւ Թորմանեանի երկհատոր Նիւրթիւն մէջ։



Անի պարիսպները

(Համազգայինի համաժամային)

Իր «Անի» գիրքը, որ կը պարունակէ պեղումներուն քույր արդիւնքները: Շահեկան տեղեկութիւններ կարելի է նաեւ քաղել Բ. Առաքելիանի «Փաղափնը եւ արհեստները Հայաստանում 9-րդ-13-րդ դարերում» երկհատոր աշխատասիրութենէն (Երևան, 1958 եւ 1964): Վերջին տարիներուն՝ Հայաստանի մէջ լոյս տեսան Անիի հազարամեակին նուիրուած շաբաթ մը աշխատութիւններ, որոնց մէջ իր քննարկան-համադրական բնոյթով մեծապէս շահեկան է ճարտ. Վ. Յարութիւնեանի «Անի քաղաքը» գիրքը: Այս վերջին աշխատութենէն է որ քաղուած են հետագայ մանրամասնութիւնները՝ իրենց կարեւորագոյն մասով:

Անին կը զտնուի Ախուրեանի (Արփաշայ) եւ իր օժանդակ Անի գետակի անդնդախոր կիրճերուն միջեւ ինկած մօտաւորապէս եռանկիւնաձեւ բարձրութեան վրայ: Ախուրեանի միւս ափը ներկայ Հայաստանն է, որ դժբախտաբար հեռուէն միայն կրնայ դիտել Բազրատունեաց մայրաքաղաքին մնացորդները՝ իրենց այսօրուան լքեալ ու

փլուզումի ենթակայ միեակտմ:

Սոր ու երկար կիրճերով հզորուած ըլլալը մեծապէս կը դիւրացնէր քաղաքի պաշտպանութիւնը: Աղատ կը մնար հիւսիսային մասը միայն՝ ուր, 964-ին, Աշոտ Գ. կառուցել կու տայ քաղաքին առաջին պարսպապատերը: Սակայն մայրաքաղաքին արագ ընդարձակումը կը ստիպէ անոր յաջորդ Սմբատ Բ. Թաղաւորը՝ 977-ին ձեռնարկել երկրորդ ու շատ աւելի ընդարձակ տարածութիւն մը ընդդրկող պարիսպներու շարքի մը կառուցման: Բայց քաղաքը կը շարունակէ իր ընդարձակումը, քանի պեղումները ցոյց են տուած, որ բնակելի ընդարձակ Թաղամասեր կը տարածուէին նաեւ Սմբատեան պարիսպներէն դուրս: Կիրճերու խորակներուն մէջ իսկ գտնուած են ժայռափոր բնակարաններ, խանութներ, դամբարաններ, նոյնիսկ մատուռներ: Այս ամբողջ տարածքն էր ահա, որ կը կազմէր ԺԱ. դարու հարիւր հազարնոց բնակչութեամբ Անին՝ իր հին քաղաքով (Աշոտեան պարիսպներէն ներս գտնուող մասը՝ որու հարաւը, դեռախառնուրդին

մաս, միջնաբերդը կը բարձրանար), նոր փաղափով (Աշոտեան եւ Սմբատեան պարիսպներուն միջեւ) եւ արուարձաններով (Սմբատեան պարիսպներէն դուրս)։ Սմբատեան պարսպապատերէն ներս ինկած մասը (քաղաքի պաշտպանութեամբ մասը) առանց միջնաբերդին՝ յաճախ ճանչցուած է նաեւ շահաւտան անունով։

Միջնաբերդեան հայ ռազմադիրտական ճարտարապետութեան յաջողագոյն կերտուածքներէն են Անիի պարիսպները՝ իրենց շուրջ 2,5 քմ. ընդհանուր երկարութեամբ։ Շատ աւելի լաւ պահպանւած են Սմբատեան պարիսպները, քաղաքից նոր ամրացումներու եւ նորոգութեանց ենթարկուած ըլլալով (սոսնց կառուցուած են ետք, Աշոտեան պարիսպները ա՛յլ կորսնցուցած էին իրենց հիմնական կարեւորութիւնը)։ Անոնք արտաքին կողմէն եզերուած էին ջրուով լեցուած խոր խրամներով։ Կարեւորագոյն մասերուն մէջ՝ Սմբատեան պարիսպները եղած են երկշարք. անոնք ունեցած են 1 մ. եռասուլքիւմ եւ 8-10 մ. քաթարուլքիւմ. երկու կողմից էլ երեսպատուած են սրբաւառ, կամեմաւոր ձեւի եւ շափերի ոչ մեծ փոքրով՝ շարուած կրաշաղախով ու պէշոնի լիցքով։ (Վ. Յարութեան, — «Անի փաղափ» — էջ 42)։ Իրարմէ 10-20 մեթր հեռաւորութեան վրայ՝ պարիսպներու արտաքին եւ ներքին պատերէն զուրա կու դաշին կիսաշաղկապաձեւ բուրգեր կամ աշտարակներ, ամրացնելու համար պաշտպանողական դրութիւնը (փոքր թիւով աշտարակներ ունեցած են նաեւ քառակուսի կտրուածք)։ Հետաքրքրական մտահոգութիւններէն զուրա՝ մեծ ուշադրութիւն դարձուած է նաեւ պարսպապատերու գեղարարական արտայայտականութեան. քաղմերանդ քարերու օգտագործումը, զարդային մաքրիւթներն ու արձանագրութիւնները, պատերուն մէջ տեղադրուած խաչքարերն ու քանդակները կը ձգտէին գեղեցկացնել հիմնականին մէջ զուտ պաշտպանողական իմաստ ունեցող այդ կերտուածքներն իսկ։ Մանօթ են «չախմատէ» կամ ճատ-

րակածեւ գարպտը, քաղաքանշան՝ յովադի քանդակը, եւայլն։ Թշնամիներու ներքնափանցումը զժողարացնելու նպատակով՝ արտաքին եւ ներքին պարսպապատերուն մէջ թացուած դռները երբեք զէմ առ զէմ չէին դառաւորուեր։

Առանձին պարսպապատերով ամրացւած էր միջնաբերդը (շուրջ 700 մ. երկարութեամբ)։ Այլ ամրութեանց հետքեր չտեսնուած են նաեւ միջնաբերդէն դէպի հարաւ-արեւմուտք եւ հարաւ-արեւելք՝ երկու կիրճերուն տիրապետող դիրքով, ինչպէս նաեւ հրուանդանի հարաւային ծայրամասին (Աղլկաբերդի բլուր)։

Միջնաբերդը կը զբաւէր բլուրի մը զաւակը եւ կը բաժնուէր երկու մասի՝ քաղաքի կողմի վիթաւոր դարպասէն դէպի հարաւ բարձրացող երկար միջանցքով մը։ Անոր մակերեսի 1/6 մասը կը զբաւէր պաշտական բնակիչները՝ որու մնացորդները երեւան են հասնում 1907-8-ի պեղումներուն ընթացքին։ Իրերայաջորդ տոմսերու եւ իշխանաւորներու (Կամսարականներ, Բագրատունիներ, Բիւզանդացի իշխանաւորներ, իւլաժ Ծնտտաւորներ, Ջափարեան իշխաններ, եւայլն) կատարած քաղմաթիւ փոփոխութիւններն ու յաւելումները բարդացուցած են անոր կառուցը, ինչ որ մեծապէս կը զժողարացնէ ուսումնասիրութիւնները։ Յամենայնդէպս, մնացորդներու պատահիկներն իսկ կը բաւեն՝ երբեմնի շփոթութեան եւ փայթածութեան մասին զաղափար մը կազմելու համար։ Դահլիճներէն՝ ուշադրաւ է ի մասնաւորի 10-21 մեթր չափերով ընդարձակ դահլիճ մը, որ ունեցած է լայնաթոփոք թաղակապ ծածկ։ Այլ շատ մը սրահներու եւ սենեակներու պատերը կը թուին զուրկ եղած ըլլալ երեսպատման սրբաւառ քարերէ, ինչ որ ենթադրել կու տայ, որ անոնք ծածկուած էին թանձր ծեփով, զորոգելով ու զարդային այլ ծածկոյթներով։ Չտեսնուած են որմնանկարներու հետքեր։ Պնդուած է նաեւ պալատական քաղմիքը, որ ունեցած է սալաքառակի ջեղուման եւ տաք ջուրի մատակարարման զարգա-

ցած դրութիւն:

Մառի պեղումները յայտնաբերած են նաեւ քաղաքի գլխաւոր փողոցները, հրապարակները, բնակելի թաղամասերը, խանութներն ու արհեստանոցները, հիւրանոցները, անկեղծիքներու մնացորդները, քարէ առուակներու մէջ զետեղուած քաղաքի շրջուղի կաէ խողովակները, եւ այլն: Տարաբախտաբար, քաղաքական պայմաններու բերումով, Անիի անցեալի հետազոտութիւնը 1917-ին փաստօրէն դադարեցաւ եւ Բազմաշէններու մայրաքաղաքի մէր ճանաչումը մնաց անկատար:

ԺԱ. դարու աշխարհիկ շինութիւններէ՝ պէտք է տակաւին յիշատակել Աշտեառն պարիսպներուն մօտ կանգնած Էրկարկանի օրինազարդ մէկ յուշարձանը, որ Շէտտատեաններու օրով վերածուեցաւ մզկիթի՝ մինարէի յաւելումով (Մանուշէի մզկիթ): Սկզբնական շրջանին՝ կը կարծուի որ շէնքը զործածուած է իբրեւ քաղաքային մաքսատուն:

Արուարձաններն էին առուելաբար՝ որ կը կազմէին աշխատաւոր դասակարգի բնակավայրերը: Այս մասերուն մէջ պեղումներ կատարուած չեն կամ դրեթէ, բայց դրնուած են ժողովրդական հիւղակներու մնացորդներ, եւ մանաւանդ՝ ժայռափոր բնակարաններ: Հակադրութիւնը մեծ է եղած - ինչ որ հասկընալի է տուալ դարերուն համար - քաղաքի իշխող եւ ունեւոր դասակարգի փարթամ մենատուններուն եւ զործաւորական թաղամասերու կենցաղային պայմաններուն միջեւ:

Մեծապէս հետաքրքրական է ստաբիլիթայ Անիի՝ իր քարանձաւային բլրնակարաններով, կիրճերու խարակներուն մէջ բացուած ժայռափոր թաղամասերով ու մատուռներով, բայց նաեւ՝ միջնաբերդէն եւ քաղաքի այլ մասերէն դէպի այդ թաղամասերն ու կիրճերը առաջնորդող զաղտնուղիներով:

Շարք մը կամուրջներ քաղաքը կը կապէին Արուբեանի եւ Անի գետակի միւս ափերուն: Ջրափի մեծ կամուրջը, որուն ստապիւնայ խարխուղները կարելի


էր տակաւին տեսնել պեղումներու օրերուն եւ որուն վերակազմութեան նախագիծը տուած է Թորամանեան, ունեցած է 31,25 մէթր թուիչով կեդրոնական կամար մը: Կամուրջներու շինուածքը, տախտակածածկ մասերով, նախատեսուած էր վտանգի պարագային զանոնք փշնամիներու կողմէ անգործածելի դարձնելու նպատակով:

Մայրաքաղաքը Շիրակի նահանգին կապող գլխաւոր ճամբան կ'անցնէր Նինէն հիւսիս դռնուող Հոռոմոսի վանքին քովէն, ուր Արուբեանի վրայ ձգուած էր նոյնպէս քարէ կամուրջ մը: Նոյն ճամբուն վրայ կը գտնուէր Ղաշի կոչւած շինութիւնը (հաւանաբար յաղթութեան կամար, ըստ Վ. Գարութիւնեանի, - «Անի քաղաքը» - էջ 22-23), ինչպէս նաեւ հիւրանոց-կարաւանատուն մը:

Անիէն ոչ շատ հեռու կը դառնէին Մաղաւթբերդի եւ Տիգրիսի միջնադարեան ամրոցները, մեզի հասած բաւական լաւ միեմակով: Մաղաւթբերդը Անիէն 6 քմ. միայն հեռու է, ոչպի հարաւարեւմտեւ, Արուբեանի ալ ափին. ան ունի բրդաւոր կրկնակ պարիսպներ, որոնց միջեւ ինկած պարագութիւնը անհրաժեշտութեան պարագային կարելի էր չուրով լեցնել: Տիգրիսը կը գտնուի Անիէն հիւսիս-արեւելք, Շիրակեանի մօտ. օղակային դրութեամբ կառուցուած են անոր հզօր ու քարձրաբերձ պարսպապատերը: Երկուքն ալ գոյութիւն ունեցած են Անիի իբրեւ քաղաք կառուցումէն առաջ, բայց ապահովաբար մասն կազմած մայրաքաղաքի պաշտպանողական գօտիին:

Բայց երկրի պաշտպանողական դերութիւնը սահմանափակուած չէր միայն թաղաւորանիստ քաղաքի շրջանին թ. - ԺԱ. դարերուն՝ Հայաստանի կարեւոր բոլոր քաղաքները ունէին միջնաբերդեր (Կարս, Կարին, Արուս, Եւայն) եւ աւատակետական յուրր կարեւոր կեդրոններ՝ ամրաց-դղնակներ (Գառնի, Ամբարդ, Բազարամ, Կոշ, Բէմի, Բազարերդ, Բաղաիւջար, Վանքամարերդ, եւ այլն):

Դարաշրջանի ամրոցաշինութեան



Արքայդի բնդի տեսարանը

(լուսանկար նարո- Վաչիկ Խաչատրյանի)


կարեւորագոյն կերտուածքներէն մէկն է Ամբրդը՝ Արագածի հարաւային լանջին, Ամբրդ եւ Արիսաշեան գետակներու կիրճերուն հատման անկիւնին վրայ: Աւելի հին ժամանակներէ՝ այնտեղ ամբողջը դոյութիւն ունեցած է արդէն, որ նորոգուած կամ վերակերտուած է Ժ. դարուն: Մեզի հասած են օղակաձեւ աշտարակներով զդնակը, պալատական կառուցուածքներու մասեր, ԺԱ. դարուն Պահլաւունի իշխաններու աւելցուցած պարիսպները եւ զօրավար Վահրամ Պահլաւունիի 1026-ին կառուցել տուած եկեղեցին: Ամբողջ ունեցած է ջրմուղ, ջրամբարներ եւ բաղնիք:

Դ. - «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵԿ ԵԿԵՆՆԵՐՈՒՆ» ՔԱՂԱՔԸ

Պատմիչները գրած են՝ որ երբ Արքայդը Արաշի Անին պաշարեց (11-րդ դարու կէսերուն), մայրաքաղաքի հազար ու մէկ եկեղեցիներուն մէջ յատուկ ազօթքներ կատարուեցան հայրենիքի փրկութեան համար: Թիւին մեծութիւնը, եթէ առնուի առատութեան, նոխութեան ու փարթամութեան փոխաբերական իմաստներով, յափազանցութիւն ըլլալէ կը դադրի: Բազմաթիւներու շրջանէն մեզի հասած են վեց-եօթը եկեղեցիներ (կան ուրիշներ ալ անշուշտ՝ ԺԳ-ԺԴ):

դարերու վերածնունդին պատկանող), որոնք, հակառակ այսօրուան իրենց փլատակ կամ կիսուներ վիճակին, կառուցողական թոփոքի եւ թէքիթի զոհարներ են՝ հազար ու մէկ եկեղեցիներու սրահական արժէքով:

Դարաշրջանի Հայկական ճարտարապետութեան տիրական դէմքն է Տրդատ ճարտարապետը: Միջնադարին հռչակի տէր արուեստագէտ-կառուցող էր Տրդատ 989 թուականին՝ ան Բիւզանդիոնի Պապի Բ. կայսեր հրաւերով նորոգեց Սուրբ Սօփիայի 31 մեթր տրամագծով լայնաթուղէ դմբէթը, որ փլած էր (ներկայ դմբէթը Տրդատի կանգնածն է): Հայաստան վերադառնալով՝ ան յաջորդ տարին իսկ աւարտեց Արգիճայի կաթողիկոսական պալատն ու տաճարը: Ապա կատարեց թաղուհիի նիւթական աւանջութեամբ ձեռնարկեց Անիի Մայր Տաճարի շինութեան, զոր աւարտեց 1001 թուականին: Անմիջապէս յետոյ, Գագիկ Բագրատունի թագաւորին կարգադրութեամբ, ձեռնարկեց Զուարթնոցի նմանողութեամբ Սբ. Գրիգոր մեծ տաճարի շինութեան («Գագկաշէն»):



Անի, — Մայր Տաճարի Յերկայ Վիճակը (Համագոյայինի հուսմանդէն)

Հայկական ճարտարապետութեան զլուխ-զործոցներէն է Տրդատաշէն Մայր Տաճարը: Ջորա կիւրորնական մոյթերուն վրայ կը հանդէս դմբէթը, որու թմբուկին փոքր մէկ մասը միայն մնացած է: Բայց մայրաքաղաքի զլխաւոր եկեղեցիին կիւրորնական տարածութիւնը պէտք էր որ ըլլար հնարաւոր եղածին չափ ընդարձակ. մտածում մը, որ Տրդատը մը դած է շուր մոյթերը առաւելագոյն չափով մօտեցնելու հարաւային եւ հիւսիսային պատերուն. այնքան՝ որ կողմնակի շուրս որմնասիւններուն եւ շուրս մոյթերուն խաբիսիները շատ մօտ են իրարու: Այսպիսով Մայր Տաճարի կառուցը շատ մօտեցած է դմբէթակիր սրահի կերպարին:

Իր արտակարգ միասնականութեամբ, մոյթերու զանգուածեղ ազդեցութիւնը մեղմացնող սիւնախումբներով եւ դէպի վեր սլացքով շատ տպաւորիչ է տաճարին ներքնամասը: Լայնաթուղէ կամարները թեկուած են՝ երկկնդրոն դրութեամբ (ինչ որ գոթական արուեստի նախապատրաստական փորձերէն մէկը կը նկատուի): Բարձրէն՝ իր առաւատաւոր խաբիսիով (Coupole à pendentif) կը սերտիկէր դմբէթը: Իսկ արտաքին ճակատները մշակուած են նրբազեղ եւ վերնասլաց կոյր կամարաշարքերով: Հիւսիսային եւ հարաւային ճակատներուն, ներքին որմնասիւններուն համապատասխանող կէտերուն վրայ, բացուած են երկուական որմնախորշեր, բայց ոչ միակտուր՝ ինչպէս Հռիփսիմէի որմնախորշերն էին, այլ առամասուր կտրուածքով եւ վերի կամարային մասին մէջ քանդակազարդ պսակ կրող: Քանդակները նուրբ են եւ մանրաշխատ, ինչ որ, ըսինք արդէն, դարաշրջանի ընդհանուր յատկանիւնն էր:


Իր 36-անիստ Սբ. Գրիգորիմ վրայ (Գագկաշէն), որ կոչուած էր արդէն իսկ մասամբ աւերուած Զուարթնոցը Անիի մէջ վերականգնելու, Տրդատ զրաւ նոյնպէս իր անհատական կնիքը եւ դարուն նրբացած ըմբռնումներուն շրջմը: Այսպիսով՝ չափերով Մայր Տաճարէն շատ

աւելի մեծ Գաղկաշէնը ունեցաւ Զուարթնոցէն տարբեր համալսարաններ, դարձաւ շատ վերնասաց. ահոր զմբէթակիր տարածութիւնը մեծցաւ եւ է. դարու զանգուածեղ մոյթերը փոխարինուեցան Նուր ու սլացիկ սիւնախուրճերով: Բայց նման բարդ կառոյցի մը պարագային Տրդատեան նրաքոյմները ունեցան ոչ-դրական հետեւանքներ: Կը կարծուի, թէ ԺԱ. դարու երկրորդ կեսուն Գաղկաշէնը արդէն իսկ կործանման սեմին էր:

Ապուլամբնց տոհմի 12-անիստ փոքր եկեղեցին (Սբ. Գրիգոր), ծաղկոցածուրի պառթիւսիսի վրայ, կառուցուած է Ժ. դարուն (հաւանաբար առաջին կէսին) Պայտաձէն վեց ապսխաններ եւ, որեւէլեան կողմը, խորանաձէն երկու բացւած ճեղքներ, անոր ներքին կառոյցը կը կազմեն: Արտաքին նիստերը մասնատող եռանկիւնաձէն որմնախորշերը անոր կուտան է. դարու Իրինտը եւ Զորավարը յիշեցնող երկու յիշման, ըստ Ապուլամբնցի, հաւատարմի շրջանի ոգիին, շատ աւելի հարուստ է իր քանդակային ձեւակերպով. զմբէթի թմբուկը հզօրութեամբ է կրկնակ կոյր կամարաշարքերով:

Պահլաւանի իշխաններու Սբ. Փրկիչ եկեղեցին (1036) ներքնապէս ութապսիտ է, արտաքինապէս՝ 19-անիստ եւ առանց որմնախորշերու: Ներքին ապսխանները խոր պայտաձէն չեն, ինչպէս Ապուլամբնցի Սբ. Գրիգորին մէջ, այլ պարզապէս կիսաշրջանաձէն: Ապսխաններուն միջեւ կանգնած են մէկական սիւններ՝ կամարներով միացուած: Ներքին մասը, յատկապէս ապսխաններու զմբէթարդները, ծնփուած են եւ զարդարուած՝ որմնանկարներով (Փրիստոս, աւետարանիչներ, նկարիչը՝ ինքը, եւայլն): Փրկիչը ներկայիս վերէն վար կտրուածի երեւոյթ ունի, — կէսը կանգուն եւ միւս կէսը՝ ամբողջովին փլատակ: Արտաքին նիստերը օժտուած են խուլ կամարաշարքերով:

Առաքելաց եկեղեցին, կառուցուած Ժ. դարու վերջերուն կամ ԺԱ. դարու սկիզբը, քառապսիտ-խաչաձէն կառոյցով



Ս. Փրկիչ եկեղեցիի ներկայ վիճակը (Համագայիմի հատմանը)

տաճար մըն է՝ մօտաւորապէս քառակուսի արտաքին ձեւի մը մէջ պարփակւած: Անկիւնային չորս սենեակներ (ոչ-պարզ յատակադնով, իւրաքանչիւրը մէկ խորանով օժտուած) կը դրաւեն խաչաթեւերուն եւ արտաքին պատերուն միջեւ ինկած տարածութիւնները: Թորածան-նանի վերակազմութեամբ, կեդրոնական մեծ զմբէթէն զատ չէնքը պէտք է ունեցած ըլլայ նաեւ չորս փոքր զմբէթներ՝ անկիւնային սենեակներուն վրայ բարձրացող (դրութիւն մը, որ կը մէջեցնէ, դարձեալ ըստ Թորածաննանի, Ե. դարու իջմանման Մայր Տաճարը): Եկեղեցին ունեցած է նաեւ զուեթներ, հաւանաբար աւելի ուշ աւելցուած:

Առանձին չահեկանութիւն կը ներկայցնէ Անիի հիւսիսային արուարձաններու զարդը՝ փոքրիկ «Հովիւի եկեղեցին»՝ որու յատակադնովը աստղաձէն է: Եռանկիւն որմնախորշեր զարդարած են անոր պատերը այն մասերուն մէջ, ուր երկրորդ յարկը կրող կամարները անմիջական ներգործութիւն չունին, մինչ կամարներու ըզարտումները ուղղակիօրէն կրելու կոշուած մասերը ձգուած են անհրաժեշտ հաստութեամբ: Պայթիւշաթիւ եւ Խաչատրեան, ցոյց տալէ ետք որ այս մօտեցումը լիովին հարազատ է Հայ

ճարտարապետներու կառուցողական տըրամբանութեան, կը հաստատեն, որ պատի տարրադադրման այս դրութիւնը, որ ջղաւորումներ կը յառաջացնէ, ինչպէս նաեւ տալիս յարկը ծածկող խաչածիւռած կամարներու ճարտարապետական լուծումը, գոթական արուեստը պատրաստող յատկանիշներ են: Ըստ հորեւոյթին առաջին յարկը եղած է դամբարան, իսկ անոր վրայ բարձրացած դժբխակէր երկրորդ յարկը՝ աղօթարան մատուռ մը:

Տուեալ ժամանակաշրջանին Անիի մէջ կառուցուած եկեղեցիներէն՝ թուենք տակաւին պայտաւով փոքր եկեղեցին (միանաւ թաղակապ պաղիւթերու ուճով), միջնաբերդի մատուռը, Խաւքաշեցի եկեղեցին, եւայլն:

Հակառակ Հայաստանի մէջ տիրող

քաղաքական պայմաններուն, հակառակ աւատապետական բաժանումներուն եւ ամբողջական պետութեան մը չգոյութեան, Բագրատունեաց մայրաքաղաքը եղաւ մշակոյթի, արուեստներու եւ առեւտուրի այն դլխաւոր կեդրոնը, որ իրեն քաշեց մտքի, արհեստներու եւ քարի մշակները, ձեւեր ու դադարները հայթայթեց անոնց, ազդեց անոնց վրայ: Անին, էթէ Թ. ԺԱ. դարերու քաղաքական միակ կեդրոնը չէր, այլ՝ անմիտելիօրէն՝ Հայաստանի մշակոյթի եւ կառուցողական արուեստի ամենահիմնական եւ ամէնէն աւելի ճառագայթող վառարանը եղաւ: Ճարտարապետական տեսակէտէ՝ անոր ազդեցութիւնը անմիջական էր մանաւանդ Այրարատ-Շիրակի եւ անոր ենթարաժանումը կողմող Տաշիր-Ձորաղետի կառուցողական դպրոցներուն վրայ:

(վերջը յաջորդով)

Հ. Տ.

ԱՂԲԻԻՐՆԵՐ

Թ. Թաթումեան.— Շնիքեր Հայկական Ճարտ. Պատմութեան,

Ա. Ե. Բ. Խառոյնք

Արուեստի Ինստիտուտ.— «Ակնարկ Հայ Ճարտ. Պատմութեան»,

(Երեւան, 1964)

Վ. Յարութիւնեան.— «Ամի Քաղաք», (Երեւան, 1964)

Ս. Մնացականեան.— «Հայկ. Ճարտ. Սիւնիքի Դպրոցը», (Երեւան, 1960)

Վ. Յարութիւնեան.— «Միջնադարեան Հայաստանի Քաղաքապետներն ու Կամարքները», (Երեւան, 1960)

Բ. Առաքելեան.— «Քաղ. եւ Արհ. Հայաստանում 9-րդ-13-րդ դարերում», (Ա. Ե. Բ. Խառոյնք, 1958 եւ 1964)

Ա. Խաչատրեան.— «L'Architecture arménienne» (Paris, 1950)

Ս. Տէր Ներսիսեան.— «Aghtamar, the Church of the Holy Cross»

M. Ispiroglu.— «Die Kirche von Aghtamar» (Պերլին, 1963):

Ն. ԶԱՐԻՈՒՏԵԱՆ

ՊՈՏԼԷՐ՝

ՍԻՐՈՅ ԱԼՔԻՄԻԱԳԷՏ



Գ.

Պոտլէր մարդ մըն էր մարդոց մէջ։ Սկիւր իրեն համար հղաւ ուրախութեան եւ տառապանքի աղբիւր մը եւ իր գործին մեծագոյն քննամերէն մէկը։ Ատիկա երբեմն եղաւ լոյսի լուսնի մը, երբեմն տիգի ճահիճ մը, եւ սակայն ինք առաւ այդ ցնխը եւ գայն յոյսի վերածնեց։ Գործը աստղագարդ քող մըն է նետուած իր ներքին ապրումներուն վրայ։ Վերցնենք այդ քողը եւ զննենք սրտին ծալքերը։

Պոտլէրի սկիւր զործնից երկու ուղղութեամբ՝ երկրաւոր եւ երկնաւոր։ Այսինքն՝ մէկ կողմէն մարմնական, բրտորէն՝ զգայական, հիւանդագին եւ անյաղ, իսկ միւս կողմէ՝ միստիկ, զգացական, երազային, հրեշտակային։

Ինչպէս բացատրել այս երկուութիւնը։

Պոտլէր կը հաւատայ հոգիի գոյութեան եւ քրիստոնէական սկզբունքներուն։

Հոգին արագընթաց է, բայց մարմինը տկար։ Ուրեմն մարդու պայքարի մարդագուշտ մըն է, ուր կը մենամարտին հոգին եւ միտք, կիրքն ու զաւափարը, բնազդը եւ առաքինութիւնը։ Կատարի, արիւննայի կոխներ տեղի կ'ունենան։ Իսկ կան տապալելու սահմանուած ընտրեալներ, բանաստեղծներ, արուեստագէտներ, որոնք իրենց մէջ ունին երրորդ անձ մը, որ միտքն է։ Եւ մինչ մարմինը կը բզկատէ հոգին, Պոտլէրի միտքը կը գլխի, կը քննէ ու կը դատաւարաւէ։ Պոտլէր յստակապէս ու անխնայ վերլուծող մըն է եւ անգութ իր իսկ սկարութիւններուն հանդէպ։

Պոտլէրի սիրային կեանքը սկսաւ հեշտամոլութեամբ։ Սիրոյ մէջ փնտռեց մարմնային հաճոյքները, փնտռեց զգայարաններու զրգոտմ եւ հիւանդագին հետաքրքրութիւններու գոհացում։ Հետագային հոն ուղեց դռնել յագեցումը

իր պատրանքներուն եւ մոռացում՝ իր անմկուսեանն:

Այսպիսի սէր մը մարդս կը տանի միայն յոգնածութեան, ձանձրոյթի եւ յուսախաբանութեան: Եւ ինչ որ մարմինը չի կրնար ընել ու զգալ, կը զգուի մըտքին ու երեւակայութեան: Իսկ եթէ ենթական երկոտանի անասուն մը չէ, այլ մտածող էակ մը, եթէ ունի կատարելիք գործ մը, իրագործելիք իտէալ մը, եթէ լոյս մը տակաւին կը պլպլայ իր հոգիին ներսած ճարարին մէջ, հակազդեցութիւն մը, զարթնում մը տեղի կ'ունենայ անկասկած:

Տարբերեալ ետք, բիրտ իրականութիւնը կը ցցուի ենթական առջեւ: Ենթական յանկարծ կ'անդրադառնայ որ այդ մարմնական թոճութիւնն մէջ, ինք տուեալն չէ ճանչցած իրական սէրը: Եւ պատրաստ է սիրելու: Ճշմարիտ ու առնչուող սիրով մը ա'յն անձը, որ պիտի յայտնուի իրեն, պիտի յայտնուի ճակատագրականօրէն: Կը գտնուի նոր կեանքի մը սեմին, ուր կ'ուզէ ստեղծել մաքուր ու անբիծ հոգիով: Որովհետեւ, եթէ զգայարանները յազնցած ու յզգացած են, զգացումները կը մնան տակաւին անկաշկանդ ու կոյս:

Եթէ Պոտլէր ձախողեցու սիրոյ ֆիզիքական եւ հոգեկան արշաւին մէջ, պատասխանատունն ո՛չ մարմինն է եւ ո՛չ ալ հոգին, այլ՝ միտքը: Եւ ինչպէս կ'ըսէ քննադատ մը.— Պոտլէր կը սիրարարներ իր Եւքլիդով: Կը ջանար սիրտը ազատ պահել, որպէսզի միտքը չկաշկանդուի: Մէկ խօսքով, ինչպէս շատ լաւ գիտեն արուեստագէտները, սիրաբանութիւն կ'ընէր զբականութեան համար: Հոս, սակայն, կայ ահաւիժ վտանգ մը՝ երեւակայութիւնը: Ան չի կշտանար երբեք, կը փնտռէ միշտ տարօրինակը, անկարելին, կը շեղի ուղիղ ճամբէն, չի գտնար իրականութեան սուածներէն եւ արհամարհելով դայն՝ կ'ապրի կեանքէն զուրս:

Երբ մտային եասիրութիւնը պատնէշ կ'ուզէ կանգնել սիրտին չուրջ՝ ա'յն ատեն սէրը կը դռնուայ պարզ խաղ մը,

փնտռող մը, մշտնապէս արկածախնդրութիւն մը: Ենթական կը սկսի կամաց-կամաց արհամարհել կիներ, որմէ այնքան շատ բան սպասեց եւ շատ քիչ ստացաւ: Եւ դայն կը նկատէ արդէն լաւ Հաճոյքներու գործիք մը՝ միշտ փնտռուած եւ միշտ յուսախաբող: Եւ այդ պարագայը լեցնելու համար կը դուրսածնէ գինին, հաշիշը, աֆիոնը, Պոտլէրի գրչին տակ, հետեւեալ խօսքերը կը փաստեն մեր ըսածները.

— Կիմը՝ տամսիլիմ հակապատկերն է, ռուսի Կլեմ Է Բուխարաւ Կլաւտա: ... Կիմը քնակամ էակ մըն է, Կլաւտա՝ անհիլի եւ միշտ գոհիկ: Կիմը չի գիտեր գոհացանել իր իմ մարմնէն: Պոտլէր Նիցշէնէն կ'առնէ հետեւեալ դասը. Ամբարձրածնը է Կիմը Ժնեւ: Նիցշէն կ'ըսէր. «Եթէ կեանք մը այցելութեամբ երբեք, մտրակը մի՛ մոռնար»:

Կեող հոգին վերլուծելէ եւ դայն դատելէ եւ դատապարտելէ ետք, արուեստագէտը կը դատէ ու կը դատապարտէ ինքզինքը: Կը յանդի ա'յն եզրակացութեան, որ հաճոյքն ու տառապանքը նոյն բաներն են: Եւ Պոտլէր, որ դրդակայուն ու խելացի է և արտասովոր երեւակայութիւն մը ունի, ինքնիրեն համար կ'ըլլայ դատաւոր, դատախազ եւ դահլիճ:

Եւ վերջն իմ ու դաշտը.

Եւ աստակն իմ ու նրբը.

Եւ յամացապարտն իմ ու դառնը:

Պոտլէր հասած է արդէն սրտի յաւիտենական ամայութեան, կը գտնուի անսպասելի մը մէջ, ուր երբեմն կը ստի իւր երբեմն կ'այրի, եւ մահուան սարսափը սրտին՝ կը սկսի պղծել թանձրացած աւազը, գտնելու համար զիգուած տարիներու առանձնութեան տակ թաղուած արիւնոյ եւ աղաղակոյ պարմանին, որուն մէջ տակաւին չէր մեռած սիրելու և սիրելու, գոհուելու և ապրելու տենչանքը: Եւ, 32 տարեկան, բանաստեղծին հոգիին մէջ կը ծնի 16 տարեկան երիտաւորը, որուն սիրտը տակաւին կոյս է եւ պատրաստ բռնկելու գեղեցիկ նար:

ւածքի մը առջեւ: Եւ նկատելով որ տա-
կաւին չէ սիրած իրական սիրով՝ կը պա-
հանջէ սիրոյ իր բաժինը:

Կը սկսի սիրոյ փնտռութիւնը: Սակայն
անթիւ կապանքներ կ'անդամալուծեն իր
անկեղծութիւնը: Ունի կեղծ Հպարտու-
թիւն մը, կը վախնայ ծիծաղելի դառ-
նալէ, կը կասկածի իր իսկ անկեղծու-
թեան վրայ:

Պտուէր, նոյնիսկ երբ սիրած է ան-
կեղծութեամբ, չէ սիրած պարզութեամբ,
որովհետեւ իր մէջ մարդը չէր, որ կը
փափաքէր սիրել, այլ բանաստեղծը, ար-
ւեստագէտը: Եւ այս է պատճառը որ
միշտ ձախողեցաւ սիրոյ մարզին մէջ: Բա-
րեախտաբար իր հանճարը զինք փրկեց
ոտոյդ զահաւիժումէ: Եթէ ժանն ճիւ-
լալ էւ Տիկին Սապաթիէ զինք յուսա-
խար ըրին իրբ մարդ, սակայն բանաս-
տեղծին ներշնչեցին իր ամէնէն դեղեցիկ
եւ յուզիչ տողերը:

Պտուէրի սիրոյ երգերը անմահացու-
ցին եւ իրենց բոցով բերեղացուցին իր
սիրուէիները, որոնցմէ ոչ մէկը, իրական-
նութեան մէջ, արժանի էր հանճարին:

Ժամն Տիւլալ, Թուխ ցրեօլ մըն էր,
ծնած Սէն Տոմէնիկ կղզին: Եթէ Պտուէր
ճամբորդած չըլլար եւ տեսած չըլլար
Մօրիս կղզիին խափշիկուհիները, Թերեւս
երբեք չուզէր ճանչնալ ժաննը: Որովհե-
տեւ այս աղջիկը, եթէ ունէր մարմնա-
կան յատկութիւնները, չունէր բանաս-
տեղծի մը կենսական ընկերուհին ըլլալու
անձի մը առաւելութիւնները: Ժանն ան-
զգամ, անզուժ ու պննասէր էր: Գերին
դարձած էր ողելից ըմպելիներու, ա՛յն-
քան՝ որ իր պատճառաւ Պտուէր ալ սկը-
սաւ չափազանց խմել: Ժանն կամաց-կա-
մաց դարձաւ մարդկային թուրջ մը, ան-
զամալոյծ եղաւ ու զրուեցաւ Հիւանդա-
նոց: Եղաւ անհաստատիւմ եւ միշտ դրամ
քաշեց խնդն Եսարէն, որ իր եղբայրը կե-
րակերելու համար անզամ դրամ չունէր:
Մինչեւ վերջը եղաւ վամփիր մը, բանաս-
տեղծին վիզին կպսծ, անոր արեան ծա-
րաւի:

Պտուէր ասպետօրէն վարուեցաւ այս
անարժան կնիւջ Հետ: Իր օրագրին մէջ կը

կարդանք. Մայքս ու Ժամնը, Ժամնի եի-
ւանգութիւնը: Մայքս եւ ժաննը իր հո-
ղածութեան երկու հուսաար առարկա-
ները դարձած էին, Եւ այս անշահախն-
դիւր զոհողութիւնը նոր լոյս կը սփռէ
բանաստեղծին հոգիին մեծութեան վրայ:

Ինչո՞ւ ուրեմն Պտուէր սիրեց ժան-
նը:

Պանվիլ զոյն կը նկարագրէ իր ա-
ռաւս ու սեւ մազերով. իբր վայրի քա-
ղաւի մը, աստուածային եւ անասնա-
յին: Ուրիշներ չեն թաժներ Պանվիլի Հիւ-
ցողական արտայայտութիւնները: Զոյն
կը նկատեն դիշառիչ սեւ թուռն մը, որ
թառած է բանաստեղծին ամայի տան ու
օրտին մէջ: Նստած քուխնիկին մէկ ամ-
կիւնը, ցած քիկնաքառի մը վրայ, նոյն
կը մնար ժամեր՝ լուռ ու անշարժ: Մինչ
բանաստեղծը իր բարեկամներով շրջա-
պատուած՝ կը փնտրանէր արուեստի եւ
դադարի մասին:

Եւ սակայն այս անտալ ոտքաբանին
կը պարտինք Պտուէրի դեղեցկագոյն տա-
ղերէն շատերը:

Կը պաշտօնէ քեզ գիշերային

Պտուէր, Թամարուս եղե,
Ո՛վ տխրութեամբ քաղար, ո՛վ մեծ
լուսնեաց... ամմաբուր կին:

Երբ քովը կը պտուկի, ինքզինքը կը
կարծէ գերեզմանի մը մէջ: Անոր սէրը
կը կրծէ զինք, ինչպէս այն որդերը, ա-
րոնք կը ծնին դիակէն: Ժանն մտած է
զաշոյնի մը պէս Պտուէրի անպաշտպան
օրտին մէջ. ան աւելի զօրաւոր է, քան
դեւերու լեպէտն մը: Եւ սակայն կը մտայ
անոր կապուած անտեսանելի շղթանե-
րով, որոնք կը կոշուին սովորութիւն եւ
յիշատակ: Ժանն իրեն կը յիշեցնէ ան-
հուն ովկիանոսը իր կապոյտ կափարի-
չով, Ափրիկէն, Հնդկաստանը, Հեռաւոր
կղզիները, որոնց փերուռն վրայ կը պա-
րեն արմաւենիները: Ժաննին մարմնին
եւ մազերուն զգիլիչ բոյրը կ'արթնցնեն
իւր մէջ տեսիլներ, նաւեր, օրոնք կ'օ-
րորուն, արեւադարձային բուսականու-
թիւնը եւ արեւախանձ ու ոսկեգոյն ծա-

վաճակները, ուր կը պարեն խափշիկ աղ-
ջիկներ:

Կապոյտ մագեր, խաւարով պատուած
վրաններ,
Դուք, ինծի կը բերէք անհուն
կապոյտը երկինքին.
Եւ ես կ'արթննամ հնդկընկոյզի, կուպրի
եւ մուշկի խառն բոյրերով:

Ժանն Տիւլալ, բանաստեղծը տարաւ
իր քալած մութ արահետներէն, զայն ի-
ջեցուց մինչեւ դժոխքին քարայրները,
մինչեւ այն սալալատակը, որուն տակը
կը պտուկէ հրէշային ոչնչութիւնը: Եւ
բանաստեղծը փոռած ալրոյժ քարերուն
վրայ՝ աչքերը դարձուց դէպի վեր: Կը
յուշար հոն տեսնել փրկարար լոյսի մը
ոկարագոյն նշոյլը: Եւ տակաւ հասկցաւ
որ մէկը անպայման պէտք էր, որ բռն-
նէր իր ձեռքէն, որքի կանգնեցնէր եւ
զինք առաջնորդէր դէպի լոյս: Եւ պատ-
րաստ էր իր առաջին հանդիպած կնոջ
քղանցքին կառնելու եւ զայն ընդունելու
իր փրկիչը եւ զայն անուանելու հրէշ-
տակ եւ Մատոնա:

Օր մը, իրեն բարեկամ նկարիչի մը
այցելութեան կ'երթայ, Վերսայլ, Հոն կը
հանդիպի լուսաւոր թեւերով հրեշտակին,
զոր կը փնտրէր անձկագին: Անունը Մարի
էր, Ս. Կոյսին պէս, եւ արուեստագէտ-
ներու մոտէլ էր իր պարապոյ ժամե-
րուն: Պոսէլը անմիջապէս սիրող բացաւ
այդ համակրելի աղջկան, եւ խոստովա-
նեցաւ, որ զինք կը սիրէր: Մակայն Մա-
րի ըսաւ, որ ինք ազատ չէ եւ ունի սի-
րահար մը, որուն հետ կ'ապրի տարինե-
րէ ի վեր: Այս սիրավէպը այսպէս վեր-
ջացաւ, եւ յիշատակուելու ալ արժանի
չէր ըլլար, եթէ ծնունդ տուած չըլլար
զեղեցիկ նամակի մը՝ ուղղուած Մա-
րիին, որմէ կը քաղենք հետեւեւալ նա-
խադասութիւնները.

«Վերապարձէ՛ք, ծուկի եկած կ'ա-
ղաչեմ... Մի՛ վախճաք, դուք ինծի հա-
մար պաշտամունքի առարկայ մըն էք, եւ
անկարելի է ինծի ա՛րեւէ արատ թերել
ներ վրայ: ... Զեր անձը համակ կ'անձ

է, շարժում, քաղցրութիւն: Ինչպէս կա-
րելի է արտայայտել այն սէրը, որով կը
սիրեմ ձեր աչքերը... Զեպ կը սիրեմ,
Մարի՛, այս է միակ իրականութիւնը,
քայց այն սէրը, որ կը զգամ ձեզի ետե-
պէս՝ նման է քրիստոնեային սիրոյն իր
Աստուծոյն հանդէպ: ... Մեռած էի եւ
դուք կ'անձ տուիք ինծի: Այսուհետեւ
դուք պիտի ըլլաք միակ թագուհիս,
սէրս, զեղեցիկութիւնս... Նոյն պահա-
պան հրեշտակս, մուսա, Մատոնա»:

Կորսնցուց Մարին եւ գտաւ Ակլայէն:
Գեղեցիկ էր Տիկին Սապաթիէ, դա-
սուկան ու հանգարտ զեղեցիկութիւնով
մը, խելացի էր ու բարի: Իր շուրջը կը
սփռէր ուրախութիւն եւ կեանք: Ծառեր
զինք կը գտնէին հասարակ, ներկայ եւ
զամ ըլլալով պահերու, երբ պատուան-
դանէն իջած, Ակլայէ կը պոռար ու կ'ար-
տայայտուէր զռեհիկ ձեռով:

Բացած էր սալոն մը, հրեայ բարե-
բաւի մը առատաձեռն աջակցութեամբ,
ուր կ'ընդունէր օրուան ամէնէն նշանա-
ւոր դէմքերը. Ֆէսօ, Կօթիէ, Միւսէ,
Ֆլօպէր եւ շատ մը ուրիշ գործեր եւ
արուեստագէտներ. Իր զեղեցիկ մարմի-
նը անմահացուցած էին մէկէ աւելի նը-
կարիչներ եւ արձանագործներ: Տիկին
Սապաթիէ արտաքինով ու ներքինով
Ժաննին հակապատկերն էր, հանգարտ,
ճերմակ ու զարդացած: Մութացկանի մը
պէս բանաստեղծը դարձաւ դէպի իր նոր
կուռքը: Հինգ տարի անանուն նամակ-
ներ զրկեց, խպնելով ու կարճելով նոր
արրունքի հասած պատանիի մը պէս:
Յաճախ նամակները զեղեցիկ ոտանա-
ւորներ էին: Նոյն ատեն կը յաճախէր
սալոնը, կը խօսէր սիրելիին հետ, կ'ըն-
կերանար անոր պտոյտներու ընթացքին,
կարծեա ուրիշ մէկը ըլլար այդ սիրատու-
չոր նամակները գրողը:

Տիկին Սապաթիէ հանդէպ Պոսէլի
զգացած սէրը ունէր միութիւն եւ կրօնա-
կան հանգամանք մը.

«Այնքան կը վախճամ ձեզմէ, որ միշտ
ձեզմէ պահած եմ ինքնութիւնս... Պէտք
է գիտնաք որ աշխարհի ամէնէն սիրուած
էակն էք, եւ նաեւ ամէնէն յարգուա-

ծը... Երբ խոշոր յիմարութիւն մը կը գործեն, ինքնինքն կ'ըսեն. Աստուած լմ, եթէ գիտնար, ինչ պիտի մտածէր իմ մասին»:

Տիկին Ստպարիէ խելացի էր եւ անմիջապէս հասկցաւ, թէ ո՛վ էր իր անծանօթ ու հանճարեղ սիրահարը: Երկշուտ եւ անպէթ ու շէր: Զկրցաւ զիմանալ աշխատանքի վերջէն արտայայտուած զգացումներուն եւ կոչերուն եւ վարձատրելու համար իր հաւատարմ երգիչը, ինքզինքը յանձնեց անոր:

Իշաւ իր աստուածունիի պատուանդանէն, եղաւ մերկութիւն մը, գեղեցիկ բայձ, հասարակ. մէկ խօսքով՝ դարձաւ հոգի ըստ նոր շարժման: Երբ արեւին հետ կը դալարուէր մահիճին կակուղ մակերեսին վրայ:

Եւ Պոտլէր, երբ աստուան դէմ կը վերադառնար իր բնակարանը, զգաց յուսահատութեան ամենի մակընթացութիւնը, որ կը տապալէր իր այնքան սիրով ու գուրգուրանքով կառուցած տաճարը: Փշուեցաւ մարմարէ արձանը, եւ սէրը դարձաւ թռչունի մը պէտք ընկզմեցաւ յոռետեսութեան անդունդին մէջ:

«Երեկ աստուածուհի մըմ էիր, հիմա դարձար իստարակ կիմ, կրճատ կիմ մը, եւ ես կ'ատիմ կիրքը»:

Այս դիպումը ծախողութիւն մըն էր զգացական գետնի վրայ, սակայն ահաւատալի տղամուսնու անկէ: Ստպարիէ բանաստեղծին մէջ արթնաց կապոյտ զրախտին երազը եւ ներշնչեց անգերազանցելի տոգոր:

Այսպէս գծերի մութ անձաներէն, ուր զինք աստիճանից գիշերներու աղջիկը՝ Ժանն Տիւվալ, Պոտլէր կրցաւ բարձրանալ դէպի կապոյտ երկնակամարը, դէպի անմահ լոյսը, ուր կը ապաստէր գեղեցիկ ու լուսաճաճանչ պսակը, աշքերը յառած Ակլայէի մարմարէ ճերմակ գեղեցկութեան վրայ:

ՊՈՏԼԵՐ՝

ԱՍՏՈՒԹՈՅ ԵՒ ՍԱՏԱՆԱՅԻ ՄԻՋԵՒ

Մարդիկ կան, մեծ մտաւորականներ, որոնք կը գործնան կեանքի բարեքննում, որոնց համար երջանկութիւնը ըզգացիչ բան մըն է, որովհետեւ կեանքը իրենց շուայած է ամէն գոհացում, նիւթական թէ մտային. ինչնք Վոլթէրն ու Կէօթէն: Ուրիշներ, ինչպէս Լամարթիէն եւ Հիւկո, գոհացած են հաւատալ հեռուոր Աստուծոյ մը, որուն քաւմերն են իրենք, Աստուած մը, որ աւելի զազաւար մըն է, քան թէ գոյութիւն մը, ու մը, որ դէպի իրեն կը տանի մարդկութիւնը ամբողջ:

Շատեր, սակայն, չեն կրցած հաշտուիլ կեանքի տղեղութիւններուն հետ, եւ իրենց յուսահատութիւններուն եւ տառապանքներուն իմաստ մը տալ ժողով են եւ դարձած դէպի Աստուած: Հպարտները, ինչպէս Վիւյի, Լըքոնթ ալ Լիւ, ինչպէս իրենց անհատականութեան վրայ՝ ամբաստանած են Արարիչը իբր անտարբեր իր արարչութեան եւ լուսնամար պատասխանած են այդ անտարբերութեան: Ուրիշներ զգացած են պէտքը դրական կրօնի մը, որ իրենց բացատրէ կեանքի առեղծուածը: Արհամարհուած, անտեսուած յաճախ իրենց իսկ սիրելիներէն, տառապելով իրենց մարմնին եւ հոգիին մէջ, անոնք ջանացած են իմաստ մը գտնել իրենց տառապանքներուն:

Փասքալ մը, Ռուսին մը, Պոտլէր մը յանգած են նոյն եզրակացութեան՝ միայն քրիստոնէական կրօնէն է, որ գոհացում կրնար տալ իրենց անձկագին հոգիներուն. քրիստոնէական կրօնքը, որ փրկութեան շիմը կը նկատէ գոհալուութիւնը, տառապանքը:

Իբրեւ մարդ եւ բանաստեղծ կարելի է Պոտլէրը դասել քրիստոնէաներու փաղանգին մէջ:

Պոտլէրի հայրը զարգացած ու մեծացած է Ժ՛. դարու վերջերուն, անած է Վոլթէրի շունչով ու զազաւարներով, մէկ խօսքով՝ կրնանք զայն դասել անաստուածներու շարքին մէջ: Սակայն

մայրը եղած է բարեպաշտ ու ջերմեռանդ քրիստոնեայ եւ իր զաւակին մէջ ջանա-
ցած է դնել հաւատքին հուրը: Եւ սա-
կայն ուրիշ է բարեպաշտ մայր մը ունե-
նալ եւ ուրիշ՝ քրիստոնեայ կեանք մը
վարել 46 տարի:

Պոտլէր մկրտուեցաւ եւ մեռաւ՝ ստա-
նալով եկեղեցական վերջին խորհուրդ-
ները. այսինքն՝ ծնաւ ու մեռաւ քրիս-
տոնեայի մը պէս:

Բայց մեզի համար աւելի կարեւոր է
դիտել, թէ ի՞նչ տեղ բռնեց քրիստոնէու-
թիւնը իր կեանքին եւ զործին մէջ: Մէկ
խօսքով, կրնա՞յ բարեպաշտ քրիստոնեայ
մը Պոտլէրի կեանքը առնել իբր բազմա-
նալ եւ հետեւիլ անոր օրինակներուն: Կրնանք
առանց վտրանումի պատահանել՝ ո՞չ.
Պոտլէր չապրեցաւ օրինակելի կեանք մը:
Սակայն, եթէ խորանեք իր արտայայ-
տած զաղափարներուն մէջ, իր զբաղ-
տանաւորներուն մէջ, կրնանք հաստա-
տել որ Զարին ծաղիկները գրուած են
քրիստոնէական շունչով: Մօրը ծանօթ
բաժանանքին մէկը ուզած էր իր զբոս-
հատը մը կրակը նետել իբր սասանա-
յական գործը. Պոտլէր այս իմաստով,
մօրը կը զբէ հետեւեալ տողերը՝ «Ինչ-
պէ՞ս այդ քանակն չէ հասկցած որ այս
գիրքը ծնունդ առած է քրիստոնէական
զաղափարէ մը»:

Պոտլէր կը հաւատայ մեղքին եւ ա-
նոր շար հետեւանքներուն: Պաշտօնակը-
թութիւնը, յառաջանալու համար, պէտք
է չնէ՛ մեղքին հետքերը: «Յառաջդիմու-
թիւնը, կը գրէ, - ո՛չ կազմ է, ոչ շագին,
ոչ ալ գիտութիւնը, այլ մեղքին ազդե-
ցութեան նուազումն է»:

Պոտլէր կ'ընդունի որ մարդը, իր
խորքին մէջ, շար էակ մըն է, եւ միշտ
պատրաստ է գէշ գործեր կատարելու եւ
հեռանալու բարիէն: Պէտք ունի զօրաւոր
հակազդի ուժ, ըլլայ ան կրօնքը, կա-
ռավարութիւնը, պատերազմը: «Մարդոց
մէջ մեծ են միայն բանաստեղծը, քա-
նաման եւ զինուորը. այն որ կ'երգէ, այն
որ կ'օրհնէ, այն որ կը գոհէ ու կը գոհ-
ւի: Մնացեալը միայն մտաւոր արժանի
է»:

Սակայն այս յայտարարութիւնները
չեն բաւեր եւ չեն կրնար փաստել որ Պոտ-
լէր իսկական հաւատացեալ մըն է:

Օրագրին մէջ կը կարդանք. «Ման-
կութեան իսկ մզումն անէի միսթիկու-
թեան... Կը խօսէի Աստուծոյ հետ»:
Այդ միսթիկ եղին կը սաւառնի իր իւրաքան-
չիւր գրութեան վրայ. իր լաւագոյն տո-
ղերուն աւելն է ու անունը:

Պոտլէր կրօնքին չէ մօտեցած իբր
ընկերաբան, իբր քաղաքագէտ, ոչ իսկ
իբր արուեստագէտ, այլ իբր մարդ էակ,
իբրեւ խոցուած ու տառապող մարդ
էակ: Պոտլէր դժբախտ եղած է մարդոց,
եւ իր իսկ թերութիւններուն պատճա-
ռաւ: Անդալաբար սահած է զառիվարէն
դէպի անդունդ, եւ հո՛ն է որ զգա-
ցած է իր անկեալ վիճակը, իր անարժա-
նութիւնը եւ երազած է մաքուր կեանք
մը. մանկական սերնդու կանանց դրախ-
տը:

Մէկ կողմէն մեղքին անդունդը, մը-
կրտներով, ճերմակ ու սև սեւ լինե-
րով, հեշտանքով լեցուն, միւս կողմէ՝
մղում մը բարձրանալու դէպի լույսը,
դէպի բարին: Եւ այս երկու զօրաւոր ու
բզկտող ուժերու միջեւ, ինք աւար հիւ-
լէ մը, խաղալիք մը: Ո՞վ մեռք պիտի
երկարէ իրեն, որուն պիտի դիմէ ազատ-
ւելու համար այս մղմանը: Եթէ ոչ
Աստուծոյ: Այս եղած է նաեւ կացութիւ-
նը մեծ փոխադրայ, դիտուն ու բանաս-
տեղծ Փառքալի: Մեծ խորհող տուած է
անգերազանցելի պատկերը մարդ էակին՝
կախուած երկու անհունութիւններու մի-
ջեւ. մեծութեան անդունդը եւ պզտիկու-
թեան անդունդը, եւ ինքն ալ ուրիշ ան-
հունութիւն մը իր պզտիկութիւններով եւ
մեծութիւններով: Մարդը եղէ՞ք մըն է,
տկար բայց մասնող, Հոն է իր մեծու-
թեան եւ տկարութեան ազբիւրը:

«Ամօք չէ մարդու մը, - կը գրէ
Փառքալ, - ընկրկիլ տառապանքի հար-
ւածներուն տակ, բայց ամօք է ընկրկիլ
հաւանքի շոյանմանքուն տակ»:

Պոտլէր ճաշակեց հաճոյքը իր զա-
նազան երեսներով. սէրը, հեշտանքը,
զինին, աֆիոնը եւ ընկրկեցաւ. ինկաւ:

այնքան ցած որ չէր կրնար դիտել իր սիրտը եւ մարմինը առանց զգուսնքի, և զտնտեսցաւ երկրնարանքի մը առջեւ. կամ մեռնիլ հոգեպէս, մարմնական մահէն առաջ, կամ ընել գերազոյն ջանք մը ոտքի կանգնելու համար: Բայց այս գերազոյն ջանքը ընելու համար՝ մարդ պէտք ունի յենարանի մը, ներքին ուժականութեան մը:

Այդ յենարանը Պոտէր չղտաւ իր կամքին մէջ: Կարծեց զտնել սիրոյ մէջ. սէրը՝ որ երբեմն մարդուս հրաշքներ զործել կրաւ տայ: Բայց սէրը առանձին չ'իրականանար, սիրոյ առարկան կ'ընէ է. որ քնակամ էակ մըն է, այսինքն թերի, կ'ընէ՝ որ աստամային ստեղծած մէկ առնիքնաղ գործիքն է: Եւս, Տալիւս, Յուզէթ...

Ուրեմն այդ յենարանը պէտք է փրկողուն ալլուր: Կան գերազոյն ուժեր, որ կը ներգործեն մարդուս հոգիին մէջ. մէկ կողմէն բնութիւնը, որ մարդը կը տանի դէպի մեղք, միւս կողմէն հոգին, որ կը փնտռէ բարին: «Մարդ էակիմ մէջ կայ յարատեւ երկրնտրամբ մը, որ զինք կը մղէ երբեմն դէպի սատամամ եւ երբեմն դէպի Աստուած»:

Ուրեմն պէտք է որոշում մը առնել, թէ ո՞ր կողմն է լուսազոյն ճամբան. պէտք է դբաւի գալ եւ ընտրել Աստուծոյ տանող ճամբան: Այսպէս ըրած էր Փառքալ, երկու հարիւր տարի առաջ:

«Եղմիսկ եթէ Աստուած գոյութիւն չունենար, — կը գրէ Պոտէր, — կրօնքը պիտի մնար միշտ աւրբ աւ աստուածային»: Եւ կ'աւելցնէ. «Առանց նպատակի բան գոյութիւն չի կրնար առնել: Ուրեմն իմ գոյութիւնս նպատակ մը ունի: Ի՞նչ մը պատակ: Ձեռ գիտեր: Ուրեմն կայ ինձմէ իմաստուն էակ մը, որ գիտէ ամէն բան: Պէտք է ազօրեմք, որպէսզի այդ էակը լուսաւարէ մեզ»:

Ուրեմն ազօրեմքով է որ կը զօրանայ մեր հաւատքը: Ուրեմն ազօրեմքն է այն միակ լատար, որ մեզ փրկութեան կը տանի: — «Հա՛ւոյքը մեզ կը կապէ ներկային. իսկ մեր փրկութեան հոգը մեզ կը կապէ ապագային: Գիտցիք դժմոյակ կեանքիմ

փորձութիւնները եւ ազօրե՛, ազօրե՛ անընդհատ: Ազօրքը ուժի շտեմարան մըն է»:

Եւ խոնարհօրէն ծռնկի վալով, Անիծեալ Բանաստեղծը մտնուկի մը պէս կ'աղօթէ: — «Աստուած իմ, զիս մի պատժեր, եւ մի պատժեր մայրս, իմ յանցանքներուս համար: Քեզի կը յանձնարարեմ Մարիէթի եւ հօրս հոգիները: Ինձի բաւական ուժ տուր, որպէսզի կարենամ կատարել առօրեայ պարտականութիւններս եւ դառնամ հերոս մը եւ աւրբ մը»:

Եւ կ'ընէ հետեւեալ առաջադրութիւնները.

«Ամէն առաւօտ ազօրք ընել Աստուծոյ, որ շտեմարանն է ուժի եւ արդարութեան. ազօրք եւ խնդրել միջնադարիւնը հօրս, Փոյի եւ Մարիէթի, որպէսզի ինձի տրուի բաւական ուժ կատարելու պարտաւարութիւններս եւ մօրս Աստուած պարգեւէ երկար կեանք, որպէսզի ան վայելէ իմ բարեփոխութիւններս եւ հրճուի»:

Այս տողերով կը վերջանայ մտերիմ օրագիրը:

Պոտէր ունէր ամէն տեսակ թերութիւն. հասարկութիւն, կրթութեան պակաս, տկար կամք եւ գերզգայնութիւն: Բայց անկեղծ էր եւ յստակատես: Ուրեմն որքան մեծ եղած է իր հոգեկան տառապանքը, որպէսզի աններող աչքով դիտէր ու զատապարտէր իր անկումները և ծռնկերը ծաշէր, հայցելով Աստուծոյ դուրքը եւ օգնութիւնը:

Պոտէր երբեք սուրբ մը չեղաւ, եւ ամբողջովին դարձի ալ չեկաւ: Ան եղաւ մեղաւոր մը, որ կ'իյնայ, կը մաքառի, կը կանգնի — կը կին կ'իյնայ, կը մաքառի, կը տառապի, աւ կ'աղօթէ: Որովհետեւ դրուած է. ինկական մեղքը իյնալը չէ, այլ ինկած տեղը մնալը: Արդէն եթէ մարդ կատարեալ ու առաքինի ըլլար, պէտք պիտի չունենար կրօնքի: Եւ կրկին մեր ականջներուն կը հնչէ Փառքալի ձայնը. — «Միտիքարուէ՛, պիտի չփնտռէիր Զիս, եթէ գտած չըլլայիր: Քու մտերիկ կը մտածէի իմ հոգեվարքիս մէջ, քեզի

համար, խաչին վրայ, քափեցի արեանս
կաթիլներէն որոշ մաս մը: Բժիշկները
քեզ պիտի չկարենան բուժել... քայց ես
կը բուժեմ ու կ'անմահացնեմ մարմինը»:

Աղօթքէ մը հտք, Պոստէր կը դրէ:—
«Այն մարդը, որ իրիկունը բնափայլեա-
նաց իր ազօթքը կ'ընէ, կը մնանի իմաս-
տուն գորավարի մը, որ պահակներ կը
տեղաւորէ: Կրնայ հանգիստ բնափայլ»:

Մարդը փնտռեց կհանգին իմաստը
և ահա բանաստեղծն է, որ կու տայ պտ-
տասխանը:

Օրհնեալ ըլլաս Աստուած, որ տաւիր
տառապանքը
Իբր միակ գեղը մեր
անմահութիւններուն,

եւ իբր լաւագոյն եւ քաղաք
բազադութիւնը
Որ գորաւքները կը պատրաստէ սուրբ
հեշտութիւններուն:
Գիտեմ որ տառապանքը միակ գրանի է,
Որուն ակոյ չեն կրնար անցընել
երկիրն ու դժոխքը...
Եւ իմ միաբիկ պսակս եիւսելու համար
պէտք է
Հարկադրել բոլոր ժամանակները եւ
բոլոր աշխարհները:

Պոստէր աղօթեց խոնարհօրէն, ան-
կեղծօրէն, հիմա կրնայ հանգիստ քնա-
նալ, հիմա կրնայ մեռնիլ:

Ն. Զ.

(Շար. 3)

ՅԱՒԻ ԱԼԷԽՄԻԱ

Մին փախ կու տայ իր թանգը քեզ,
Միւսը իր սուգն, ով Բընութիւն,
Ինչ որ Դամբան կ'ըսէ մէկուն
Միւսին կ'ըսէ Կեանք ու Հանդէս:

Դո՛ւն ետք Հերմէս զիս հոգացող,
Որ միշտ տաւիր ինձ վախը եիւն,
Կ'ընես նըման զիս Միգիասիմ՝
Ալքիմիադէտն այն սրտաշնող:

Քեզմով ծակին կ'ընեմ երկաթ,
Կ'ընեմ դըժոխք ամէն գրքախոս,
Ամպերն ահա պատանք կ'ըլլան

Պահող դիակ մը սիրելի
Եւ ավերում վրայ երկնքի
Կը կանգնեմ մեծ մէկ դամբարան:

ՇԱՐԼ ԲՈՏԷԼԷ

Թարգմ. Վ. ԹԵՂԻՆՅԱՆ

ALCHIMIE DE LA DOULEUR

L'un t'éclaire avec son ardeur,
L'autre en toi met son deuil, Nature
Ce qui dit à l'un : Sépulture !
Dit à l'autre : Vie et Splendeur !

Hermis inconnu qui m'assistes
Et qui toujours m'intimides,
Tu me rends l'égal de Midas,
Le plus triste des alchimistes;

Par toi je change l'or en fer
Et le paradis en enfer;
Dans le suaire des nuages

Je découvre un cadavre cher,
Et sur les célestes rivages
Je bâtis de grands sarcophages.

Charles Baudelaire

ՀՐԱՆՏ ՄԱՅԵՒՈՍԵԱՆ

ԱՅՍՊԷՍ ԿՈՉՈՒԱԾ

ԳԻՒՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Մի դարնան էլ հեռու նշխարաբան
եկեղ է Արարատեան դաշտի արագիլը,
պտտուել է հովտի վրայ, բայց բարդին
չի եղել, արագիլն իջել է բարձր բարուա-
ծութեան հոսքազծի սեանը. հիմա ա-
րագիլի բոյնն Արաքս կայարանում հոս-
քազծի սեան վրայ է: Նոյն պահին նոյն
երկնքի տակ արթննակը լողում է, էլը
ղռում: Զրդեղման փոշին վրան այտոթ-
ւայ մի բաժ խրում է հաղարամեայ կա-
ւի մէջ եւ երկրի տակ հանդիպում Մեն-
ւայի գինու թասին...

Եւ դիտմամբ այսքան շատ օրինակ-
ներ եմ բերում, որպէսզի դրանց երնչ-
մամբ ինձ ստիպեմ բաժանելու միջին
ազգային կերպարի ստեղծման վարդգէս
Պետրոսեանի մտահոգութիւնը, եւ կար-
ծես թէ մտահոգում եմ: Իսկապէս, ի՞նչ
պէտք է անել, որպէսզի իմ գծադրած
կերպարը բովանդակի այս ժողովրդի
հպարտութիւնն իր հնութեամբ, մեծ ե-
ղբունի կսկիծը, աշխարհին պայծառ նա-
խու սոցիալիստական նորօրեայ հայ-
կաքը, վերաբերմունքը աշխարհի բը-
նականութեան աճին, չեմխական ձկնկի-
թին, պոլիվինիլացետատ գործարանից
արտադրական սպիրտի գողութեանը,
հաղար-հաղար բաների: Մարդու կեր-
պարը ձեւաւորում են իրադարձութիւն-
ները: Մի ժամանակ մարդու կերպարը

ձեւաւորում էին այսքան ու այսքան
սահմանափակ ասարածութեան վրայ կա-
տարուող իրադարձութիւնները: Հիմա
ինֆորմացիաները կատարել արագութեան
են հասել, այդ արագութեամբ՝ աշխար-
հը մարդու շուրջ զարձակ է մի բռնա, եւ
մարդը հիմա ձեւաւորում է աշխարհի
իրադարձութիւնների ջատագու: Եւ կար-
ծես թէ իրաւացի է վարդգէս Պետրոսե-
անը, երբ գրում է. «Եւ իմշպէ՛ս իրաք
գումարեմ ֆիզիկոս Ալիխանեանին, լեռ-
նագործ Աշոտ Մելիքեանին, մեր գիւ-
ղացի Աթանէս պապին, նրաժիշտ Անն
Բարաբանեանին, օդաչու Էդիկ Բախչիմ-
եանին, գրող Պերմ Զէյթունցեանին, գը-
րող Հրանտ Մաքեռոսեանին: Եւ իմշ-
պէ՛ւ գումարեմ, իմշի՞՞ վրայ բաժանեմ,
որ քանդակում ստացուի այսօրուայ հա-
յի միջին ազգային կերպար»: Հարցը մը-
տացածի՞ն է, թէ՞ կայ իրօք այդպիսի
հարց: Բանն այն է, որ Ալիխանեանը,
Բախչիմեանը, Զէյթունցեանը, Աթանէս
պապը եւ միւսներն այնքան հակադիր ու
բազմաբնույթ չեն, ինչքան Պետրոսեանն է
կարծում, եւ կարելի չկայ նրանց գումա-
րելու իրար եւ բաժանելու՝ ստանալու
համար միջին ազգային կերպար: Ալի-
խանեանի մէջ կայ արդէն Աթանէս պապ,
Պերմ Զէյթունցեան, Անն Բարաբանեան,
Աթանէս պապի կերպարի բացայայտու-

մը բացայայտումն է նաեւ մնացած բոլոր անհատներին: Իսկ եթէ այդ այդպէս չէ (նոյն երկնքի տակ արքանեակը թուած գնում է, էլ չէ՝ զուտ) եւ պարտադէր է, որ նրանք զուտարուեն ու բաժանուեն, ապա նրանք արդէն զուտարուած ու բաժանուած են մի փորձակայանում, որ կոչուում է զրոյ, որի զրական արտագրանքն էլ հենց Վարդգէս Պետրոսեանի այնքան ցանկացած քանորդի պատասխանն է: Իրականութիւնն արդէն ունի ընդհանրացման օրէնքը: Այդ օրէնքն ունի առակելի եւս գրողական իրականութիւնը. «ՎԱՌԱՆԸ» երգի հեղինակը չի չափել այսքան ու այսքան պանդուխտների կարօտները եւ ստացել նրանց համար կարօտների «ՎԱՌԱՆԸ» քանորդը. «ՎԱՌԱՆԸ» երգի հեղինակը չափել է ի՞ր կարօտը, որ կարօտն է աշխարհի բոլոր պանդուխտներին:

Գրականութիւնը գրողական եսի արտածումն է, եւ եթէ զու մարդ ես, զրոյ ես, եթէ քանկերոգ դարի երկրորդ կէսի հայ զրոյ ես, եթէ իսկապէս զրոյ ես կամ ջո գրուածքները ցօղուած են ամենաշնչին իսկ անկեղծութեամբ, ապա չի կարող պատահել, որ ջո ծնած մարդիկ լինեն տասնութերորդ դարի շուէտներ: Իսկ եթէ զրոյ չես, ապա զուտարի ու բաժանի բոլոր Ֆիգիկոսներին, հովիւներին ու հանքափորներին, քանորդում ստացիք քանկերոգ դարի հայ իրականութեան երկրորդ կէսը ճշգրտօրէն արտացոլող մի Ֆիգիկոս-հովիւ, բայց զա չի լինի մարդ, այլ կը լինի զուտարում, բաժանում եւ քանորդի պատասխան:

Ահա եւ ոչ գրական հարցադրման ոչ գրական պատասխանը: Ինչո՞ւ է հնարւել հարցը, Հարցը հնարուել է ի հակադէմ հնարոյր գրականութեան, Կեանքն ահա, մանաւանդ վերջին յիսուն տարում, վիթխարի առաջընթաց է ապրել, անգրագէտ Հայաստանը դարձել է բանաստեղծ ու ինժեներ Հայաստան, յետամնաց դիւղացիական երկիրը դարձել է քաղաքների երկիր, նոր տղաները խորոված չեն ուտում, այլ խմում են կով-

տէյլ, նոր տղաները հեգիաթ չեն պատմում, այլ պարում են շէյկ, նոր հովիւներն ուսնեցիկ կախ այննակաճ չեն կըրում, այլ տրանզիստորային տիպի ադիոընդունիչ, եւ, ուրեմն, պիտի որ փոփոխութիւններ կրած լինեն նաեւ ազգային բնատրուածիւնները, իսկ ահա այսինչի գրուածքները բուրում են Պոռ-եանի ժամանակուայ դիւղահոտ, եւ քնննադատութիւնն էլ զովում է այդ հնարոյրը եւ չի զովում խորոված շուտող տղաների մասին նորաբոյրը: Փափախի ու խորովածի դէմ կռուելով, Վարդգէս Պետրոսեանը կուտ է յանուն նոր փափախների եւ խորովածների՝ արանդատորի եւ կովտէյլի: Հին էկզոտիկայի դէմ կռուելով՝ Վարդգէս Պետրոսեանը կուտ է յանուն նոր էկզոտիկայի: Հնորեայ փիլիսոփայական կեցութեան դէմ Վարդգէս Պետրոսեանն առաջադրում է շփիլիսոփայութեան կեցութեան: Ուր-հուրդներ տուող ծերունիների դէմ՝ խորհուրդներ շուտող երեսաքանդերների: Ոչ թէ ճշմարիտ վերսակի լափով մեկնիր, այլ էկզոտիկայից: Ոչ թէ գնէլ պայտիւն է խմում, մեկ մեկնիր, այլ էկզոտիկայ: Թաղամների ժամանակ ոչ թէ աւանդական տնտես, այլ ոչ աւանդական յանձրեւ: Ոչ թէ ջուրի, այլ թուխտ: Ոչ թէ գինի, այլ սուրճ:

Ի հեճուկա հնարոյր գրականութեան թերութիւնների, այսպէս ահա օտեղծւում է մի նոր թերի գրականութիւն եւ այդ գրականութեան տեսութիւնը, որոնք օնունդ են տանում իրենց իրր այնքան չափած «փափախութեան» հօրից, ոչ այնքան միամտօրէն կարծում, թէ իրենք միանգամայն նոր որակ են, ներկայացընում են գրականութեան կենտրոն մտնելու յայտ եւ աղերսում դովեոտ այն հիմունքներով, որ իրենք արտասահմանեան գրքերից ու ֆիլմերից ինկցուած գեասան չեն, այլ կանգնած են հայ իրականութեան պատուանդանին: Վկայակոչելով ուրբանիստական կենցաղի հայտատանեան արդումները, եւ Արշակեանը, եւ Պետրոսեանը մոռանում են մի շատ կարեւոր բան. ամէն մի կարգին

գրողի ստեղծագործութիւնն այդ գրողի աշխարհայեացքի ու փիլիսոփայութեան իրացումն է. գրողը գէպեր շարադրող չէ, այլ աշխարհը իւրովի բացատրող կամ բացատրել փորձող: Ռեալիստիկ կամ իմպրեսիոնիստ են հեղինակի Ֆրէժյոտիզմի խոր իմացութեան եւ Ֆրէժյոտիստական աշխարհատեսութեան միասնուհիւ փոխ: Թերթի թէ ոչ թերթ՝ դա մի ամբողջական աշխարհ է. գէպերն ու գիպուածները տրամաբանական նոյն հիւսուածքի տարբեր ճիւղերն են. գլխաւոր գէպերն ու կերպարները դալին են իմաստաւորելու գէպերը. ստացւում է, ղեկիցիկ թէ ոչ ղեկիցիկ, որոշակի տեսանկիւնից գիտուած մի ամբողջական կեանք: Եւ ինչը որ Ռեալիստի մօտ կեանքային ու համոզիչ է, մեզանում դառնում է անհեթեթ, անհամոզիչ, տնտրամարան, կեանքից կտրուած, որովհետեւ ընթացողն սկիզբն ու ընթացքը պահանջում են ճիշտորէնական աւարտ, գոթական հիմքն ու պատերը ենթադրում են ղեկական դմբ, պետրոսեանական կամ որչափեանական միտումն ու պատմը պահանջում են պատմի ու նիւթի ընտրութեան միջին պարտաւանական կամ արշակեանական տրամաբանութիւն. դա զեղարուեստական համոզականութեան առաջին անհրաժեշտ պայմանն է եւ խախտումը ենթադրում է ճշտութեւ, կեղծ է, կեղծի հետ կապ չունի: ոչ դիպուկ, բայց ընդհանուր առմամբ ճիշդ մեղադրանքը:

Պետրոսեանը գրում է. «Սա կարող է նայինս ամենադժուարին թուալ, բայց ժողովրդական կոյտիստի տմեմ մի բեկորի կորստեան համար ես չպէտք է ամիսն մի քաղաքականութիւնը: Վերջին հաշուով, ի հարկէ, կեանքն ու ժամանակը իրենցը կ'անեն. նայինս խաղողի այգիները կարող է քանդուել ռադիոֆիզիկայի ինստիտուտ կամ օդանավայան կառուցելու համար, եւ կը քրքուեն, կը մաշուեն ազգային շատ աւանդաբաններ: Եւ անսանձամբ այդ քարդ իրավիճակում ազգում եւ տեսնել, թէ զէպի ուր է նայում իմ ժամանակակից գրողը, վեր-

ջին հաշուով, ի՞նչ հեռանկար է նայում տրուում իմ ժողովրդի համար»:

«Իլլաւան»-ի եւ «Ողիսական»-ի անցուզարձը վերաբերում է այդ էպոսի ծննդից կէս հազարամեայ առաջուկայ ժամանակներին: Դաւիթն ու Մելիքը մեր էպոսում իրար գուրդ են նետում վառուդի ու հրացանի գիւտից ոչ շուտ, այն գէպերում, երբ էպոսի հիւսուածքի ողորդարը վերաբերում է վառուդի գիւտից կէս հազարամեակ առաջուկայ ժամանակներին: Հայի Մուրադը «Հալի Մուրադ» է դարձել Շամիլի ապստամբութիւնից յետոյ տարի յետոյ, «Պատերազմ» եւ խաղաղութիւնը շարադրուել է պատերազմից յետոյ տարի յետոյ, «Երազալ Դոն»-ը թաւմ երէկուայ մասին է, բայց այսօրն ու երէկը բաժանուած են այնպիսի մի անգամայն անընդունով, որ կազակութեանը յանձնել է պատմութեան հազար տարուայ խորքերին. օրինակները հազարապատկե՞մ առելու համար, որ զգացմունքներ է յարուցում շատ աւելի երէկուայ օրը, քանի որ յիշողութիւնների երէկուայ հովիտը ընկնելու է ցանկալի կամ առկալի գէպերով ու գէպերով, որոնք են մեր յիշողութիւնների ոսկի նստուածքը, հենց որն էլ կարող է դառնալ դրականութիւն: Յամենայնդէպս, եւ հիմա եւ սպասում իրական գործերի նախադեռնի, Յովհաննէս Թումանեանի, եղեռնի, յեղափոխութեան, կոլտնտեսային շինարարութեան, համաշխարհային երկրորդ պատերազմի նիւթերով, քանի որ գէպերը իրականութեան մէջ կատարուում են, պարզում, ապա նոր միայն պատմութեւ արտաբանութեւ, զայնուհետ, առեւտրութեամբ, հըպարտութեամբ՝ վերաբերմունքով: Պարզ չէ, որ վերաբերմունքն այդ գէպերին չի լինի այլեւս ժամանակակից եւ դիւզարի վերաբերմունք, այլ կը լինի յետադարձ հայեացքի փիլիսոփայական իմաստաւորութեան:

Ի՞նչ են անում Պետրոսեանն ու Արշակեանը. որովհետեւ մենք ունենք գիւզարութեան վիթխարի աւանդոյթ՝ դրա համար էլ ժամանակակից գրողները մե-

ծամանութիւնը դրում է գիւղի մասին. որովհետեւ մենք չունենք քաղաքագրութեան աւանդոյթ՝ քաղաքագրութեամբ զբաղուած են մի քանի հոգի. գիւղագրութեամբ զբաղուողները իմիտատներ են, քաղաքագրութեամբ զբաղուողները՝ որոնոց գափնկիրներ: Բայց դրանցից գիւղագրութիւնն է դժուար, թէ քաղաքագրութիւնը, հարցնում է Վարդգէս Պետրոսեանը: Քաղաքագրութիւնը, Ռորովհետեւ քաղաքագրները որոնողներ են, գիւղագրները՝ Պառլեանին ու Բաղնիքին ընդօրինակողներ:

Որն է դժուար. երկուսն էլ դժուար են. դրեն առհասարակ տանջանք է: Բայց հարցն ընկալինք իր նախնական մերկութեամբ. հայ գիւղագրութիւն կայ, հայ քաղաքագրութիւն չկայ: Երկայնի հայ գիւղագիրը, յանձին հայ գիւղագրութեան, ունի հայ դրական իրականութեան «չնարանը», իսկ ներկայիս հայ քաղաքագիրը, հայ քաղաքագրութեան չգոյութեան պատճառով, չունի յիշարան: Ում գործն է հեշտ: Սխեմայի վարընկեց սլաքը տոնում-չպրտում է մի անդունդ. գիւղագրութեան գործը հեշտ է, որովհետեւ «գիւղագրութիւնը զինուած է նախագի գիւղագրութեան փառքով»: Այնինչ՝ թուամանեանի կենսափորձը պատկանում է միայն եւ միայն թուամանեանին. եթէ ես իմ խեղան հօրեղբորը չկերտեմ իմ միջոցներով, այլ, որովհետեւ իմ հօրեղբայրը քեռի խեղանի կեանքային տարբերակն է, կերտեմ թումանեանի միջոցներով, ապա ես գրած կը լինեմ նո՞ր պատմութեամբ, թէ՞ արտագրած կը լինեմ թումանեանի «Քեռի խեղանը»: Արտագրած կը լինեմ. Եթէ ես վաղը սկսեմ մէջ գրել նախատուր Արովհետեւ, ինչո՞ւ են օգնելու ինձ Արովհետեւն ինքը իր մէջով, եղիչ Չարենցը («Ի՛նչպի Նառն Մասիս»), Ակսէլ Բակունցը («Եւաշատուր Արովհետեւ»)՝ իմ Արովհետեւն ինձից դուրս քաշելու. ընդհանուր բարեբար ազդեցութեամբ, մի ազդեցութիւն, որ կարող է թողնել նաեւ գիւղագրութիւնը քաղաքագրներին վրայ: Ինչո՞ւ. «Պատերազմ եւ խաղաղու-

թիւն» 1812 թուականի պատերազմն է պատերազմ Լեւ Տոլստոյը, աւելի ճշգրիտ՝ Լեւ Տոլստոյի 1812 թուականի պատերազմը: Եթէ նորից մէկնում էլը դրի 1812 թուականի պատերազմի թեմաներով, Տոլստոյը ոչնչով չի կարող օգնել նրան, ոչնչով չի կարող օգնել Հայաստան նոր նկարողներին Մարտիրոս Սարգսեանը: Բայց ո՞ւմ են պէտք այս հանրայն ճշմարտութիւնները: Պետրոսեանը եւ Արզակեանը բոլորովին անտեսել են դրողական եսը, գրողին դարձրել են վաւերագրող, արտագրող, ապարտիոր, երաժիշտ-կատարող, դերասան, աշխուհ, ռեստորանտ, բայց ոչ երբեք իրադարձութիւնների կազմակերպիչ, կոմպոզիտոր, ճարտարապետ, նկարիչ. այստեղից էլ կատարուել է յաջող ախալ քայլը. գիւղագիրները օժանդակողներ ունեն, քաղաքագրները չունեն: Ժշմարտն այն է, որ հայ առաջին գրիչ Մեսրոպ Մալտոյը անյայտութեան դէմ մենակ ու անգէն էր, նրանից 1800 տարի յետոյ նախատուր Արովհետեւ դարձեալ մենակ էր անյայտութեան դէմ եւ նրանցից յետոյ, հայ վիթխարի մշակողի առկայութեամբ, իւրաքանչիւր գրող զբաղեղանի մօտ սպիտակ թղթի աղբիւնստում է մէն-մենակ. դժուար է իւրաքանչիւր գրողի գործ: Բակունցը չի օգնում ոչ մի գրողին, իսկ եթէ օգնում է որեւէ գիւղագրին, կարող է օգնել նաեւ քաղաքագրներին, որովհետեւ ոչ գիւղն ու քաղաքն են առցիակական հակադիր բնուեաներ, ոչ գիւղացին ու քաղաքացին են մարդկայնօրէն հակադիր որակներ, ոչ էլ ժամանակներն են դատարկում հին բովանդակութիւնից ու լցում նոր բովանդակութեամբ այնքան արագ, որ յետնորդ սերունդը չհասկանար նախորդ սերնդին, եւ գրականութիւնն էլ դեռեւս մնում է իր հին մարդագրութիւն կոչման բարձունքներին: Իւրաքանչիւր գրող կանգնում է դատարկ հարթութեան մէջ ու դառնում այդ հարթութեան բարձունքը, եւ կարիք չկայ իրեն ձեռացնել անպատուանդան, այլեւ իրեն հռչակել զոհ ու պատուանդան ինչ-որ ապագայ

խական քաղաքագրութեան համար, ինչպէս այդ տեսում է Վարդգէս Պետրոսեանը:

Ապագայ գրականութեան մէջ Վարդգէս Պետրոսեանը ներդրածորէն տեղ է տուել նաեւ գիւղագրութեանը. «Վախճան»-ը գրականութիւնը կը դոյատեւի որպէս «Վախճան» իրականութեան յանդէպ եւ կը շքանայ «Վախճան» իրականութեան վերացման հետ: «Բայց ցուային այն է, որ այն գրողները, որոնք անփականի են աւանդական գիւղագրութեան օկոյցները... ժամանակը կայացնելու է մանաւանդ իր վերջը, — աւելցնում է Գ. Արշակեանը: Սա գիւղատնտեսութիւն-գիւղագրութիւն սոցիոլոգի-զմ է, թէ ոչ: Ամերիկայի Միացեալ Նահանգներում գիւղատնտեսութեամբ պրոպագանդա է ազդարանելու շուրջ տոկոսը, գիւղագրութեամբ պարապում է դերոշների ընդհանուր թուի զուցէ դարձնել չո՞րս տոկոսը, զուցէ ընդհանուր գրական արտադրանքի միայն չո՞րս տոկոսն է գիւղագրութիւն. ես ճշգրիտ տուեալներ չունեմ, — որովհետեւ միւս չեւ մեր խնդրները ոչ ոքի մտքով չի անցել գրականութիւնը բաժանել երկու տարբեր թիւերի՝ երկու տարբեր հիմքերով եւ հաղորդել հիմքերի ու թիւերի համապատասխանութեան կամ անհամապատասխանութեան տուեալները, — բայց հազար պատճառով հազիւ թէ այդ այդպէս լինի:

Նոր պատերազմի դէպքում զօրակորչի տակ կը դրուի 500·000·000 մարդ. երկրաշնչի 500·000·000-անոց բանակը շարժման մէջ կը դնեն հաշուի մեքենաները. մարշալները կը լինեն հաշուի մեքենաների կամակատարները. իսկ այնտեղ, հեռու, նախքան մեր թուագրութիւններում, Բարեւոյն մե՛ծ աշխարհի երկտատար զօրավար-առաջնորդը էլահեմալ զնդեր դուսարեց, զնդեր շարժեց Ասորեստան մե՛ծ աշխարհ, մեծ ճակատամարտ առեց եւ գերեվարեց յիսուն զինուոր, աւանակներ մի երամակ, յիսուն կով եւ եօթը պարկ խաղողի գինի, եւ յաղթանակն արձանագրեց վիճա-

զիր արձանագրութեամբ: Բոլոր ռազմական քարտէսներում ճշգրտից ճշգրիտ նկարուած են իմ գիւղը, մեր տունը, իմ խնձորենին, Յամաք ձորը, ռազմական հաշուամատեաններում նշուած է ռազմական դործին իմ հօր կիսապիտանիութիւնը, իմ պիտանիութիւնը, տառներէն տարեկան իմ եղբոր պահեստային պիտանիութիւնը, մեր բահերի քանակը, մեր շան շղթայի երկարութիւնն ու հաստութիւնը՝ քաղաքակրթութիւնն ահա անորոշութեան մութից դրանք յայտնարեցել ու տուել է հաշուի մեքենաների բերանը, — եւ կրճատ ցատում է առաջնում՝ չղջիկի պէս խցկուել քաղաքակրթութեան շուրջը: չլուսաւորած մի ծակ ու դուռը փակել: Ես չեմ ցանկանում այս քաղաքակրթութեան մասը լինել, ազադակում է Ջարլզ Պապիրը:

Պուշկինով հանդերձ լինել այդ քաղաքակրթութեան մասը, Պապիրն առաջ է մղում այդ քաղաքակրթութիւնը: Կեանքը գնում է ի՞ր ճանապարհով, եւ մնում է գրականութեան քննադատական քննումը:

Գրականութեան բնապաշտութիւնը հանդէս է մտնում գիւղագրութեան առաջնորդով, որովհետեւ հնարաւոր չէ վերադարձնել ոչ մի ֆակտի բարեկեցի միֆական թաղաւորին, ոչ էլ աչք փակել ամբի գիւտի դէմ, այնինչ բնութիւնից ու գիւղից ինչ-որ մի մաս դեռ մնացել է. դեռ անձրեւ է դալիս, դեռ արեւ է ծփում, դեռ մեղուին խղճահարուողներ կան, որ ամբողջ երկար օրերին փեթաբի արկանոցը ունեն բացում, որպէսզի մեղուն շատ չքանի, դեռ հողագործներ կան, որ սածիլի համար հողի մէջ տեղ են տնում միայն մատներով. բնապաշտութիւնը խարսխում է ահա արանց:

Գիւղագրութիւնը մեզանում եւ ա՛մենուր երբեւէ եղել է գիւղական խաւարի եւ թշուառութեան նկարագրութիւն՝ սոցիալական հեղաքեկման ներքին կամ բացառապէս պահանջով: Առաջնապէս գրականութիւնների երկրներում այդ հարցը տարբեր կերպերով (իրացւած հեղաքեկումներ, հեղաքեկումների

ճիշդ կամ սխալ թերահանգումներն, սոցիալական հարցի անուշեղությունն ճիշդ թե՛ սխալ գիտակցություն, ուշադրության սեւեռում անելի կարեւոր կամ կարեւոր թուացող հարցերի, տարբեր կերպերով, բայց դուքս է պուսել օրականագործն ձեռք է բերել նոր բովանդակություն՝ բնապաշտության բովանդակությունը: Հին լաւ գործերը մեր նորագույնացումը գրկում են հեղինակային նախանշուած բովանդակությունից եւ ձեռք են բերում մեր ըզմած բովանդակությունը: Թումանյանի «Անուշ»-ը այնպէս «19-րդ դարի հայկական կենսի» համարադրութիւնն է, այլ 20-րդ դարի երկրորդ կեսի մեր բնապաշտութիւնը: Բնապաշտութիւնն, ի հարկէ, մարդկութեան ուղիղագիտական ճակատագրի ելքն է, բայց ելքի փնտռումը է: Իսկ եթէ սխալ ուղղութեամբ փնտռումը է, թող լինի սխալ. արուեստի սխալներից պատեւաբաններ չեն բռնկում, որովհետեւ արուեստը միշտ էլ խրուած է մարդաբանութեան հոգում: Իսկ եթէ այդ փնտռումը չի վերջանայ որեւէ մեծ ելքով, թող չվերջանայ, փնտռումը արդէն արուեստ է: Գրեթէ նախնական Աստուած էր փնտռում, բայց դուքս: Աստու Նրա փնտռումը այսօր մեզ համար «Մատենանոց»-ի շնորհիւ է: Հիմա էլ այսպէս է. մեզանում ոչ ոք չըջորհն չի անիծել քաղաքակրթութիւնը, բայց եթէ անեն այդպէս՝ դա կը լինի անհեղ յօգուտ քաղաքակրթութեան, քաղաքակրթութիւնը կը հարստանայ այդ անհեղով:

Կարիք չկայ, կարիք չկայ քաղաքակրթութեան անունից սպանել գիշադրութեանը: Գիշադրութիւնը քաղաքակրթութեան ծնունդն է, գիշադրութիւնը քաղաքակրթութիւնն է (համարձակօրէն կարելի է պնդել, թէ գիշադրութիւնը քաղաքակրթութիւնն է), գիշադրութիւնը չի կարող անիծել ինքն իրեն:

Աստուած է, որ դրականութիւնը կարող է Քարեղարեան անձանցի կարող, սպաւալի կարող, ազատութեան,

բռնութեան... ամէն, ամէն ինչի կարող է դրականութիւնը: Եղածի եւ չեղածի, լինելիքի եւ անհնարելի կարող, լաւի կարող, թե՛ լաւ կայ՝ անելի լաւի կարող: Գրականութիւնը սպաւալի մէջ է կեանքի հետ (թէկուղ եւ լաւ կեանքի հետ) լաւի ի՛ր գիրքերից. այսպէս նա կը կորցնէր անվերջ յեղափոխական իր բնապաշտութիւնը, կը կորէր իր կապը կեանքի հետ եւ կը մեռնէր: Հիմա, երբ մարդկային բանականութիւնը սահմանափակ է կաշկանդումներից ու բացարձակ յաղթարշաւի է դնում, երբ թուում է, թէ աշխարհը հասել է դրականութեան երազած հետեւներին, — դրականութիւնը ներքողում է կեանքը: Ամենիւն: Գրականութիւնը փնտռում է մոռումնամոռ մարդուն: Ինչո՞ւ:

Սեփական գլուխ ունեցող հարիւր միլիոն խունվէյրներ սեփական գլխի վերեւ թափահարում են քաղաքացիների Մարտի ժողովածուն, որի մէջ գրում է. «Այս կամարը միացնում է գետի այս ափը գետի միւս ափին», իսկ Հեփեսոսի տաճարը կը հրկիզեն դեռ շատ շաւերը: Իսկ մարդկային հանճարեղ գանգը ցեղասպանութեան յղացումը ծնեց միայն վերջերս. իսկ լաշխատող եւ աւտող բոլորակապական ապարտաբու ուռնանում է ժամ առ ժամ, — եւ դրականութիւնը փնտռում է Աստուծո մարդուն: Փնտռում է մարդու անաղարատ վիճակը: Մարդը ծնւում է բնական, գրում է Մարտիրոս Սարգսանը, յետոյ քաղաքակրթութիւնը շնորհ առ շնորհ նստում է տալիս մարդու մէջ, մարդն աղաւաղում է:

Գրականութիւնը փնտռում է շաղաւաղուած մարդուն ու շաղաւաղուած փոխ-յարաբերութիւնները՝ մի կողմից շափազանցելով մինչեւ արստակցի մարդու եւ փոխ-յարաբերութիւնների աղաւաղումը, միւս կողմից մարդկանց փոխ-յարաբերութիւնները ցուցադրելով անաղարատ, մաքուր, բնական, մինչեւ անգամ նախնական վիճակում. առ համարելահանուր երեւոյթ է ամբողջ արուեստի մէջ. մի կողմից արտաքիններով, միւս կողմից պրիմիթիվով ու հաւեք-

կուրսներ դէպի նախնադարեան նկար-
չութիւն. մի կողմէն ժամանակակից
սիմֆոնիաներ, միւս կողմէն նեզրական
ժողովրդական երգի թացարձակ շքերթ,
մի կողմէն ուրբանիզմ, միւս կողմէն
դիւղագրութիւն եւ հեքիաթի աւ առա-
պելէ ձեւեր ու յաճախ էլ բովանդա-
կութեան ոգեկոչում: Փիքասոյի «Գիւ-
նիկան» չի ժխտում պրիմիտիվիստ փո-
րոճանիի «Զիմորսը». առաջինը նկար-
չութեան զգուշութիւն է ֆալսետական ի-
րականութիւնից, երկրորդը՝ նոյնքան
հակաֆալսետական երազի առաջադրու-
մը: Ի՞նչ է արեւ Ֆրանց Կաֆկան. մեղք
չկայ, մեղաւոր չկայ, մեղադրանք չկայ,
մեղադրող չկայ, կայ միայն դաժա-
ղաշտական, բայց մարդը մեղադրուած
եւ մահապատժուած է («Իտալական-
քիւն»): Սա 20-րդ դարի դիմանկարն է:
20-րդ դարը պիտի որ ունենայ մի ուրիշ
դիմանկար էլ. կայ հրէշաւոր յանցանք,
կայ հրէշաւոր յանցագործ եւ կայ մի
խոր աշտարբերութիւն յանցանքի եւ
յանցագործութեան նկատմամբ: Մեր
ժամանակների դրականութիւնը տուած
կը լինի նաեւ 20-րդ դարի հակադիմա-
նկարը այս սիւժէով. մեղք կայ, մեղա-
ւոր կայ, մեղադրանք կայ, եւ ռազմա-
դաշտային եւեհակը երեք բոլորում բացա-
յայտում է մեղքը, դանում է մեղաւո-
րին, ներկայացնում է մեղադրանքը եւ
երեք բոլոր յետոյ մեղադրեալը վերած-
ւում է մի բուռ մոխրի:

Վալիւտայի, բորսայի, անանկաց-
ման, պատճառով ինքնասպանութիւն-
ների հակադիմանկարը կը լինէր
պատմութիւնն այն բանի, թէ ինչ-
պէս իրենց ձեռքով հնձած ցորենը տա-
նում էին բեւը բերին փոխելու նրանց
ձեռքով հանած աղի հետ: Օսվենցիմի,

Տէր-Զօրի եւ ճարտարական բազմաթիւ
ալիւմինէ-ապակի գերեզմանատան հա-
կապառկերը կը լինէր «մի գիւղ, մի տա-
րի - մի հանգուցեալ» նկարագրութիւնը:
Յամենայնդէպս, դժգոհութեան նոյն
արմատից են աճել Կաֆկայի «Կեղեկա-
փոխութիւնը»՝ Կաֆկայի զգուշաբար մար-
դուն մանրացնող պայմաններից ու մա-
րացող մարդուց, եւ Հիմինկուէյի «Սե-
րունիմ եւ ծովը»՝ Հիմինկուէյի «հացու-
մը տառապանքի մէջ մեծացող-առտուա-
ծացող մարդով: Մարդ-բլուճի դէմ՝
մարդ-մոնումենտ: Դժգոհութեան նոյն
արմատից են աճել Կաֆկայի «Դաւա-
րութիւնը» եւ Համօ Սահեանի «Պա-
պը»:

Այստեղ նեղուած է, այստեղ ծանր
եւ շնչում, առում է դրականութեան մի
ժառը, իսկ միւս մասն առում է, թէ որ-
տեղ է որ մարդը ծանր չի շնչում (սպա-
նական հողի յայտնադրութիւնը Հի-
մինկուէյի ստեղծագործութեամբ):

Ասում են, երբ հօտի գլուխը շրջում
են՝ կաղ ոչխարներն առաջ են ընկնում.
մեր դրականութիւնը աշխարհի դրակա-
նութեանը համընթաց է քայլում ոչ այդ-
պէս. բանասիրութիւնն ահա-ահա պար-
զում է, որ հայրենները՝ սիրոյ եւ բը-
նութեան միջնադարեան այդ երգերը,
երգերն են անցել արհեստաւորների,
դուր Վարուժանի ու Թումանյանի ստեղ-
ծագործութիւնը թաթախուած էր դի-
տակցուած բնապաշտութեամբ ու մար-
դու եւ յարաբերութիւնների պարզու-
թեան խոր կարօտով. այդ կարօտը եր-
գեց Բակունցի եւ Համաստեղի արձակը:

Ձկալ գիւղագրութիւն կամ քաղաքա-
դրութիւն. կայ միայն մարդկային հա-
նայք բնութեանն ու աշխարհին:

Հ. Մ.



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵԳԻՐՔԸ, Կարօ Գեարգեան, ԺՂ. Տարի, 1968, Պէյրուք

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ, Կրատ. Աւօ-ի, 1968, Պէյրուք

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ, Առաջիկ Պատրիկ, 1968, Պէյրուք

ԱՐԾՈՒԻԿԸ, Առաջիկ Պատրիկ, 1968, Պէյրուք

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՐՆ

ԼԻԲԱՆԱՆ 22 Լ. ՈՍԿԻ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 8 ՏՈԼԱՐ

ՀԱՏԱՎԱՅԱԹ 5 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ.-

G. SASSOUNI

Rue Sélim Boustani,
Beyrouth-Liban

digitised by A.R.A.R.@